

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1890

ՆՈՅՆՄԲԵՐ

1890 № 11

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

Երես

1 ԱՐԱՍԻԱՆՆԱՆՅ ԱԻՆՏԻՔ . . .	1489	Ժողովուրդ որպէս քաղաքակրթ. ուժ:
2 ՆԱՄԱԼԻՈՆ, ԱԼ.	1501	Հարեաններ (կեանքի դժեր):
3 ՄԻԹՍԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ	1513	Սրտասուղ ուռի (բանաստ):
4 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	1515	Հեղինկ (վեպ. վերջ առաջին մասի):
5 ԲԱԼՈՒՔԱՆ, ՋԱՆԱԳ.	1535	Աչքդի նկնիմներից: (Բանաստ.):
6 ԲԱԼԱՆԹԱՐ, ԱՆՈՒՇԱԻԱՆ	1536	Պանդխտութիւնը մեղանում:
7 Ա., Ա.	1549	Անասունները կողկատում:
8 ՏՈՒՔՆ ՄԱՐԿ	1558	Ուղեամենների վրդախմուշքը:
9 ԲԱԼԱՆԹԱՐ, ԱԼԵԲՍԱՆԳՐ.	1567	Արեը և բուսական. կողկատում:
10 ԲԱՇԻՆՋԱՎԵԱՆ, ԳԷՈՐԳ	1576	Նկարչի նամակները:
11 ԱՂԱՅՆԱՆՅ, ՂԱՋԱՐՈՍ.	1586	Սուրբ լեզու:
12 Լ. Ս.	1592	Գրախօսութիւն:
13 ԼՈՒՍԻՆԻ.	1594	Ամուսն քրոնիկ:
14 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ	1601	Նամակներ Ռուսաստանից
15 ԹՂԹԱԿԻՅ	1610	Ֆրանսիայի պետական ծախքերը:
16 Շ	1614	Առևտրական դաշինքների խնդիրը:
17 ԽՄԲ.	1623	Խմբադրութեան կողմից:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԵՆՆԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ:

Типография М. Д. Ротшица, на Гол. просп. соб. д. № 41

1890



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11 1890

Ն Ո Յ Ե Ս Բ Ե Ր

1890 № 11

Ն Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Թ Ի Ց Լ Ի Ս
Տ Պ Ա Ր Ա Ն Մ. Դ. ԽՕՏԻՆԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Октября 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

III SURT "ՄՈՒՐՃ" III SURT

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1891

ԹԻՎԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակուի 1891 թվականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակուի ամէն ամիս 8 - 11 թերթ մեծութեամբ:

«ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները ձրի կը ստանան տիպին Մ. Մարտիսիանի «Հեղինէ» վէպի 1890 թվականի «Մուրճ»-ում տպած բոլոր գլուխները, այն է՝ առաջին հատորը, բաղկացած աւելի քան 200 երեսից:

«ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թվականների բոլոր 24 համարները տասնուչորս թուրքով, մինչդեռ ոչ-բաժանորդները կարող են նոյնը ձեռք բերել 24 թուրքով:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրինն է տարեկան 10 թուրքի:

Թող է տրւում վճարել մաս-մաս, ստորագրելիս առնւազն 5 թուրքի և առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են տարեկան 8 թուրքի, ստորագրելիս առնւազը 3 թուրքի վճարելու պայմանով:

Թմբագրութեան գիմում են՝

Тифлисъ. Редакция журнала «Мурчъ» և կամ՝

Tiflis (Russie, Caucase) Rédaction de la Revue Mourtsch.

Թիֆլիսում գրւում են՝

1) «Մուրճ»-ի խմբագրատանը:

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրօսպեկտ,
տուն Միրիմանովի:

3) Խիզեկելի պաւլիօնում, Ալեքսանդրեան այգու և Բարխա-
տինսկի փողոցի վերին անկիւն:

4) Մակար Չմշկեանի գրավաճառանոցում, Վելիավինեան փողոց
և Վորոնցովի արձանի մօտ:

5) Սափարեանի ծխախոտի խանութում, պ. Յովհ. Ատեփա-
նեանցի մօտ:

6) Եւանգուլովի կոնտորում, Գոլով. Պրոսպ.

Այլ քաղաքների համար ուղարկւում են տուղաբաժ պատ-
րաստի ծրարներ՝ միջը դրած բաժանորդագրական թերթիկներով:

Ժողովուրդը որպէս բարեպաշտական ուժ

Ժողովրդական կեանքի զարգացումը ժամանակով չառաջացնում է մարդկի, որոնց մի մասը հոսանքով տանւում է դէպի զուտ դիտնականութիւնը, միւս մասը՝ դէպի ժողովրդին ծառայելու ասպարէզը:

Եւ ես խօսում եմ այստեղ միմիայն նոցա մասին, որոնք գործում են զաղափարների շրջանում, նոցա մասին, որոնք ուղղակի շփումն չ'ունին բնութեան, հողի, արհեստի և ժողովրդի հետ, այլ որոնք մտքեր են մշակում, ինկատի ունենալով բնութիւնը, հողը և ժողովուրդը, մի խօսքով մարդկի, որոնց կոչումն է մտքեր և գաղափարներ ստեղծել ու սերմանել և զորանով միայն օգտակար լինել մարդկային ազգին: Արդ, ասում եմ ես, այդպիսիները ընտրում են կամ այն ասպարէզը, ուր լոկ դիտութիւնն է իշխում, կամ այն ասպարէզը, ուր դիտութիւնը ինքն ըստ ինքեան մի առարկայ է, այլ միայն գործիք, միջոց՝ ժողովուրդի վերայ ազդելու՝ նոյն այդ ժողովրդին աւելի բարձր կուլտուրայի հասցնելու համար: Առաջինները մտքեր են մշակում, ուսումնասիրում են մարդկային և բնութեան երևոյթների յարաբերութիւնները՝ տրամաբանութեան և նկատուած փաստերի հիման վերայ, միւսների բոլոր հոգան է՝ ժողովրդի թէ՛ մտաւոր և թէ՛ ոգեկան ու հասարակական-սոսնոսական դրութիւնը բարւոքել, առհասարակ ժողովրդի աշխարհահայեցողութեան հորիզոնը ընդլայնել, նորան բարձրացնել, աւելի բարձր բարոյական մասսա դարձնել:

Առաջինները անմիջապէս չեն ծառայում ժողովրդին, այլ լոկ դիտութեան, երկրորդները անմիջապէս ծառայում են ժողովրդին: Պիտութիւնը հարստացնել մի նպատակ է մէկերի համար, ժողովուրդը հարստացնել մի նպատակ է միւսների համար: Հարստացնել, բաց հարստացնել ժողովուրդը իւր թէ՛ մտաւոր, թէ՛ ոգեկան և թէ՛ տրնտեսական ոյժի բովանդակութիւնով:

Մեր հայ ժողովուրդը ունի այսօր ներկայացուցիչներ մտաւոր գործունէութեան այդ երկու ճիւղի համար էլ, և նոր չէ, որ նա այդ ունի. այդ ճիւղաւորութիւնը սկսել է վաղուց, բայց նա ժամանակով աւելի զարգացաւ, մի կողմից երբ պարբերական մամուլը հաստատուեց մեզանում և միւս կողմից՝ երբ բարձրագոյն ուսման երբէք հայերի համար փակ դռները իրապէս բացուեցին հայկական ոգիների համար, երբ հայերը սկսեցին սերունդներ տալ, որոնք անցան գիտնական մտածողութեան շիւղան, որը եւրոպական կեանքի ամենամեծ շատկանիչն է. և իսկապէս եւրոպականալը՝ գիտնական մտածողութեան եղանակի իւրացնելուցն է սկսւում որպէս բոլոր միւս ազգերի, նոյնպէս և մեր ազգի համար: Եւ, որպէս առաջինը, պարբերական մամուլը, սկսւում է հաստատապէս մեր դարու միայն երկրորդ կիսում, նոյնպէս և հայկական ազգի մէջ գիտնականօրէն մտածելու եղանակը արժարձւում է միայն այս դարում, և այն՝ մտաւորապէս միայն դարուս կիսում, եւրոպական գիտութիւնների հետ սիստեմական կերպով ծանօթանալով, բայց այն շափով, որքան այդ կարող է չափողւել երիտասարդութեան մի քանի տարիները համալսարաններում անցկացնելով և գիտնականների հետ շփուելով: Եւ պարբերական մամուլը ինքը կրեց այդ գիտնական մտածողութեան հետեւանքները. ինքը անմիջապէս գիտութեանը չը ծառայելով, այլ միայն ժողովրդին, ընկաւ համալսարանականների ձեռքը, որոնք պէտք է աշխատէին, ժողովրդական խնդիրներում, եթէ ոչ գիտութիւն աւանդել, զոնէ չը մեղանչել գիտնական մտածողութեան տարերջների դէմ. իրանց քարոզների մէջ պէտք է նոքա աշխատէին ներդաշնակութիւն պահպանել առաջաւոր մտածողներից արտաբացաւած աշխարհայեցողութիւնների հետ: Մի խօսքով մամուլը պէտք է կրէր եւրոպական գիտութեան առաջնորդութիւնը, թէև ոչ որպէս սարուկ, այլ միայն որպէս նորա աշակերտ, որպէս նորա համակրող, որպէս նորա ջատագով:

Մենք այստեղ ոչ հայոց պարբերական մամուլի և ոչ հայ գիտնականութեան պատմութիւններն ենք ուզում անել, այլ միայն ուզում ենք ցոյց տալ, որ եւրոպական կեանքի և գիտութիւնների հետ ծանօթութիւնը բոլորովին բնականապէս հայերի համար բացեց երկու ճանապարհ, որոնք դէպ իրանց պէտք է զրաւէին մտա-

ւորապէս աշխատելու ցանկութիւն ունեցող հաց նոր սերունդներին. մէկը՝ զուտ զիտութեան ասպարէզն է, միւսը՝ ժողովրդական կեանքի ուսումնասիրելու ասպարէզն է, որի համար նոյն Եւրոպան արդէն պատրաստի ձեռքը մշակել—պարբերական մամուլը՝ ամսագրի, շաբաթաթերթի և լրագրի կերպարանքներով, բայց մշակւած մի ձեռք, որը պատուաստելու համար հայկական կեանքին՝ դեռ ևս հողը պակաս էր: Նոքա սկսեցին պատուաստման գործը, և դեռ մինչ այսօր էլ, պէտք է խոստովանել, մի մեծ մասով միայն այդ պատուաստման գործն է շարունակում հաց պարբերական մամուլը, քանի որ նա դեռ ևս ամբողջ ազդութեանը, ժողովրդական ամեն խաւերին դեռ ևս մատչելի չի դառած:

Բայց ասպարէզը այնու ամենայնիւ կայ. ձեռք տրւած է, հողը մի յայտնի շափով արդէն չարթւած է, և բոլոր խնդիրը այժմ այն հայեացքների մէջն է, որ իշխողաբար տիրապետում են ոգիներին, երբ մտածելու ընդունակ և նախապատրաստութիւն ունեցող անձեր, որոնք մտաւորապէս ապրելու վճռւած են, դնում են այս խնդրի առջև՝ որ ճանապարհը ընտրեմ, արդեօք զուտ զիտականը, թէ ժողովրդականը:

Այս խնդիրը, որ մենք դնում ենք հրապարակի վերայ, մտաւորական չէ, այլ մի խնդիր է, որի շարունակողը մանաւանդ համալսարանաւարտ երիտասարդութեան այն երբեմն տատանւող, մտամոլոր և մինչ վերջին ծայր ողբապէս յուզւած զրութիւնն է, որը մեր ժամանակների բնատուր շշմարտանքն է:

Նա չեմ կարծում, թէ կարող եմ թւելով սպառել բոլոր այն մտածողութեան եղանակները, որոնք յատուկ են մեր մտաւոր ինտելիգենցիային, բայց որոնցով որոշուած է նորա բունելիք կամ բռնած զիրքը դէպի ժողովրդի հետ խօսելու և ժողովրդին խորհուրդ տալու կամ նորա կեանքը ուսումնասիրելու և քննադատելու ձևով ծառայելու գործը:

Մի մասը հարկ չի համարում ժողովուրդին ծառայել, տրամաբանելով այսպէս՝ իմ կոչումն է մարդկութեան ծառայել, ուրեմն ես կ'ընտրեմ ինձ համար զուտ զիտութիւնը, որին մատուցանելիք ծառայութիւններովս ես իմ լուսման զգած կը լինեմ ընդհանուր մարդկութեան բարօրութեան և չառաջդիմութեան գործի մէջ:

Մի երկրորդ մասը իրան հետու է պահում մասնակցութիւնից ուղղակի այնքան ստոր գաղափար ունենալով պարբերական մամուլի մասին, որքան բարձր գաղափար որ նա ունի մասնագիտութեան մասին:

Մի երրորդ մասը ժողովրդական գրականութեան բոլորովին չի մասնակցում, հաւատալունենալով ազգի յառաջլինութեան համար:

Մի չորրորդ մասը գտնում է, որ դեռ ժամանակը չի եկած, մեր ժողովրդական մամուլը դեռ ևս այնքան բարձր նիւթերով չի զբաղւած, որ ինքը, իւր «աւելի վսեմ» գրածքները այժմեայ կրթութեան տէր ժողովրդին կարգալու տայ և այժմեայ կրիտիկոսներից քննադատէ:

Մի հինգերորդ մասը ուշք չի դարձնում զորս վերայ՝ ստոր գաղափար կազմած լինելով մեր նոր գրականութեան մասին, «ուր ամեն ինչ հաւասարապէս մարսում է» և կամ խորշելով գրական ընկերակցութիւնից այն անձնաւորութիւնների հետ, որոնք, նոցա կարծիքով, պղծում են այն խնդիրները, որոնց նոքա ձեռնամուխ են լինում:

Այլ բոլոր պատճառարանութիւնների վերայ, որ մեզանից ամեն մէկը կամ լսած է կամ կարող է լսել, մենք մեր կողմից կ'աւելացնենք նաև մէկը, որ սովորապէս չեն խոստովանում, այդ այն է, որ կրթւած երիտասարդութեան մի մասը բաւականաչափ չի հասկացել, որ նաև ոչ զուտ գիտնական, այլ ժողովրդին ծառայելու գործը մի յայտնի մտաւոր և տեխնիքական դեպքիպլին է պահանջում, որից զուրկ է նոյն այդ երիտասարդութեան մի մասը:

Բայց մեր չիշած բոլոր պատճառների հիմքում մի հատիկ բան կայ, որը այդ բոլորին տալիս է մի առանձին լրջութիւն, որովհետև դա մի խնդիր է, որը իւր ծաւալով և խորութիւնով կլանում է այդ բոլոր մասնաւոր երևոյթները, մի խնդիր, որը, քննելու համար, բոլորովին կախումն չունի մեր վերը առաջ բերած հանգամանքներից, հանգամանքների, որոնք թէև այսօր զրգում են մեզ այդ խնդրի վերայ մտածելու, բայց որոնք կարող են և փաղը փոխել: Իսկ խնդիրը ինքը կը մնայ նոյն խնդիրը, անկախ հանգամանքների փոփոխութիւնից:

ժողովրդի նշանակութիւնը զիտութեան և կեանքի յառաջդիմութեան մէջ—ահա ընդհանուր խնդիրը: Թէ որ աստիճանի ժողովրդական մասսան գեր է կատարում ինտելիգենտ գասակարգ կազմելու և որքան նա գեր է կատարում ինտելիգենտ գասակարգի մտաւոր և բարոյական մակերևոյթը բարձրացնելու մէջ առհասարակ, — ահա ընդհանուր խնդիրը: ժողովուրդը ոչ միայն իբրև կրթելու աւարկաց, այլ և որպէս կրթող, միտք գրդող, միտք բեղմնաւորող, նորա կրթած մասի գրական արժէքը որոշող գործիչ — ահա թէ ինչու մն է խնդիրը: Եւ երբ մենք մեզ այդ խնդիրը տւած ու նորան պարզած կը լինենք, երբ լաւ հասկացած կը լինենք, որ ժողովրդական մասսան իսկապէս այն է, ինչի վերայ որ չիմնուած է կրթութիւնը, զիտութիւնը, որպէս իւր զլիսաւոր շնորհաբանի վերայ, այն ժամանակ երբէք մեզ համար նոր խնդիր չի կարող լինիլ, թէ արդեօք որքան մեծ վաստակ ունի մարդկութիւնը, երբ ամբողջ սերունդներ կրթւած մարդկանց իրանց բոլորովին նւիրում են նոյն այդ ժողովուրդին, ունենալով որպէս կէս նպատակ՝ ժողովրդին չեա հազարգուել իրանց ոգու և մտքի լաւագոյն ոյժերով, հազարգուել այն բոլորով, ինչ նոքա կարող են ձեռք բերել կեանքի փորձով՝ միացած զիտութիւններից ստացած բոլոր գրական գաղափարներով:

Եւ արդեօք այդ նոյն ոյժերը չեն, որոնք ամեն երկրում կուլած են գիտութիւնը առաջ տանելու: Մի՞թէ տարբերում են իրարից գիտութեանը ծառայողները՝ ժողովրդին ծառայողներից: Եւ մի՞թէ հակառակում են իրար գիտութեան ծառայելը և ժողովրդին ծառայելը, եթէ մինչև անգամ այդ երկու պաշտօնները միևնոյն անձերի մէջ միացած լինեն: Գիտութիւնն առաջացնելը չը պիտի գրդէ արդեօք ժողովուրդը առաջացնելու, այլապէս ասած՝ ժողովրդի բարձրութիւնը չի պայմանաւորում արդեօք գիտութեան բարձրութիւնը և գիտութեան չարգը, ուրեմն և գիտութիւններից սպասելիք ոգուտների շափը: Եւ վերջապէս ինչ ոյժ է պահանջում գիտութեանը ծառայելը և ինչ ոյժ է պահանջում ժողովրդին ծառայելը: Ծարբերութիւն կայ նոցա մէջ արդեօք, թէ այդ նոյն մտաւոր գործունէութիւնն է, միմիայն այլ կերպարանքով:

Նարք հարցեր, արժանի, որ ոչ միայն քննեն բարձր Ֆիլոսոֆիական տեսակետից, այլ և չիմնեն այն բոլոր փաստերի վերայ, որ

կարող է մեզ առ զհիանական գործիչների և պատմական գործիչների կեանքը:

Մեր նպատակը չէ սակայն խնդրին այդ ծաւալը առ. եթէ խնդրի մի քանի զծերն էլ յաջողի մեզ զուրս բերել—մեր նպատակին առ այժմ մենք հասած կը համարենք մեզ:

Մի ազգի մէջ ամենակրթեամբ դասի զբազան արժէքը որոշ յարաբերութիւն ունի նոյն ազգի ժողովրդական մասսայի մտաւոր և բարոյական հասունութեան աստիճանի հետ, և այդ արժէքը այնքան բարձր է, որքան բարձր է մասսայի կրթութեան աստիճանը:

Հայ ժողովուրդը, մասսան, անզբաղէտ է մի ահագին մասով նոյն այդ ժողովուրդը իւր միաքը և ողին չի կրթել համաձայն նոր քաղաքացիական սկզբունքների: Եւ մենք պնդում ենք, որ հենց այդ ստոր աստիճանի կրթութեան համեմատ էլ, հայերը իրանց մտքերով և ձգտումներով չեն կարողանում շատ վեր ի վեր բարձրանալ ամբոխի աշխարհայեցողութիւնից: Եւ եթէ մենք այսօր ունենք մի կրթեամբ դասակարգ, որը ամբոխից իւր ձգտումների և իւր աշխարհայեցողութիւնների յատկութիւններով շատ և շատ բարձր է, այդ նորանից է, որ այդ կրթեամբները շփուել են այն գաղափարների և գիտութիւնների հետ, որոնք արտադրութիւն են հայ ժողովրդից պահանջներով և կրթութիւնով շատ աւելի բարձր ժողովուրդների: Եւ չը նայած դորան, չը նայած որ այդ բարձր կրթեամբ դասը աւելի բարձր գաղափարների տէր է, ժողովրդի անկրթութեան պատճառով, այդ նոյն ինտելեկտնցիան զուտ գիտութիւնով միայն բարձր է մնում, բայց ոչ արտայայտուելու ոյժով, ոչ գործունէութիւնով: Մի՞թէ կարելի է, որ հայ ժողովուրդը իւր այժմեայ կերպարանքով ոյժ ունենայ զրդել մարդկանց դէպի այնպիսի մտաւոր գործունէութիւն, որպիսին մենք հիացմունքով վկայում ենք, տեսնելով Եւրոպայի անցեալ ու ներկայ դարերի ֆիլոսոֆաների և հսկայական գիւտերի տէր գիտնականների երկար շարքը: Այդպիսի բան սպասել միանգամայն անկարելի է:

Վերցրէք թուրք ամբոխը: Նա, մտաւորապէս այնքան ստոր է հայ ժողովրդից, որ անգամ շփումը նոյն Եւրոպայի մտաւոր աշխարհի հետ՝ չի կարողանում ստեղծել մի, բառիս բուն նշանակութեամբ,

ինտելիգենտ դասակարգ, որ յաւակնութիւն ունենար համեմատել անդամ հայ ինտելիգենտ դասակարգի հետ: Ամբոխը իւր աշխարհայեցողութիւնով և մտաւոր ու բարոյական բովանդակութիւնով, որպէս տեսնում էք, ուղղակի ազդել է նորա բարձր դասակարգի բարոյական և մտաւոր բարձրութեան աստիճանի վերայ: Կնչ ժողովուրդն է, նոյնն է և նորա առաջնորդող դասակարգը:

Օրինակները աւելի առաջ տանելուց առաջ, մի բոլոր ևս կանգ առնենք այդ երկու ազգերի վերայ: Հայերը, ունենալով հանդերձ բազմաթիւ կրթւածներ, չունին մի բարձր կանգնած ամբոխ, ժողովուրդ. և, թէև թուրք ինտելիգենցիան անհամեմատ աւելի ստոր է հայի ինտելիգենցիայից, թերևս հենց այն պատճառով որ մի այդպիսի թուրք ինտելիգենցիա սկի չը կայ էլ, բայց և այնպէս հայ ինտելիգենտ դասակարգը այնքան ուժեղ չէ, որքան մեր կրթւածների թիւը կարող էր ենթադրել տալ: Յիսուն տարուց աւելի է, որ հայ ժողովուրդը սկսել է համալսարանական մարդիկ տալ ամեն տարի շարունակ և իւրաքանչիւր յաջորդ տասնամեակում աւելի ու աւելի մեծ թւով: Աւելի էլ մեծ է միջնակարգ ուսման տէր մարդկանց թիւը, որոնցից շատերը ինքնակրթութիւնով դէպի բարձրագոյնն են ձգտել, բայց և այնպէս տեսէք որքան թույլ ինտելիգենտ դասակարգ է կազմել մեզանում, որ չիտուն տարի բարձր ուսման սերունդներ տալով հանդերձ, այս օրւայ օրս հայերը զեռ ևս ոչ մի կատարեալ գործ չեն կատարել՝ ոչ ժողովրդական ընթերցանութեան համար, ոչ գրադարանների համար, ոչ կազմակերպել են մի գրող դասակարգ, ոչ ունին մի կազմակերպւած ուսուցչական դասակարգ, ոչ ունին մի մշտական բեմ, ոչ էլ թատրոնական հարուստ ընկերություններ են ստեղծել, և նորա մամուլն իսկ զեռ ևս անապահով վիճակի մէջն է:

Եթէ այդ երկույթը բաւականաչափ պարզ չէ ամենքին, դա, այդ անգիտակցութիւնը ինքը մեծամեծ չարիքներից մէկը պէտք է համարել: Եւ մենք ասում ենք, որ մեր ինտելիգենցիայի արդիւնաւետութեան թույլ լինելը բացատրւում է հենց մեր ժողովրդի, ամբոխի ստոր աստիճանի վերայ կանգնած լինելով: Արբանով որ ժողովուրդը ինքը դրդիչ ոյժ է ներկայացնում մի ինտելիգենտ դասակարգ կազմելու, այնքան էլ հենց ուժեղ է այդ ինտելիգենտ դասակարգը:

լի գենոս դասակարգը: Կնչու մեր ինտելիգենցիան չի զրկուում գեպի աւելի բարձր մտածողական գործունէութիւն, եթէ ոչ նորանից, որ նա այդ քանին չի զրկուում նոյն խի ժողովրդից, այսինքն այն բոլոր ոչժերից, որ կարող է ներկայացնել մի ազդ՝ իւր ապրուստի եզանակով, իւր մտաւոր պահանջներով և այլն:

Իսկ եթէ այդ այդպէս է, եթէ ժողովուրդի ներքին կուլտուրական զարգացումը պայմանաւորում է նաև նորա բարձր ստեղծագործական ոյժը, — հասկանալի է, որ, նւիրելով ժողովրդական գործին, դորանով ազգի ինտելիգենցիան հող է պատրաստում, որ ծնեն այդ ազգի մէջ ևս հանրամարդկային գաղափարատէրեր, որ ծնեն հանրամարդկային գաղափարներ, որ ծաւալեն գիտութիւնները: Գորանով այժմեան ինտելիգենցիան հող կը պատրաստի և պայմաններ կը ստեղծի ապագայում աւելի մեծ խնդիրների համար հասունացած ինտելիգենցիա:

Ամեն ինչ ժողովրդի ոյժերով է յառաջանում, և այդ ճիշդ է ոչ միայն մեզ համար, այլ և բոլոր ազգերի համար: Եւ ճիշդ է նաև այս, որ ամեն առաջաւոր ազգի մէջ ինտելիգենոս դասակարգը ոչ միայն չի աշխատել փակւած դասակարգ մնալ, այլ նա չի կարողացել իւր մշակած գաղափարների իրագործումը, իւր իդէալների իրականացումը, ուրիշ խօսքերով՝ յառաջդիմութիւնը՝ այլապէս հասկանալ, քան ժողովրդի ձեռնառութեամբ, որին նա հենց այդ իսկ պատճառով աշխատել է բարձրացնել, թէ՛ նիւթապէս, թէ՛ սոցիալապէս և թէ՛ մտաւորապէս: Մեծ ծաւալով այդ ձգտումին են ծառայել պատմական մեծ շարժումները եւրոպական և ամերիկական եղբայրներում: Բոլոր այն պատմական շարժումների և օրէնսդրութիւնների մէջ, որոնց առարկան ժողովրդի թէ՛ անտեսական և թէ՛ մտաւոր ու լարոյական աշխարհն է եղած, միշտ մենք դտնում ենք իբր անտեսանելի զսպանակ գործող այս համոզմունքը, որ ազգի բարձր ինտելիգենցիական շահերը սերտ կերպով կապւած են ժողովրդի մտաւոր պահանջների հետ, և երբ այդ պահանջները չեն նկատուել, աշխատել են ժողովուրդին այդպիսի պահանջներ ունենալու դրդել: Մի ժամանակ, երբ Եւրոպան գեռ ևս միայն ողորմելի տաղրական զսրոցներ ունէր, նա ունէր արդէն մեծ անուն կրող համալսարաններ, որոնք և պահապաններն էին ազգի բարձրագոյն մտածողական շահերի:

Բայց հենց որովհետև այդ ինտելիգենցիան բարձր էր գնահատում ձեռք բերած գիտութիւնը և կարօտութիւն էր զգում աւելի ևս նպատակ դիտութիւնների զարգանալու գործին, նա չէր կարող այլ միջոց գտնել այդ նպատակին հասնելու համար, քան տարրականացնել իւր ստացած գիտութիւնը և, տարրական ու միջնակարգ դասարաններ հիմնելով, նորանոր սլօքեր գրաւել դէպի իւր բարձր փնահատած բարձրագոյն ուսումը: Այսպիսով նա, այդ ինտելիգենցիան, բարձրացնում էր ժողովրդի մտաւորականը յօգուտ գիտութեան, որից և բղխում էր շտաշղիմութիւնը ինքն ըստ ինքեան: Եւ նա, ով կարող էր նաև զուտ գիտութեան անձնատուր լինել, թողնում էր այդ պաշտօնը՝ իրան նւիրելու համար այն ժողովրդին, որի հիւթերով պէտք է անէր իւր սիրած գիտութիւնը: Այն էներգիան, որ պէտք է գործ դնէր գիտութիւն մշակելու համար, նա գործ էր դնում ժողովուրդը մշակելու վերայ: Եւ քանի որ մէկը առանց միւսի կենդանի գոյութիւն ունենալ չէին կարող, զուրս է դալիս, որ գիտութեան համար պահանջուող էներգիան նոյնն է, ինչ էներգիա պէտք է գործ դնէր՝ ժողովուրդը լուսաւորելու, ժողովրդին ծառայելու համար:

Գիտութեան շահերը և ժողովրդի շահերը համերաշխ են: Գիտութեան ծառայողները ոչ միայն համերաշխ են, այլ և հաւատար են, եթէ միայն նոցա երկուսի գործ դրած մտաւոր էներգիան հաւատար է: Նիւտոն, Կանտ, Գարսին մեծ գիտնական էներգիաներ են ներկայացնում մեր աչքում, բայց ժողովուրդները ճիշդ են դատել, որ արձանների արժանի են ոչ միայն նոքա, այլ և մի Ռուսո, մի Միրաբո, և տասնեակ ու հարիւրաւոր այլ մեծ ու փոքր գործիչներ, որոնց մտածմունքների առարկան ժողովուրդն է եղած և ոչ միայն իմացականը:

Նորագոյն փաստերից ամենաաչքի ընկնողները թերևս նոքա են, որոնք նկատել են Ռուսաստանում: Ենթահիւ ուսական ազգի զարգացման ուրոյն հանդամանքների, այդ երկրում կազմել են երկու դասակարգեր, որոնց միջև վիհը այնքան մեծ է, որ նոքա իրար դժւար կարող են հասկանալ՝ լուսաւորւած դասը և ուսմիկ ժողովուրդը: Բայց թէ որքան մեծապէս զգացել է ուս ազգի առաջւոր մասը այդ դժբաղդ հանդամանքի կարևորութիւնը ուսական

կուլտուրայի համար, այդ ցոյց է տալիս այն՝ գրեթէ աղանդի կերպարանք ստացած հաւատը, որով իրանց նւիրել են ժողովրդական գործին այսպէս կոչւած նարոյնիկները-ժողովրդագէտ գրողները և նոցա հետ միասին առհասարակ ժողովրդական ամեն կարգի ինտելիգենտ գործիչները: Եւ եթէ Ռուսաստանում գրականութեան և հասարակական գործունէութեան այդ՝ յամենայն դէպս համակրելի՝ ուղղութիւնը շատերի համար նոր է թւում և եթէ այդ ուղղութիւնը անգամ մի անուն է կրում, որին նոյն քակ Սրբմտեան Եւրոպայի քաղաքակիրթ ազգերի լեզուներում համանիշը չենք գտնում, դորա վերայ չը պէտք է զարմանալ, որպէս չը պէտք է կարծել, թէ այդ ուղղութեամբ գործունէութիւն Սրբմտեան Եւրոպայում իբր թէ չի եղած: Զը պէտք է զարմանալ այն պատճառով, որ Սրբմտեան Եւրոպայում այգպիսի մեծ վիհ, ինչպիսին նկատում է ուսս ուսմիկի և լուսաւորւածի մէջ, չի եղած Սրբմտեան Եւրոպայում, զոնե ոչ այն ծաւալով և այնքան երկարատե: Ժողովրդական ուղղութիւնը թէ գրականութեան և թէ հասարակաց գործունէութեան մէջ այդ երկիրներում արտայայտել է շարունակաբար և զանազան ձևերով: Թերևս այդ է պատճառը, որ ուսս նարոյնիկ գրողների մէջ մի ընդհանուր ախտը, դառնացած զիծ է նշմարւում, որ այնքան և այնքան բնատրոշում է ուսսաց գրականութիւնը եւրոպական ժամանակակից գրականութեան հետ համեմատելու ժամանակ...

Այն էներգիան, որ տրամադիր կը լինէին բարձր կրթւածներից շատերը գործ դնել զուտ գիտութիւնը մշակելու վերայ, նոքա ստիպւած են տեսնում իրանց այդ նոյն էներգիան գործ դնել ժողովրդի մտաւոր և ոգեկան մակերևոյթը բարձրացնելու համար: Նոքա դորանով ոչ թէ գիտութեան համար ժամանակ չեն կորցնում, այլ բոլորովին ընդհակառակը, նոքա հենց դորանով իսկ աշխատում են յօգուտ գիտութեան, որովհետև միմիայն ժողովրդի բարձրանալովը գիտութիւնների ծաղկումը կարող է ապահովւած համարւել:

Ներկայումս ուսս գիտնական գրականութիւնը, եւրոպականի հետ համեմատած, աննշան է: Բայց մանաւանդ նկատելի է այդ մարդկային մտքի մշակութեան և հետազօտութեան, կամ ընդհանուր խօսքով ասած, ֆիլոսոֆացութեան նկատմամբ: Եւ այդ այդպէս է, չը նայած զոյութիւն ունեցող բաւականին թւով համալսարան-

ների, բազմաթիւ պրոֆեսորների, չընայած Ռուսիայում գոյութիւն ունեցող մեծաքանակ կրթւած դասակարգի, որի ստեղծելուն գրեթէ ահա երկու ամբողջ դարեր աշխատում են:

Ամբոխի չափազանց և բոլորովին անհամապատասխան ստորաստիճանի վերայ կանգնած լինելը, այն տարբերութիւնը, որ կայ մասսայի աշխարհայեցողութեան և կրթւած դասակարգի աշխարհայեցողութեան մէջ՝ ստիպում է նոյն այդ կրթւած դասակարգին կամ կտրւած մնալ և ոգեպէս միայն աշխարհի հետ հաղորդել, կամ բոլորովին օդում պտտել և կամ, որ ամենախելացին է՝ իջնել մտաւոր սանդուխքների վերին աստիճաններից դէպի ստորին աստիճանները՝ ժողովրդական կեանքի հետ հաղորդակցելու համար, որ յետոյ, նոյն այդ ժողովրդի օգնութեամբ՝ կրկին վեր բարձրանայ: Ռուս ազգի քաղաքակրթութեան պատմութիւնը ունի շրջաններ՝ համապատասխանող և առաջին և երկրորդին և երրորդին: Այս երրորդը՝ նկատուում է միայն այս վերջին երեսուն տարում: Դորա սկզբնաւորութիւնը բոլորովին անհնարին կը լինէր առանց մի քանի կարևոր սոցիալական պայմանների, իսկ այդ պայմանները ստեղծելու կոչւած էին ՅՍ-ական թւականների թեփոքները: Առանց այդ թեփոքների— կրթւած դասակարգը, պայմանների ոյժով, պէտք է կղզիացած մնար: Նւ ես ասում եմ, որ կղզիացած դրութիւնը անկարող է յարատւ կերպով դրդիչ լինել մարդկային բարձր մտածողական ստեղծագործութեան համար: Այդ տեսակ դրութեան մէջ կարող է թերևս գեղարևոտ զարգանալ, կարող է զարգանալ նաև գեղեցիկ դպրութիւն, այդ դրութիւնը կարող է բանաստեղծներ յառաջացնել, — և այն՝ գլխաւորապէս ոճի վարպետներ, բայց գիտութիւն և գիտնականներ՝ ոչ:

Մեր այս յօդւածի նիւթը գայթակղեցնում մեզ աւելի հեռուն գնալ, բայց մենք ստիպւած ենք կարճ կտրել: Նիւթը այնպէս է, որ հազար ու մէկ դէպքեր ապագայում առիթներ կը տան օղակելու այստեղ արդէն արտայայտած մտքերից և կամ առիթներ կը տան հարևանցի կերպով այստեղ զծագրածը աւելի ընդարձակելու և պարզաբանելու: Խնդիրը ծանրակշիռ է և վերաբերում է այն գիտակցութեանը, որով պէտք է վերաբերել ինտելեգենտ դասակարգը ժողովրդին ծառայելու գործին: Ինչ էլ որ ասեն այս առիթով, բայց

մեզ թւում է թէ այդ գիտակցութիւնը դեռ ստեղծելու գործ է մեր ինտելեկտեցիային պատկանող շատ կարգի անձերի համար: Փողովրդին ծառայելու գործում, որպէս յօգւածիս սկզբում ջիւնցինք, կան շատ կենտրոնախոյս ուժեր, որոնք բոլորն էլ հիմնւած են սխալ դատողութիւնների վերայ: Այդ դատողութիւններին մենք ընդդիմադրում ենք երեք թեզիսներ, որ շոշափեցինք մեր այս յօդուածում և որ հետեւեալներն են.

1) Փողովրդի մտաւոր և բարոյական բովանդակութեան համապատասխան է նոյն փողովրդի ինտելեկտու դասակարգի մտաւոր և բարոյական ուժերի դրական արժէքը:

2) Փողովրդական մասսաների մտաւոր, բարոյական և գոցա հետ կապւած նաև սնտեսական ու սոցիալական տարբեր դրութիւնները տարբեր կերպով էլ ազդում են գիտութիւնների յաւաքիմութեան վերայ, այնպէս որ գիտութեան յաւաքիմութիւնը պահանջում է փողովրդական մասսաների յաւաքիմութիւնը: Այդ իսկ պատճառով փողովրդին ծառայելը նշանակում է նաև միջապէս գիտութեան ծառայել:

3) Այն մարդկային մտաւոր գործունէութիւնը, որ պահանջւում է գիտութեան լաւ ծառայելու համար, ոչնչով բարձր չէ քան այն գործունէութիւնը, որ պահանջւում է փողովրդին լաւ ծառայելու համար: Այդ երկուսի համար պահանջւած մտաւոր էներգիաները իրար հաւասար են:

ՀԱՐԵՒԱՆՆԵՐ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ)

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

Լեռնային բարձր արօտատեղում զարկած էին երեք վրաններ: Դոքա բոլորը պատկանում էին Մահմուդ օղլի Սիւլեյմանին, որ տէր էր հազար հինգ հարիւր զուլի ոչխարի և բռնել էր սարաւանդի մի մեծ տարածութիւն: Սիւլեյմանը ունէր երկու սրտոտ որդիներ, որոնցից մէկին արդէն պսակել էր, իսկ միւսին զեռ վարժեցնում էր ոչխարապահութեան մէջ, յանձնելով նորանց հովւի և հովիւների տեսչի պաշտօններ:

Ոչխարների կրթելու ժամն էր. ամենքը սաստիկ զբաղւած էին: Ոչխարներին մէկ-մէկ անց էին կացնում կթող հովիւների մօտ և բաց թողնում: Սիւլեյմանը ուշադրութեամբ շիտում էր ամեն մի ոչխարի մարմինը և բուրդը: Գառների հօտը ծանր-ծանր մօտենում էր հեռուից:

Վթելը վերջացաւ, ոչխարներին փոքր ինչ յետ տարան վրաններից և դառներին բաց թողին: Գառները մկրկալով և բզաւելով վազեցին իրանց մայրերի մօտ:

Սիւլեյմանը, մուշտակը ուսերին զցած, դարձաւ իւր վրանը լուռ ու մունջ. նստեց վրանի առաջ ընկած քարի վերայ և պատրաստւեց ծխելու: Սարի գաղաթից մինչև այդ ժամանակ փչում էր բարակ սառն քամի, որ սկսել էր մեղմանալ և այժմ համարեա դադարել էր: Սիւլեյմանը զգալի յետ տարաւ իւր ճակատից. յետոյ մուշ-

տակը կիսատ վայր զցեց իրանից և աջ ոտքը ծալեց ձախ ոտքի վերայ:

Սիւլեյմանի առաջ բացւած էր մեծ տեսարան: Նորա արօտատեղուն կպած էին հարևան գիւղացիների արտերը, նոցանից յետոյ երեւում էր գիւղի տների մի մասը և յետոյ տասնեակ գիւղեր իրանց վարուցանքսով հետևում էին միմեանց—իսկ աւելի հեռուն պատած էր մի տեսակ մշուշով, որի միջից հազիւ երևում էին գիւղերը և նոցա շրջակայքը: Սիւլեյմանը նայում էր հորիզոնին. բայց ո՛չ շատ ուշադիր կերպով. կարծես նա մի մտածմունքի մէջ էր:

Այդ ժամանակ նորա հովիւներից մէկը մօտիկացաւ՝ բերելով հետը երկու կաղ ոչխար:

—Աղա՛, կաղացած ոչխարները դոքա՞ են:

—Հա, սոքա են, պատասխանեց քաշւելով հովիւը:

—Թող վրանի մօտ ու ինքզ զնա՛ գործիդ. լաւ մտիկ տւէք ոչխարներին. տօ՛, շներին զարկող է՞ եղել:

—Ոչ:

—Ինչպէս թէ ո՛չ, Ալաբաշը ինչ որ մի ոտքը քաշում է. ես հօ կոյր չեմ... դէ գնա կորի՛ր:

—Ես չեմ իմացել:

Սիւլեյմանի մեծ որդին Բաղիրը՝ մի բարձրահասակ սիրունատես տղայ՝ ոչխարների մօտից եկել կանգնել էր հօր մօտը և լսում էր նորա խօսակցութիւնը հովիւի հետ: Նա լաւ գիտէր, թէ ինչո՞ւ է կաղում շունը, բայց գաղտնիքը կամաւ չը բացեց, այլ իւր կողմից էլ աւելացրեց.

—Դոքա չեն էլ նայում թէ շունը ոչխարների մօտն է, թէ հեռացել է: Այս տարի մեր հովիւները շատ թուլասիրտ են. չեն կարողացել սահմանների խոտը ուտացնեն ոչխարներին: Երևի շունով կ'անցնեն պահոցքին, «դօրուխին»:

—Տօ, որ աչքներդ էլ դուրս գայ, ես մինչև երեք շաբաթ թող չեմ տալ որ մօտիկանաք պահոցքին, գուռաց Սիւլեյմանը: Ինչպէս կարող էք, կշտացրէք ոչխարներին: Աւրիշ տարի ինչպէ՞ս ենք բաւականացել: Աչքաբաց եղէ՛ք:

II

Հովին ճանապարհ գցելուց յետոյ դարձաւ իւր որդուն Սիւլեյմանը և աւելի մեղմ ձայնով շարունակեց.

—Այս տարի, Բաղիր, Աստու վերայ զանգատի տեղիք չ'ունենք. Ժամանակին անձրևներ տաւ, լաւ խոտ բուսցրեց. տաւարն էլ ողջ և առողջ է: Ուրիշ տարի այս պահուն ինչքան զառն էինք կորցրած լինում: Այս տարի փառք Աստու, ազատ ենք դժբաղտութիւնից:

—Գառն մի փոքր կոտորել է Հաջի Ալիի հոտում. բացի նորանից՝ էլ ոչ մէկը զանգատաւոր չէ. խոտը այս տարի պատւական է. մեր պահոցքը լաւ խոտահարք է դարձել, պատասխանեց Բաղիրը մի տեսակ պարծենկոտութեամբ և կռանալով զետնին՝ կտրեց մի երկու խոտ ու սխեց նրանց քրքրել:

—Այս մեր հովիւները—խտակ էշեր են. տեսնում են, որ խոտը սխում է պակսել. էլ այն չէ որ սահմանի խոտը կերցնեն, որ յետոյ մօտիկանանք զօրութին—մի քիչ ուշ:

«Սահման, սահման» ասելով՝ Թափառականները իրանք հասկանում էին թէ ինչ են ասում: Նոցա սահմանակիցները զիւղացիներն էին: Ամենայն տարի Սիւլեյմանը կերցնում էր զիւղացիների արտերը իւր ոչխարներին: Այս տարի խոտը առատ էր և հովիւները դեռ կարօտութիւն չէին զգացել մի այդ տեսակ քայլի, բայց Սիւլեյմանը մի տեսակ անհանգստութիւն էր զգում հովիւների այդ տեսակ թուլութիւնից:

—Այժմ այն էլ պէտք է ասել, որ զիւղացիները առաջւանից աւելի քաջացել են. հանգստացրաւ հօրը Բաղիրը, մեզ հետ կուում են, մեզ վերայ զանգատուում են: Թէ թողնե՛նք մի տարի հանգիստ, ձայնները կտրւի... փառք Աստու խոտ ունենք:

—Նոցա զանգատը անվերջ է. որ աշխարհքն էլ դորանց տաս՝ դոքա չեն կշտանալ: Տես մէկ դոցա արտերը, փահ, փահ, փահ, ինչքան երկայն փուլած են: Ախր որ մի քանի սուփրա տեղ էլ մեզ հասնի—ու՛մ վնաս կը լինի: Բաս ես գիշեր-ցերեկ անձրևի, քամուտակ ապրեմ, —ի՛մ ապրանքը ի՛մ անձովը պահեմ. իսկ նա զայժարանը մի օր վարի ցանի ու զնայ՝ շաբաթներով ամիսներով տանը հանգիստ նստի՝ մինչև արևը հասցնի:

Նսերը հաջեցին, խօսողները աչքները դարձրին դէպի շների կողմը և տեսան հեռուից ձիաւորներին:

— Ահա մահն է չէ՞. այն էլ Մեհաբն:

— Այո, նոքա են, երևի սուս են վերադառնում. նոցա կանչել էին դատարանը՝ սպանութեան գործի համար:

— Գիտեմ, գիտեմ. տեսնենք ինչ լուրերով են գալիս. — կանչիր, վեր գան, նստեն, շուքուխ քաշեն:

III

Չորս օր էր անցել այս խօսակցութիւններից յետոյ: Սիւլեյմանի որդիները և հովիւները վաղ առաւօտեան վերկացան և տեսան, որ թանձր մառախուղը պատել է լեռները և քամին տանում է մառախուղը դէպի գիւղերը: Կարծես թէ դա մի ուրախացնող, սիրտ աւող դէպք էր. հովիւները սաստիկ աշխտջով սկսեցին պատրաստել ոչխարներին արօտը քշելու. հովիւներից մէկը մօտեցաւ ու շներին տեղից շարժեց և նոցանից մէկին իւր մահակով բօթեց: Առհասարակ, շները իրանք գիտէին իրանց պարտաւորութիւնները և նոցա զարթեցնող, գրգռող չէր լինում ո՛չ ոք: Այս օրւայ նոցա վերկացնելը — իմաց տուաւ շներին, որ մի ինչ որ նոր գործ կայ կատարելու և նոքա պէտք է պատրաստ լինեն: Նոքա սկսեցին անհանգիստ նայել իրանց շուրջը, իսկ նոցանից մէկը սկսեց հաջել:

Բաղիրը չէր նկատել հովւի արարքը: Տեսնելով շներին լարած դրութեան մէջ՝ նա զարմացաւ և բարկացաւ:

— Տօ, ինչ յիմարներն էք. շներին ինչո՞ւ էք կատաղեցրել: Նստում էի, դորանց ամենեւին հետներդ չը տանէք. դոքա իրանց հաջոցով ձեր բանը կը քանդեն, գիւղացիներին իմաց կը տան:

— Երկիւղ միք կրի՛ւ, մառախուղը թանձր է, գիւղից տեսնող չի լինիլ. շունը զուր տեղը ինչո՞ւ է հաջում: Իսկ եթէ բան է, մի դժբաղդութիւն պատահեց — շները հարկաւոր կը գան:

— Աէ, շները աւելորդ են, գլուխը թափահարելով ասաց Բաղիրը:

Շներին յետ աւին հօտից և յանձնեցին զանարած հովիւներից մէկին: Երկու հովիւ և Սիւլեյմանի փոքր որդին Ասաղը ստան

իրանց հսկայական մահալները ու սկսեցին քշել ոչխարների հօտը գէպի գիւղի արտերը:

— Զգոյշ եղէք, կանչեց նոցա ետևից Բաղիրը. եթէ տեսաք, որ մառախուղը նոսրանում է, ետ քաշեցէք դէպի մեր արօտը: Ոչխարը չը ցրէք, աչքներդ վերան պահեցէք, յետոյ նոցա մի տեղ հաւաքելը դժւար կը լինի: Ասա՛դ. մի փորձանք պատահելուց՝ շուտ իմաց կը տաս մեզ. ինքդ մի քիչ քեզ հեռու պահի՛ր:

Մեծ հովիւը շատ էլ ուրախ չէր այդ օրւայ իրանց անելիքին և մտատանջութեան մէջ էր ընկել: Նորա կինը վատ երազ էր տեսել իւր մարդու մասին: Բայց որ մի անգամ դուրս էր եկել այդ ճանապարհը՝ պէտք է քաջութեամբ առաջ գնար: Դա մի երեսուն տարեկան միջահասակ ջլոտ տղամարդ էր, սևացած երեսով ու կատաղի աչքերով: Դա յայտնի էր իբրև լաւ կուռղ. իբրև լաւ մահակ խաղացնող: Եւ դորա ձեռքին եղած մահակը մի ահագին փայտ էր այնպիսի ծանր գլխով, որի հարւածը պէտք է իսկոյն ոչնչացնէր հակառակորդին: Այդ մահակով մի անգամ նա խփել էր զայլի և նորան գետին տարածել:

Մառախուղը շարունակում էր: Հօտը անցաւ Սիւլեյմանի արօտի սահմանը և ընկաւ գիւղի հողը: Երջակայքը լուռ էր. ձայն ծպտուն չը կար: Հովիւները ուրախացան և համարձակ կերպով քշեցին ոչխարներին արտերի մէջերքը: Ոչխարները ցրեցին այս ու այն կողմը: Մեծ հովիւը մոռացաւ երազը և վայրենի ժպիտը երեսին՝ կանգ առաւ արտի եզերքին:

— Աստուած ողորմած է. նա իւր արարած ոչխարի համար կերակուր կը գտնի, միայն իմ կուռը սաղ լինի, ես ոչխարի վերան լինեմ:

IV

Գիւղացիներից թագցւել չը կարողացան հովիւները իրանց ոչխարներով: Գիւղացիներից մէկը ձարօտենց Վանէսը ուշք չէր դարձրել մառախուղի վերայ և յոյս ունենալով, որ սա շուտով կը ցրէ, դնացել էր խոտահարքի իրանց վերի արտի կողմերը:

Վանէսը նկատեց ոչխարներին իւր դրացի Մկրտչի արտում ու խոտահարքում՝ և իսկին ասած՝ մի բոպէ ուրախացաւ, որովհետև

Մկրտչի հետ թշնամացած էր: Թշնամութեան պատճառը Մկրտչին էր, որ գարնան իւր արտերը վարելուց՝ երկու ակօս անցել էր Վանէսի հողով և իւր ցանքսի մէջ գցել: Վանէսը շատ կուլել էր, շատ խօսել Մկրտչի հետ, բաց սա իւր վերայ չէր ընդունել մեղը:

Սակայն խիղճը Վանէսին տանջեց և միւռնոյն ժամանակը նա մտաբերեց, որ իւր ցանքսը ու խոտը նոյնպէս շատ մօտ են ոչխարներին: Ուստի սկսեց խորհել հովիւներին բռնելու և պատժելու միջոցների մասին: Նա ինքը միայնակ ոչինչ չէր կարող անել, հովիւները նորան ջարդուվշուր կ'անէին. նա տեղեկութիւն ունէր մեծ հովւի կատաղի հարւածների ոյժի մասին: Նա վճռեց գողտուկ իջնել գիւղը և այնտեղից առնել հետը մի քանի տղերք:

Գիւղացիները տխրեցին լսած լուրից: Նոցանից իսկոյն մի եօթն հոգի ձանապարհ ընկան դէպի սարը: Մկրտչը, որի ցանքսը ու խոտը վտանգի մէջ էին, տանը չէր. գնացել էր ջուր կապելու ներքին արտի վերայ: Նորա ետեւից մարդ ուղարկեցին:

Տղերքը առան իրանց հետ մահակներ. իսկ նոցանից երկուսը կապեցին դաշոյններ: Նոքա պայմանաւորւեցին աննկատելի կերպով մօտենալ հովիւներին և նոցա չաղթել առանց երկայն կուլի: Նոքա գիտէին, որ թէև կուլի մէջ իրանք չեն զիջիլ հովիւներին, սակայն չէին ցանկանում պատճառ լինել սաստիկ ծեծի կամ գուցէ արիւն-հեղութեան:

Թանձր մառախուղը պատել էր երկիրը: Գիւղացիները, մօտենալով Մկրտչի արտին, սկսեցին արտերի միջով կուացած, սողալով և չոքեչոք՝ մերձենալ հովիւներին: Երկու տղայ բաւականին արդէն մօտեցել էին մեծ հովւին և դնդղում էին նորան:

Հովիւը ոչ ոքի չէր սպասում. թեք էր տւել աջ ոտքին և գաւազանը թոյլ կերպով բռնել էր ձեռքում: Նա նայում էր իւր ձախ ձեռքի վէրքերին: Յանկարծ տղերքը բուսան նորա առաջին և խլեցին ձեռքից մահակը:

—Մի վախենա՛լ, դրացի, բարով ես եկել մեզ մօտ հիւր, կանչեց տղերքից մէկը:

Հովիւը շիմացաւ ինչ անի կամ պատասխանի, որովհետև միւս տղերքն էլ երևացին արտի միջից. նա այլապէս, չարձակեց գիւղացու վերայ, որ մահակը խլի. բայց, տեսնելով հակառակ ոյժը, չես քաշւեց:

—Մահակս, ինչո՞ւ ես խլում ձեռքիցս, ինչ ասելու ես ասա:

—Ասելու շատ բան չունենք, գնանք մեր գիւղը հիւր:

Միւս հովիւը, որ դեռ չէր տեսել առաջինի զինաթափւելը, կռիւ սկսեց գիւղացիներից մէկի հետ, մահակները տեղից շարժեցին. գիւղացիները օգնութեան եկան. մեծ հովիւը աղաղակում էր իւր ընկերին, որ յետ քաշւի: Կռիւը հանդարտւեց: Հովիւը, տեսնելով իւր անզօրութիւնը՝ դիմեց խորամանկութեան. քաղաքավարի և շողօքորթելով նկատեց:

—Մառախուղ էր, ոչխարները չէին նկատել՝ անցել էին սահմանը. մենք էլ եկանք նորանց յետ քշելու:

—Այդ յետոյ կը քննենք. հիմա հայդէ գնանք մեր գիւղը ձեր ոչխարն էլ հետներդ: Այնտեղ հանգիստ հանդարտ խորհուրդ կանենք, նկատեցին սառն կերպով գիւղացիները:

—Ոչխարները մեղք են, աղաչելով խնդրեցին հովիւները, թողնենք նորանց արածեն արօտում, նոքա գիւղում ձեզ համար ծանր բեռ կը լինեն:

—Այ հանաքչիներ, ի՞նչ բեռն կը լինէք. ինչո՞ւ էք այդքան մեզ համար հոգում. ասենք թէ հարևաններ էք, պէտք է հոգատար լինէիք:

—Ե՛հ, տղերք. լաւ չէք անում. ոյժը ձեր կողմն է՝ ինչ ասենք. ծիծաղեցէ՛ք:

—Դէհ, գնանք, գնանք, խօսելու ժամանակ չունենք:

—Լաւ չէ՛ք անում, գիւղացիներ:

—Այդ յետոյ կը տեսնենք, դէհ տղերք, ոչխարներին քշեցէք:

Հովիւները ստիպւած պէտք է զիջէին: Նոքա դարձեալ փորձեցին յետ պահելու ոչխարը. բայց գիւղացիները սկսեցին սպառնալիքներ կարդալ: Աղմուկի վերայ մօտիկ արտերից հաւաքւեցին էլի մի չորս գիւղացի, որոնք, տեսնելով իրանց ջահիլների յիմարութիւնը՝ հարկաւոր չը համարեցին խառնւել գործին: Հովիւները դրանց դիմեցին իբրև միջնորդների. բայց սոքա նախատելով ասացին:

—Մօթ չէ ձեզ համար. գալիս էք գողունի մեր խօտը կերցնում, մեր ցանքս, փշացնում՝ և յետոյ ուզում էք, որ ձեզ էլ մենք ներենք:

—Մի ուրիշ օր էլ կը պատահի՞ մենք ձեզ հարկաւոր կը գանք:

Գիւղացիները աչիկն սկսել էին քշել ոչխարներին դէպի գիւղը, Հովիւները գլխակոր հետեցին ոչխարներին:

Սիւլեյմանի փոքր որդին Ասաղը, որ տեսնում էր հեռուից այս բոլորը, վազեց տուն՝ շուտով յայտնելու իւր հօրը եղելութեան մասին:

V

Գիւղում դժբաղ ընկաւ: Ամէն կողմից ժողովեցին տեսնելու ոչխարի հօտի դերելը: Ամբողջ գիւղում այնքան ոչխար չը կար, որչափ Սիւլեյմանինն էր: Ոչխարները քշեցին տանուտիրոջ կալատեղի մօտ շինած մեծ պարսպապատը և վերան դրին պահպաններ:

Ցանուտէրը տեսաւ, որ առանց զգիրի յայտարարութեան էլ մարդիկ հաւաքել են իւր տան մօտ. ուստի վճռեց մի թեթև ժողով կազմել և խորհուրդ անել այս դէպքի մասին:

— Կանոնն այն է, սկսեց տանուտէրը, որ ուղարկենք գլխաւոր տանուտէրի, գլխաւոր, ետեւից ու նորա ներկայութեամբ արձանագրութիւն կազմենք եղած վնասի և բոլոր եղելութեան մասին:

Գիւղացիները խորհուրդ տւին փոքր ինչ սպասել, որովհետև Սիւլեյմանին տեսել են, որ նա գալիս է գիւղ:

— Սիւլեյմանը գալ, չը դալ—մեր ինչ գործն է, մէջ մտաւ կաղլիկ Մարտիրոսը, որ յայտնի էր գիւղում, իբրև ուղիղ խօսող և բողոքող մարդ:

— Տեսնենք, ի՞նչ է ասում:

— Ինչ ուզում է ասի, շարունակեց Մարտիրոսը. նա ի հարկէ կը ցանկանայ, որ մենք դարձնենք ոչխարները իրան և ով գիտէ դեռ իրան էլ մի որ և է ընծայ տանենք մեր կողմից: Եթէ լաւ պատժելու համար հարկաւոր է արձանագրութիւն, թող լինի անպատճառ արձանագրութիւն:

— Սպասի՛ր, Մարտիրոս, այդտեսակ սուր ու դիք բռնելով՝ բան չի դուրս գալ. տեսնենք առաջ ինչ ենք իմանում, կարելի է յետոյ աւելի խիստ բան ենք գործ դնուս:

Գիւղացիները սկսեցին միմեանց հասկացնել այս կամ այն տեսակ վարմունքի նշանակութիւնը. խօսում էին երկու-երկու, խումբ-խումբ: Կողմնակի մի մարդ կը զարմանար այդ տեսակ խօսակցու-

թեան, այդ տեսակ ժողովի վերայ: Աղմուկի լաւ ժամանակը հասաւ զիւրը Սիւլեյմանը: Գիւղացիները սկսեցին հանդարտուել: Սիւլեյմանը մօտեցաւ տանուտէրին.

—Բարո՛վ, տանուտէ՛ր:

—Բարո՛վ, Սիւլեյման:

—Հովիւներս սխալուել են, ասենք. մտել են զիւղի սահմանը, լաւ, դուք ի՞նչ էիք մտածում. մի՞թէ հարեւանի հետ այդպէս կը վարուեն... ոչխարի տէր կայ՝ թէ չէ՞. նա մի՞թէ՞ ձեզ մի բան արել է. ինձ ասացէք՝ ես ինքս կը պատժեմ հովիւներին:

Սիւլեյմանը բարկացած մօտեցաւ իւր հովիւներին և բարձրաձայն աղաղակելով անթիւ չիշոցներ տուաւ նորանց. զայրացած ըստէին բարձրացրաւ մորակը, որ իբր թէ վերայ բերի հովիւն. բայց զիւղացիները նորան հանդարտեցրին: Տանուտէրը չեա քաշեց նորան:

—Նստի՛ր, Սիւլեյման, նստի՛ր:

—Ինձ կը խայտառակեն այդ շները հարեւանութեան մէջ: Ի՞նչ օգուտ ունեմ դոցա ծառայութիւնից: Միայն արիւն պղտորել զիտեն դոքա: Վարձները պէտք է կտրես, որ մի հասկանան դոքա:

Սիւլեյմանի բարկութիւնը անկեղծ էր. բայց նա բարկացած էր անյաջողութեան վերայ: Այդ բանը, թէև զիտէին զիւղացիները, այնու ամենայնիւ՝ շատերը խաբւեցին նորա խօսակցութեան ձևից: Կաղիկ Մարտիրոսը, նկատելով զիւղացիների կակղելը, սրտումը բարկացաւ և զսպելով իրան խօսեց.

—Սիւլեյման, թողնենք հովիւներիդ մի կողմ. դու նոցա վերաբարկանալու զեռ ժամանակ շատ ունես. մեք այստեղ գործ ունենք. եղբայ՛ր, սահման է դրւած մեր ու ձեր մէջ, պէտք է նա սուրբ պահպանուի. զանց աւնտղը պէտք է պատժուի:

—Փա՛հ, փա՛հ, փա՛հ, ինսամի Մարտիրոս, ի՛նչ խօսում ես, հարեւանութեան մէջ այդ տեսակ կոպիտ խօսակցութիւն. մոռացե՞լ ես մեր անցեալ տարւայ զբօսանքը քո ձի գնելու ժամանակը:

—Ձեմ՝ մոռացել, Սիւլեյման. շնորհակալ եմ, ես էլ քեզ համար նեղութիւն կը քաշեմ, երբ զէպք լինի. բայց այստեղ ուրիշ բան է, զիւղի գործ է, սահման ճանաչելու, ուրիշի սեպհականութիւն յարգելու գործ է:

—Մարտիրոս, աւելորդ խօսակցութիւն ես անում. ափսոս է

ժամանակը: Տանուտէր, դու խելօք մարդ ես, բանը հաշտութիւնով վերջացնենք, ամէն մարդ իւր գործին գնաց, պարապ մարդիկ չենք:

— Կանչենք մեծ տանուտէրին, դայ, գործը քննի, ինչպէս հարկաւորն է, խօսեց երիտասարդներից մէկը:

— Այս տարի, Սիւլեյման, ձեր խոտը առատ է. բայց դուք էլի ազահոլթիւն էք անում: Խոտը պահոցք էք արել ու մեր հողիցն էք ուզում օգտուել. անխիղճ էք, բարեկամ, անխիղճ, խօսեց մի ուրիշ երիտասարդ:

— Ի՞նչ անեմ, քաջե՛ր, ինձ նեղ օրն էք նախատում, իմ հովիւները իմ երեսը սկսեցրել են... ես ձեզ ինչպէս հասկացնեմ, որ ինքս էլ անբաւական եմ եղածից: Բայց փառք Աստծու, ձեզ մի վնաս չի հասել, մի քանի շահու վնաս հասած լինի, չը լինի՝ այդ է էլի... նոր միայն հօտը վրանիս մօտից հեռացաւ:

— Վնասը այդ յետոյ կ'իմանանք. քեզ հետ միասին կը գնանք՝ վնասը կը հաշուենք: Այդ վնասից դուրս տուգանքի մասին է խօսքը, խօսեց կարծահասակ մի գիւղացի:

— Այդպէ՛ս, ուրեմն: Դուք ուզում էք զէպքից օգուտ քաղել ուրե՛մն, հասկացայ: Տանուտէ՛ր, ի՞նչ կ'ասես, լուել ես. սա ի՞նչ է նշանակում. եղբայր, վնասից դուրս էլ դուք խօսակցութիւն ունէ՞ք: Ամօթ չէ՞:

— Ձէ, ամօթ չէ, մէջ մտաւ կաղիկ Մարտիրոսը, կարելի է դու չես հասկանում, Սիւլեյման բ-է՛-դ, ես քեզ հասկացնեմ:

— Ձեմ ուզում, աւելորդ է, մրթմրթաց Սիւլեյմանը:

— Ես ինքս եմ ուզում և կ'ասեմ: Ես քեզ ասում եմ, մեր սահմանը պէտք է յարգես, սահմանից չ'անցնես. դու անցել ես, ուրեմն՝ պէտք է պատիժը կրես, այդ սահման չը ճանաչելու պատիժը. իսկ եղած վնասը՝ այդ էլ իւր կարգով:

Տանուտէրը, որ թոյլ էր տւել ցանկացողներին խօսելու, այժմ ինքը դարձաւ Սիւլեյմանին:

— Սիւլեյման, ի՞նչ ես ասում. ինքդ էլ նկատում ես, որ արդարանալու տեղ չունես. պէտք է գիւղին բաւականութիւն տաս:

— Հա, կարգին ես խօսում, տանուտէր, սխալը արեած է. ես էլ շատ ցաւում եմ. բայց ինձ ձեր այստեղ բերելը, այսքան նախատինք ուտեցնելը՝ շատ թանգ նստեց. միթէ՞ աւելի բան էլ էք ցան-

կանում: Ես հազար մանէթ կը տայի այս օրւայ ձեր ինձ վերայ թքելը չը տեսնելու համար: Հասակաւոր, միրուքաւոր մարդ եմ, ժողովրդի մէջ անուն ունեմ, դուք ինձ՝ իբրև մի յետ ընկած ծառայի՝ քացի տւեցիք. ինձ գողի, աւազակի հետ հաւասարացրիք, դեռ էլի բաւական չե՞ք. դէհ, վեր առէք մտրակը, մի երկու էլ մէջքիս հասցրէք, ի՞նչ էք կանպնել:

Սիւլեյմանի խօսակցութիւնը ազդեց գիւղացիների վերայ:

— Տես, անիրաւը, ինչ լեզու բանեցրեց, փսփսացին նոքա մի-մեանց ախանջին:

— Սիւլեյման, գիտես, ասաց տանուտէրը, որ սա առաջին անգամը չէ. անցեալ տարի էլ երեք դէպք ենք ունեցել հետդ. թէև ոչ այսպէս մեծ և ախներև: Այն ժամանակն էլ մի կերպ գործը անցկացրինք: Սորան վերջ պէտք է՝ թէ ո՛չ: Ես ինչպէս զսպեմ գիւղի ձայնը, նորա բողոքը. ի՞նչ պատասխանեմ:

— Մի անգամ լաւ պատժենք, մի լաւ տուգանք առնենք. յետոյ էլ եկող չի լինիլ, կտրական ասաց Մարտիրոսը:

— Ի՞նչ կայ, մեծ ոչխարատէր ես, մի քսան ոչխարից որ զրկես, ի՞նչ կը պակսի. բայց հովիւներդ կը տեսնեն քո վնասը ու կը խրատեն:

Գիւղացիները ծիծաղեցին և սկսեցին աղմկալի խօսել: Վնասուած արտի տէրը, Մկրտիչը, վաղուց եկել էր և լսում էր խօսակցութիւնները: Սիւլեյմանը նորան աչքով արաւ, որ իրան մօտենայ: Մկրտիչը մօտեցաւ և Սիւլեյմանի վերայ նայեց մի նախատական հայեացքով:

Սիւլեյմանը սկսեց քչփչալ, սակարկութեան մէջ մտնել. էլ հարևանութիւն, էլ վաղուցւայ ծանօթութիւն, էլ ապագայում կատարելիք օգնութիւններ— էլ խօստում չը մնաց, որ չ'արաւ նորան: Մկրտիչը լսեց, լսեց և համաձայնեց բաւականանալ մի ոչխարով:

Սիւլեյմանը խնդրեց տանուտէրից, որ լռեցնի ժողովականներին և իրան խօսք տայ: Ցանուտէրը հրաւիրեց գիւղացիների ուշադրութիւնը. Սիւլեյմանը խօսեց.

— Հարևաններ, դուք ինձ այսօր շատ խիստ պատժեցիք. այսպէս նախատիք կեանքումս կերած չը կայի. սա ես շուտով մոռանալ չեմ կարող և իմ սրտումս դաղը կը մնայ մինչև կեանքիս վերջը: Բայց ես ձեզ վերայ լաւ կարծիքի եմ, ձեր սիրտը սատանայի սիրտ չեմ համարում, այլ աղամորդու. ինջիլի (աւետարանի) հպատա-

կողմեր էք... ինձ այս անգամ կը բաշխէք, ինձ ոտի տակ միք տալ իմ նամուս գետին միք գցիլ, ինձ հանգիստ բաց թողէք: Ինչ վերաբերում է վնասին, ես հարևանիս ջանին մատաղ չի ներում ինձ, ես էլ քրտինքիցս նորան բաժին եմ հանում: բան չը կայ ուրիշ չէ, հարևանս է, թող նա օգուտի իմ ասլրանքիցը:

— Ինչպէ՞ս էք հաշտուել, գոռացին ամեն կողմից:

— Այդ աւելորդ խօսքեր են, վերայ բերաւ Սիւլեյմանը, մի կուպէկ, թէ հազար կուպէկ՝ դա ինչ ձեր բանն է, Մկրտիչը ինձ ինչքան կարողացաւ՝ նեղեց:

— Եղբա՛յր, ես ինչպէս տեսնում եմ, մէջ մտաւ դարձեալ Մարտիրոսը, մեք մեզ ու մեզ ոչինչ չենք կարողանալու վճուել. ուղարկենք մեծ տանուտէրի, գլամխու ետեւից. նա կը գայ ու ամեն բան կը կարգադրի:

— Մարտիրո՛ս, պատասխանեց դառնութեամբ Սիւլեյմանը, ես ասածներդ մոռանում եմ. ուրիշը քէն կը պահէր... հասկացողը կը հասկանայ: Ես քեզ հետ թշնամութիւն անողը չեմ:

Սիւլեյմանը տանուտէրի ականջին էլ փսփոաց: Գիւղացիները արդէն յողնել էին խօսակցութիւնից. նոքա համաձայնեցին բաց թողնել ոչխարները և հովիւներին: Մկրտիչը գնաց իւր բաժինը ստանալու:

— Ե՛հ, մեր բաները միշտ այսպէս են, ծնկներին խփելով մըր՝ մընջաց Մարտիրոսը. այսպէս լաւ դէպքից էլ՝ որ օգուտ չենք քաղում պատժելու, էլ ինչ գանգատելու տեղիք ունենք:

Սիւլեյմանը հովիւներին ճանապարհ գցեց սարը. ինքը նստեց իւր ձին, մի քանի կատաղի հարևաններ տաւ ձիուն մորակով և սլացաւ դէպի սարը:

— Այս ոչխարը, մրթմրթաց նա, ատամները կրճտացնելով, ձեզ վերայ աժան չի նստիլ. տեսնենք թէ ում ձին կը կորչի այս անիծւած գիւղից. ա՛յ թէ դէպքը այնպէս բերի, որ կաղլիկ Մարտիրոսի նոր գնած ձին ընկնի:

ԱՐՏԱՍԻՈՂ ՈՒՌԻ

Ա. ՄԻԻԹԱՐԵԱՆԻ

Երբ անհուն դարեր անշունչ, անվըրդով՝
Հողագունդն ուզեց շունչ առնել կեանքով.
Երբ լայն դաշտերում փուլեցան բոյսեր,
Լցրին կենդանիք երկիր ու եթեր.
Երբ լուռ ալիքներ կապոյտ ծովերի
Եռացին կեանքով ջրայինների
Ու մարդիկ, իբրև ամենից հըզօր,
Գարձան բըռնութեամբ նոցա թագաւոր,—
Ահա այդ օրից տիրեց աշխարհին
Շրփոթ-աղմըկի կըռւարար ոգին:

Անցան անհամար ու երկար դարեր:
Մարդիկ անբարիշտ ցերեկ ու գիշեր
Թափեցին արիւն առատ անխընայ
Իրանց հարազատ մօր կըրծքի վերայ.
Լայն և ընդարձակ աշխարհի միջին
Եղբայրը խըլեց իւր եղբօր բաժինն,
Կապեց ամրապինդ նորան շղթայով,
Ճընշեց թշուառին ըստըրկի լըծով
Եւ ամեն սարի ու քարի վերան
Գըրոշմեց կընիք անարգարութեան:

Մընող երկրագունդ— ծերունի անզօր—
 Տեսաւ այս չարիք, ըզգաց իւր սև օր.
 Եւ ահա նորա վիրաւոր սըրտից
 Ելան ուռիներ անթիւ տեղերից,
 Տըխուր տերևներ կախեցին գետին
 Ու խեղճ ծընողի ցաւերը լացին:
 Դեռ մինչև այսօր լալիս են նոքա...
 Եւ այն ո՞վ գիտէ, արդեօք պիտի գա՞յ
 Մի օր, երբ տըրտում, արտասուող ուռիներ
 Ուրախ, ժըպտերես նայէ աշխարհին:

Հ Ե Ղ Ի Ն Է

Վ Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(Նաբունակութիւն 1)

XVIII

Ժամանակը, խոցւած սրտերի այդ ամենազօր ապեղանին, զարմանալի արագութեամբ փարատում էր Վատարինէի վիշտը. օրերը զլորելով կարծես մոռացութեան անդունդն էին տանում իրանց հետ և վերջին ցաւալի դէպքն ու Վատարինէի դարձը՝ Մի շաբաթ անցած Վատարինէն արդէն իւր սովորական տրամադրութեան մէջ էր. նա այնքան հանգիստ էր, կարծես ինքը չէր, որ մի քանի օր առաջ քիչ էր մնում ցնորւի սիրտը ալէկոծող հազար ու մէկ տարբեր զգացմունքների կուլից, որի մէջ հաւասար ոյժերով ու միաժամանակ մաքառում էին և՛ յանցաւոր սէրը և՛ մի քիչ ուշ զգացւած հիասթափումը և՛ խղճահարութիւնը և՛ հին սէրը դէպի օրինաւոր ամուսինը, որ նորից սկսում էր զարթնել նորա սրտում:

—Այ բախտաւոր կին, մտածում էր Հեղինէն նայելով Վատարինէի վերայ, ի՛նչ հեշտ անցաւ դարձը:

Սկզբում շրջապատւած մարդու փաղաքշանքներով ու հոգատարութեամբ Վատարինէն համարեա տանից չէր դուրս գալիս, բայց

1) Տե՛ս «Մուրճ»-ի № 6, 7 9 10:

այդ շատ չը տեսց: Կատարինէին հրապուրում էր այն կեանքը, որին սովոր էր նա, և նա հետզհետէ անձնատուր էր լինում այդ կեանքին: Եթէ անախորժ յիշողութիւնները սկսում էին խռովել նորա հոգու անդորրութիւնը, նա իսկոյն ազատուում էր նրանցից կամ հիւր գնալով կամ աշխատելով ինքն իրան համոզել, որ անցեալը դարձնել չի կարելի, ուրեմն պէտք է օգուտ քաղել ներկայից և որ վերջապէս մեր կարճատև կեանքը նորա համար չի արւած մարդուս, որ ամեն բան իւր համար դարդ շինի:

Սահառունին այդ ժամանակ զբաղւած էր կարգի բերելով յանձնաժողովի գործերը, որի վճիռը կայանալու վերայ էր:

Սահառունու եռանդուն աջակցութիւնը կոմսի հակառակորդներին ի հարկէ չէր կարող դուր գալ «կարգին» կոչող հասարակութեան, որի համակրութիւնը՝ ինչ ասել կուզի՝ կոմսի կողմն էր: «Կարգին շրջաններում» Սահառունու մասին աննպատակ կարծիքները աւելի ու աւելի կողմնակիցներ էին զոնում. Կատարինէի վերայ սկզբում ծուռն էին նայում, յետոյ այնտեղը հասաւ, որ մինչև անգամ չէին էլ հրաւիրում իրանց տները: Կատարինէին այդ սատիկ զայրացնում էր: Որքան Սահառունին աշխատում էր նորան հանգստացնել, չէր լինում, նա շարունակում էր մեղադրել մարդուն:

Այդ յանդիմանութիւնները աւելի սաստկացան, երբ որ Սահառունիները հրաւերք չը ստացան մի խնջոյքի, որ սարքւում էր այդ զիններից մէկում ի պատիւ մի բարձրաստիճան հիւրի: Կատարինէն հետաքրքրութիւնից զնաց մի քանի ծանօթների մօտ. բոլորն էլ հրաւիրատուներ ստացել էին: Ծանօթների մօտից Կատարինէն կրակ կտրած վերադարձաւ տուն, վրայ պրծաւ մարդուն, աչքերը խփեց, բերանը բաց արեց, ինչ-ասեց ասեց ու դուռը պինդ խփելով դուրս եկաւ, զնաց Ամիրանովների մօտ:

Վացակրկնած աչքերով զրկեց նա Հեղինէին ու սկսեց գանգատուել իւր սև բախտի վերայ:

— Հեղինէ ջան, սև լինէր այն օրը, որ մայրս ինձ աշխարհ բերեց. լաւ էր սկի ծուած չը լինէի ու իմ կուրացած աչքերով այս օրը չը տեսնէի... Տեղից վեր կենողը զովում էր մարդուս խելքը. չը լինէր այդ խելօքութիւնը, որ ինձ պէտք է ողջ-ողջ գերեզման զներ... խելքը գլխին մարդը այդպէս բան կը բռնի... ասում եմ, խօսքիս ականջով

դնում... Հեղինէ ջան, յոյսս քեզ վերայ է, էլի թէ լսի՞ քեզ կը լսի, քեզ շատ է յարգում, հասկացրու որ այդպէս չի լինի...

Ինչ է եղել, հոգիս, ասա, ես էլ իմանամ. դու սխալ հասկացած կը լինես. որքան ես ճանաչում եմ Գէորգի Ալեքսանդրովիչին, նա անկարգ բան չի բռնի, հանգստացնում էր նորան Հեղինէն, զլսի ընկնելով թէ բանն ինչու՞մ է:

—Է՛հ, էլ ինչ ասեմ. ամբողջ քաղաքը այնտեղ կը լինի. բացի մեզնից բոլորն էլ հրաւիրւած են խնջոյքին... Մի ամիս է խօսում են այդ քէֆի մասին և յանկարծ... ինձ մինչև այժմ ամեն տեղ զրկաբաց էին ընդունում, իսկ այժմ... է՛հ, աւելի լաւ է քաշենք մի գիւղ, գիւղում ապրենք: Շատերը մինչև անգամ զլուս էլ չեն տալիս ինձ, չեն ուզում բարևել:

—Արժի միթէ այդ բանին այդքան մեծ նշանակութիւն տալ, դարմացած ասաց Սննա Գուրգէնեանը:

Կատարինէն, որ չէր նկատել օրիորդին, խոժոռ հայեացք գցեց նորա վերայ:

—Ես հաւատացած եմ, որ Գէորգի Ալեքսանդրովիչը մեղաւոր չէ. նա հօ դիտմամբ չի արել քեզ վշտացնելու համար, շարունակեց Գուրգէնեանը բռնելով Կատարինէի ձեռները:

—Միթէ՞, Կատեա, կուզէիր, որ քո մարդն էլ ուրիշ տղամարդկանց պէս վախկոտ լինէր:

—Ինչու չես փիլիսոփայութիւն անի, քեզ ի՛նչ, ում ինչ լինի— լինի, քեզ ոչինչ չի լինի, բարկացած պատասխանեց Կատարինէն, նայելով հրաւիրատուին, որ դրած էր սեղանի վրայ:

—Է՛հ, դարդ մի արա, թող իրանց համար ինչ ուզում են անեն. ես էլ չեմ գնայ խնջոյքին. միասին կ'երթանք նւագահանդէս ու նրանցից աւելի ուրախ ժամանակ անց կը կացնենք:

—Ի հարկէ, ուրախ-ուրախ վրայ բերեց Գուրգէնեանը:

—Ձէ՛, Հեղիկ, ես այդքան անսիրտ չեմ, ինչու դու իմ պատճառով զրկես խնջոյքից. գնա, վաղը ինձ ամեն բան մանրամասն կը պատմես. ականջդ լաւ սրի, տես մեր մասին ինչեր են ասում...

—Որ միլիոն էլ տան՝ չեմ երթայ. ես քեզ հետ պէտք է լինեմ, ընդհատեց Կատարինէի խօսքը Հեղինէն՝ ձեռքը բերնին դնելով: Մի բան՝ որ ես ու դու սարել չենք կարող, աւելցրեց նա ծի-

ծաղեկով, մանաւանդ զու. էհ, այնքան էլ անձուռնիացել ենք, որ ոչ ոք չի ուզենայ մեզ հետ երկար ու բարակ նստել-խօսել, հաճոյախօսութիւններ ասել, ուրեմն էլ ինչ պէտք է անենք այնտեղ: Մտիկ տալ կողքի այգուցն էլ կարող ենք:

—Այդ ի՞նչ. այդ չի իմ դարդս: Ծանօթների ստեկօսէներին ի՞նչպէս զիմանամ. ամբողջ քաղաքի ծիծաղատեղ կը դառնանք. տանից զուրս դալ չեմ կարողանայ, համարեա լացակրկնած ասաց Կատարինէն:

Ձը գիտեմ ինչպէս քեզ հաւատացնեմ, որ այդ կասկածներդ բոլորովին զուր ու անհիմն են:

—Ի հարկէ, մէկ—երկու օր կը խօսեն ու յետոյ իրանց-իրանց կը դադարեն, վրայ բերեց Գուրգէնեանը. ինչ ասեմ քեզ, որ այդպիսի չիմար բաներին ուշք ես դարձնում:

—Չ'արժի մինչև անգամ խօսել զորա մասին, աւելի լաւ է գնանք պարտէզը մանգալու, ասաց Նեղինէն բռնելով Կատարինէի ու Աննայի ձեռքը:

Հէնց նրանք վերկացան տեղներիցը — ներս սփան Ամիրանովն ու Ասունին:

—Սաստիկ յոգնել եմ, Նեղինէ, ասա թող մի բան տան ու տելու:

—Այս երեք օրը, Միշէլ, քեզ համարեա չեմ տեսնում, ամբողջ օրը կոմսի գործերով դէս ու դէն ես վազվզում:

—Ինչ արած, բանն այդպէս պատահեց. այդ ոչինչ, բայց տես ինչ հիանալի խնջոյք է զուրս գալու:

—Ի՞նչ հրաւառութիւն կը լինի. մի խօսքով, հրաշալի՛ բան: Երանի ձեզ, mesdames, երեկոյեան կարգին կը զւարճանաք, իսկ ես՝ խեղճս, զրկւած եմ զորանից. ինձ մնում է միայն վանդակապատի յետևից նայել ձեզ վերայ և ուրախանալ, տեսնելով թէ ինչպէս դուք ձեր զեղեցկութիւնով կը նսեմացնէք ուրիշ տիկիներին փայլը:

Միամիտ կացէք, Ալէքսանդր Աստիլիչ, մենք այնտեղ չենք լինիլ, իսկ հաճոյախօսութիւններդ աւելի լաւ կ'անէք՝ պահէք աւելի յարմար ժամանակաց համար, ծիծաղելով ասաց Նեղինէն:

Նա տեսնում էր, որ այդ խօսակցութիւնը ապաղաչ խնջոյքի մասին շատ վատ է ներգործում Կատարինէի վերայ, և աշխատում էր մի կերպ խօսակցութեան նիւթը փոխել:

—Միթէ՞ ձեզ չեն հրաւիրել, եկատերինա Իւանովնա, հարցրեց Ամիրանովը դատարկելով գինու բաժակը:

Կատարինէն գլուխը թափ տւեց ու սկսեց զայրացած սրտով պատմել, թէ մարդը ինչպէս դեռ իւր ծննդավայրում—Ե-ում—իւր անխոհեմ վարմունքի շնորհիւ անբաւականութիւններ էր ունենում ծառայակիցների ու աղաների հետ:

—Է՞, շա՞տ բան կարողացաւ անել:

—Միայն այն արեց, որ թշնամիներ վաստակեց ու հասարակական կարծիքը իւր դէմ գրգռեց:

—Այտեղ էլ նոյնը կը լինի, միսիթարեց նորան Ամիրանովը:

Լեղինէն բարկութիւնից շրթունքները ծամում էր, լսելով այդ խօսակցութիւնը:

Այդ րոպէին ներս մտան Սահառունին, Քոմսաւն ու Պետրոսեանցը: Ամիրանովը սառը-սառը ընդունեց նրանց ու իսկոյն դուրս եկաւ սենեակից: Կատարինէն այնքան գրգռւած էր մարդու դէմ, որ չէր ուզում մինչև անգամ տեսնել նորան: Նա կուռը գցեց օրիորդ Գուրգէնեանի թիւն ու դուրս եկաւ, գնաց պատշգամբը: Քոմսաւն ու Պետրոսեանցը հետևեցին նրանց: Սահառունին այնպիսի ակնարկ գցեց Լեղինէի վերայ, որ պարզ ցոյց էր տալիս, թէ նա եկել է նորա մօտ սիրտը հանգստացնելու համար:

—Տիգրան Աւետիշ, կարո՞ղ էք ինձ տուն հասցնել: Պետրոսեանցը ուրախութեամբ կատարեց Կատարինէի խնդիրքը:

Քոմսաւն ու օրիորդ Գուրգէնեանը մենակ մնացին պատշգամբում:

—Ի հարկէ, Աննա Արտեմիւհնա, կ'երթաք խնջոյքին:

Նա թափ տւեց գլուխը:

—Ինչո՞ւ չէ. ա՛յ տիկին Լեղինէի հետ կարող էիք գնալ:

—Նա կարծեմ չի գնալու: Ասենք եթէ գնալու էլ լինէր՝ միևնոյնն է, ես չէի գնայ:

—Ինչո՞ւ:

—Ի՞նչպէս հիւանդ մօրս մենակ թողնեմ տանը ու գնամ խնջոյքի, որ՝ ով է իմանում՝ երբ կը վերջանայ... հիւանդին քաղցր քնից զրկեմ, մինչև կէս գիշերից անց սպասել տամ թէ ինչ է՝ ես պետք է զլարճանամ. մէկ էլ որ...

Օրիորդը լռեց հագուստին վերաբերեալ դժուարութեան մասին,

բայց թոմաեւը հասկացաւ: Նորա խեղճն եկաւ, որ օրիորդը այդպէս ջահէլ հասակում ենթարկուում է նիւթական զրկանքների:

Գուրգէնեանը նկատեց այդ:

—Էհ, բան չը կայ, դարդս հենց այդ լինէր, էլ ոչինչ չէի ուզիլ: Նորա աչքերի մէջ այնպիսի անկեղծ ուրախութիւն էր փայլում, որ թոմաեւի սիրտն էլ բացւեց նայելով նորան:

—Չը գիտէ՞ք, Դաւիթ Աբրամիչ, ինչո՞ւ է Սահառունին այսօր այդպէս տխուր:

—Ով որ իւր կեանքի նպատակը կուելումն է տեսնում, միշտ տոճոհ կը լինի թէ իրանից, թէ ուրիշներից: Հիանալի մարդ է Սահառունին, հազազիւտ մարդ է, ափսոս որ շատ չափշտակող է:

—Ինձ դուր են գալիս այդպիսի մարդիկ, ես սիրում եմ այն կրակը, որ ոգևորում է նրանց, չափշտակութեամբ ասաց Գուրգէնեանը ու կարմրեց:

Թոմաեւը աչքը չէր հեռացնում նորա ոգևորած դէմքից:

—Շատ հասկանալի է, որ ձեզ դուր են գալիս այդպիսիները: Դուք դեռ անփորձ էք և չը գիտէք, որ մեծ նպատակների ձգտող մարդիկ հազարից մի դէպքում, այն էլ միայն բարեցաջող պայմաններում են յաջողութիւն ունենում:

—Որովհետեւ անուշադիր են թողնում առօրեայ կեանքը, շատ անգամ չնչին իրականութիւնը...

—Այո, մասամբ և այդ պատճառով: Թողնենք Սահառունուն, ընդհանրապէս խօսենք: Ում կուզէք հարցրէք, բոլորն էլ կ'ասեն, որ անհասանելի բարձր նպատակների յետեւից ընկնող մարդիկ հասարակութեանը ոչինչ օգուտ չեն բերում: Ոմանք զրգուում են վսեմ զգացմունքներից, ոմանք էլ սխալ հասկացած պարտաճանաչութիւնից ու փառք վաստակելու ցանկութիւնից, և բոլորն էլ բարձր նպատակների դիմելիս՝ այդ նպատակներին տանող ճանապարհի վերայ չեն նկատում շատ ուշադրութեան արժանի բաներ և այդպիսով վատնում են իրանց՝ շատ դէպքում՝ նշանաւոր՝ ոյժերը ապարդիւն կերպով ու զերեզման են իջնում առանց իրականացնելու իրանց վսեմ գաղափարները:

Օրիորդը կարծես կիսով չափ համաձայնում էր թոմաեւի կարծիքին:

—Կը նշանակի, ձեր ասելով, այդպիսիները մարդկային գործու-

նէութեան ասպարէզում ոչ մի հետք չե՞ն թողնում, զրօ՞ են...

—Ի հարկէ, վրայ բերեց Քոմսեւը անսովոր ոգևորութեամբ, համեմատելով այնպիսի մարդկանց հետ, որոնք համեստ և բարեխիղճ կերպով ծառայում են գիտութեանը և այն հասարակութեանը, որի մէջ իրանք ապրում են:

—Լաւ. բայց չէ որ նախապաշարմունքներից ազատ և կրթւած մարդը պէտք է իւր համոզմունքների համաձայն վարւի ու աշխատի գործ դնել իւր գիտութիւնը, ուրեմն և պէտք է կուլի:

Քոմսեւը զմայլած լսում էր օրիորդի ոգևորւած խօսակցութիւնը, որի դէմքը հետզհետէ աւելի ու աւելի աշխոյժ էր ստանում և աչքերը աւելի ու աւելի վառւում էին ոգևորութեան կրակով:

—Բանն հենց նորանումն է, Աննա Արտեմիւսեանա, որ մարդ պէտք է հասկանայ թէ որտեղ և երբ պէտք է գործադրի իւր գիտութիւնը, թէ չէ զոնքիշոտութիւն դուրս կը գայ:

—Այ՛ ս՛րտեղ են, միաձայն բացականչեցին Հեղինէն ու Սահառունին:

—Գնանք թէյ խմենք, առաջարկեց տանտիկինը, և բոլորն էլ գնացին սեղանատուն:

—Իսկ Սկատերինա Իւանովնան ո՛ւր է, հարցրեց Ամիրանովը:

—Պետրոսեանցի հետ տուն գնաց, պատասխանեց Սահառունին:

Զե՛ս ամաչում, Գէորգ, ինչո՞ւ ես ցաւացնում կնոջդ հրեշտակային բարի սիրտը, արտասանեց Ամիրանովը՝ դժւար է ասել յանդիմանօրէ՛ն թէ կատակով:

Սահառունին դառը ժպտաց ու նայեց Հեղինէին:

—Է՛հ, բարեկամ, նորից դիմեց նրան Ամիրանովը, ջուր ծեծելով բան չի դուրս գայ:

—Միքայէլ, զուր լեզուդ մի ցաւացնիլ, Գէորգը ամեն միջոց գործ կը դնի իւր ցանկաճացը իրադործելու համար. մարդը այդպէս է ծնւել, գլխին հազար աւետարան էլ կարդաս, իւր ասածից յետ չի կենալ, մտերմաբար պատասխանեց Ստունին: Ամեն մարդ մի սեւակ չի լինի. ա՛յ, մենք կոււելու համար չենք ծնւած ու չենք էլ կոււում:

—Պարոններ, հետաքրքիր է իմանալ թէ ինչ էք ուզում ասել ձեր յարձակումներով. եթէ կոմսի գործը աչքի առաջ ունէք, ինձ

շատ զարմանալի ու անհասկանալի է թուում ձեր բռնած զիրքը: Ուզո՞ւմ էք գործը առաջւայ անորոշ զրու-թեան մէջ թողնենք: Ինքզ ասա, Միքայէլ, եթէ շանձնաժողովները այդ տեսակէտով առաջնորդեն իրանց գործավարութեան մէջ, արդեօք համապատասխան կը լինեն նոքա իրանց կոչմանը և այն նպատակին, որի համար նոքա նշանակուում են:

—Տեսնենք զուք ինչ կ'ասէք, Գաւիթ Աբրամիչ, այս հարցի մասին, զիմեց Ամիրանովը Քոմսեւին, որ ամենեւին չէր սպասում, թէ նա իրան այդպիսի հարց կ'առաջարկի:

—Իմ ասելիքս նոր բան չէ: Գործը՝ համարեա անկասկած՝ կոմսի օգտին կը վճոււի, բայց եթէ խելք ու զիրք ունեցող մարդիկ՝ փոխանակ փախուստ տալու այդ շանձնաժողովին մասնակցելուց՝ աներկիւղ յայտնէին իրանց համոզմունքը, արդարութիւնը անշուշտ կը յաղթէր:

Ամիրանովը աւելորդ համարեց պատասխանել:

Հեղինէն գիտէր որ Քոմսեւը գլխաւորապէս իւր մարդուն էր ակնարկում, բայց փոխանակ բարկանալու Քոմսեւի վերայ, նա յանդիմանական հայեացք գցեց մարդու վերայ և տհաճութեամբ շրթունքներն ոլորեց:

Ամիրանովին մի բանի համար դուրս կանչեցին: Հեղինէն մեքենայաբար դուրս եկաւ նորա յետեւից: Երբոր երկուսով մենակ մնացին, նա սկսեց ապացուցանել, որ Քոմսեւը ճիշտ էր ասում:

—Խնդրեմ չը խառնուես այդ գործին, այդ քո բանը չէ, խըստութեամբ ու բարձրաձայն կտրեց նորա խօսքը մարդը:

Այդ բոպէին ներս մտաւ կին դերձակը:

—Ա՛յ փոխանակ խօսելու, աւելի լաւ կ'անես՝ գնաս, պատրաստութիւն տեսնես երեկոյեան խնջոյքի համար. որքան կարող ես լաւ հազնւիր, աւելի մեղմ ձայնով աւելցրեց նա:

—Քեզ ասացի, որ չեմ գնայ:

—Ա՛յդ ի՞նչ է: Անկարելի բան է, անպատճառ պէտք է գնաս, ես արդէն կոմսին ասել եմ, որ զու կը լինես, հրամայական եղանակով ասաց Ամիրանովը և պատուիրեց աղախնին դերձակուհուն տանել կնոջ ննջարանը:

Այդ եղանակով արտասանւած խորհուրդը Հեղինէի մտադրու-

Թիւնը ի հարկէ չէր կարող փոխել, մանաւանդ որ նա գիտէր, որ մարդը կոմսին դուր գալու համար է աշխատում նորան անպատճառ տանել խնջոյքին:

— Խնդրեմ այսուհետև նեղու թիւն չը կրես, իմ տեղակ ուրիշներին խօսք չը տաս, սառը-սառը պատասխանեց նա ու դարձաւ զնաց հիւրերի մօտ:

Թէչից յետոյ, երբ որ հիւրերը ցրւեցին, Հեղինէն զնաց իւր սենեակը և, պառկելով բազմոցի վերայ, մտքի հետ ընկաւ: Մէկ տեղափոխուում էր նա մտքով այն ժամանակը, երբ նա անց էր կացնում իւր կուսութիւնը քեռու տանը, և քաղցր յիշողութիւնների մէջ զարթնում էր սիրելի Նիկողայոսի անգին պատկերը, մտաբերում էր նա Նիկողայոսի վսեմ հայեացքը ամուսնութեան վերայ... «սիրով, բարեկամութեամբ, ընդհանուր նպատակներով ու գաղափարներով կապուած երկու էակների ներդաշնակ միութիւն»... Մէկ էլ սկսում էր մտածել իւր մարդու զնացած ընկերուհիների մասին, — սա ու սա իրանից բախտաւոր են ամուսնութեան մէջ, իսկ այս միւսները աւելի անբախտ են... յետոյ կանգ առաւ Կատարինէի վերայ և դեռ առաջին անգամ նախանձեց նրան: Այ բախտաւոր կին, այ նորա մարդն է իսկապէս լաւ մարդ՝ բառի բուն իմաստով, մտածեց Հեղինէն ու նորից անցաւ միւս ընկերուհիներին, որոնք՝ նորա կարծիքով՝ հաշտ էին ապրում իրանց ամուսինների հետ, իսկ ես... ինչով եմ ուրիշներից վատ, ինչով եմ մեղաւոր, որ բախտս ինձ այսպիսի վիճակի է արժանացրել... Իսկուհի հեզութիւն փայլեց նորա դէմքի վերայ:

— Հեղինէ, քնած չե՞ս, սթափեցրեց նորան Ամիրանովի ձայնը:

Նա բաւական ժամանակ էր, ինչ մտայոյզ ման էր գալիս դահլիճում, աշխատելով մի հնարք գտնել կնոջը խնջոյքին տանելու համար, վերջապէս կանգ առնելով ննջարանի դրան մօտ ու, մի քանի րոպէ այդպէս մնալուց յետոյ, նա վճռեց դիմել խաբէութեան:

• — Ներիր, Հեղինէ, որ չը կարողացայ բարկութիւնս զսպել, շողոքորթութեամբ ասաց նա, համբուրելով կնոջ ձեռքը: Հը, կապրի զըդ դեռ չի՞ նստել, չե՞ս ուզում հազնել:

— Ես չեմ կարող զնալ, առաջինը այն պատճառով, որ Կատարինէին խօսք եմ տուել նւագահանդէսին զնալու, իսկ երկրորդը՝ որ սկար եմ:

—Այ, հէնց քո ընկերուհու օգուտն ի նկատի ունենալով, պէտք է ուշադրութիւն չը դարձնես տկարութեանդ վերայ ու զաս գնանք խնջոյքին: Ես առաջ էլ ուզում էի քեզ հետ խօսել այդ բանի մասին: Կոմսը սաստիկ զայրացած է Սահառունու դէմ. կարող է սաստիկ վնասել նրան ծառայութեան մէջ. մտածիր, թէ ինչ կը լինի այն ժամանակ քո փոքրոզի ընկերուհու օրը:

Հեղինէն հարցական հայեացքով նայեց մարդուն:

—Ինչպէս տեսնում եմ, ինձ չես հասկանում, ինքնավստահ կերպով շարունակեց Ամիրանովը: Այսօր կոմսը այնպիսի ուրախ, քաղցր տրամադրութեան մէջ էր, որ շատ կարելի է այսօր ինձ յաջողի հեշտ ու հանդիստ յանձնաժողովի գործը վերջացնել այնպէս, որ երկու կողմն էլ գոհ մնան:

—Ինձ թւում է, որ այդ բանում իմ ներկայութիւնը ոչինչ նշանակութիւն չունի:

—Իսկ ես շատ հիմնաւոր պատճառներ ունեմ, հոգիս, որ չեմ ուզում առանց քեզ գնալ:

Հեղինէն սկզբում կասկածանքով վերաբերեց մարդու խօսքերին, բայց նորա դէմքի արտայայտութիւնը ու խօսելու տոնը այնքան համոզիչ էին, որ նա հաւատաց նրան ու համաձայնեց հետը գնալ խնջոյքին:

Մէկ ու կէս ժամ անցած, նոքա արդէն այգումն էին, որ այդ օրը հիանալի կերպով զարդարւած ու լուսավառւած էր:

Կոմսը վերին աստիճանի սիրալիր կերպով ընդունեց Ամիրանով-ներին:

Հեղինէին միշտ զգւանք էր պատճառում կոմսի վաւաշտ քծնութիւնը, իսկ այդ օրը այդ նորան աւելի էր զայրացնում, այնպէս որ վերջապէս նա, չը կարողանալով դիմանալ, վճռեց տուն գնալ: Նա մարդուն ասաց, որ սաստիկ յոգնել է, ուզում է տուն գնալ:

—Սպասիր, հոգիս, չի կարելի, կոմսը քեզ խնդրել է մազուր-կայի, ասաց նա կնոջ ականջին:

—Քիչ է մնում սկսեմ կարծել, որ դու, կոմսին դուր գալու համար, իմ առողջութիւնս էլ կը զոհես, զայրացած ասաց Հեղինէն, պինդ փաթաթելով շրջագոստի մէջ:

Միւս օրը առաւօտեանից Հեղինէի գլուխը ցաւում էր, իսկ

երեկոցեան այնպիսի տխրութիւն եկաւ վրան, որ չէր իմանում որ դժոխքը կորչի. աշխատում էր մի բանով զբաղուել, որ իրան տանջող մտքերը ցրուեն, բայց անօգուտ, — ոչինչով չէր կարողանում պարապել:

— Գոնէ Գէօրգի Ալեքսանդրովիչը կամ նորա ընկերներից մէկն ու մէկը գար, անցաւ նորա մտքովը և իսկոյն նա լսեց զանգակի ձայնը:

— Հէնց այս րոպէին ձեզ վերայ էի մտածում, ասաց Հեղինէն, դուր բաց անելով Սահառունու առաջ:

— Միթէ՞ դուք երբ և իցէ մտաբերում էք ինձ, պատասխանեց Սահառունին ուրախ ժպիտով, ուշադրութեամբ նայելով Հեղինէի գունատ դէմքին:

— Միթէ դուք չէիք իմանում մինչև հիմա, որ ես յաճախ եմ մտաբերում իմ բարեկամներին: Կատեան ի՞նչպէս է, հանգստացե՞լ է: Երէկ երեկոց նա սկի մտքիցս չէր հեռանում: Սիրոս սկի չէր ուզում փնալ, բայց մարդս շատ խնդրեց:

Սահառունին ոչ ոքի մօտ կնոջից տրտունջ չէր յայտնում, բայց Հեղինէի առաջ սիրտը բաց արեց:

— Երևակայել չէք կարող, թէ ինչ դժարութեամբ, ինչ չարչարանքներով երէկ հազիւ հազ կարողացայ նորան հանգստացնել: Զը գիտեմ, լսա՛չք, թէ ինչ անեմ, ինչպէս վարեմ հետը: Օտար մարդու ծիծաղը կը զայ, տեսնելով թէ ինչ դատարկ բաների համար է սուգ ու շիւան դնում:

— Խե՛ղճ մարդ, մտածեց Հեղինէն, ամբողջ կեանքը անց է կայնում հասարակութեան ու կնոջ հետ կուշտով:

— Փամանակ տւէք Կատեային ուղղելու. լսեղճը այն աստիճան սովորել է դատարկ կեանքին, որ չի կարող միանգամից ձեռք քաշել նորանից. համբերէք մի քիչ և կը տեսնէք, որ նա շուտով դէպի լաւը կը փոխուի:

• Սահառունին կասկածանքով գլուխը թափ տւեց:

— Գուք անարդար էք վերաբերում դէպի ձեր կինը. նա շատ բարի է և վերջին ժամանակները նա շատ լրջացել է:

— Լաւ, տիկին Հեղինէ, չեմ վիճի և կ'ասեմ ձեզ իբրև իմ ու Կատարինէի ընդհանուր բարեկամին, որ երբեմն-երբեմն նա փոխուում է դէպի լաւը, բայց դժբախտաբար այդ երկար չի տևում, որովհետև

ամեն մի միտք, ամեն մի նոր զգացմունք, վայրիվերոյ սահելով, անցնում է առանց թափանցելու նորա հոգու խորքը:

—Նստ զէպքերում այդ շատ լաւ է, Գէորգի Ալեքսանդրովիչ, մտահոգութեամբ ասաց Հեղինէն: Նստ անգամ երանի եմ տալիս, նախանձում եմ այնպիսի մարդկանց, որոնք ամեն բանի թեթիւ են վերաբերում:

Սահառունին հասկանում էր, թէ ինչ էր ուզում ասել Հեղինէն, և մտերմաբար նայեց նորան:

—Գիտէ՞ք, — ծանր շունչ քաշելով շարունակեց նա, — թէ ինչ անտանելի բան է այն կանանց վիճակը, որոնք, հիասթափելով իրանց իդէալներին, ստիպւած են ծածկել իրանց համոզմունքները և ուրիշի կենցաղավարութեանը յարմարելու համար՝ ծուել, թեքել իրանց բնաւորութիւնը, լալով-ողջալով իրանց սե բախտը:

Սահառունու սիրար կրակում էր, լսելով Հեղինէի խօսքերը. նա ուզում էր մխիթարել նորան, բայց չը կարողացաւ ոչինչ ասել:

Հեղինէն նկատեց որ Սահառունին հասկացել է իւր միտքը և աւելի տխրեց: Նրան աններելի էր թւում այդպիսի թուլութիւն իւր կողմից. նա չը պէտք է այդպէս աշխարայ յայտնէր իւր ցաւերը ուրիշին:

Սահառունին հասկացաւ նոր մտատանջութեան պատճառը և ողբորւած ասաց:

— Ինչո՞ւ տխրեցիք, տիկին Հեղինէ. միթէ՞ այս առաջին անգամն է, որ մենք անկեղծ խօսում ենք իրար հետ, միթէ՞...

Հեղինէն կարմրելով ընդհատեց նորա խօսքը:

— Նշանակութիւն մի տւէք իմ խօսքերին, ես կարծեմ տաքանում եմ, սկի ինքս էլ չեմ իմանում, թէ ինչ եմ ասում... ներեցէք, ես մի բոպէ ձեզ մենակ կը թողնեմ...

Հեղինէն հպարտ էր և կը մեռնէր՝ ու ոչոքի առաջ չէր խոստովանւի, որ ինքը անբախտ է. բայց ճշմարտութիւնը այս անգամ էլ, ինչպէս շատ անգամ Սահառունու հետ խօսելիս, նորա կամքի հակառակ թաւաւ նորա բերնիցը... Նա պէտք է մենակ մնար, որ կարողանար ուշքը գլուխը հաւաքել:

— Ա՛խ, սիրելիս, նորա զնալուց լետոյ մտածեց Սահառունին, եթէ իմանայիր թէ որքան քեզ սիրում եմ, այդպէս չէիր քաշւի ինձանից:

Տասը բույէից յետոյ Հեղինէն վերադարձաւ ընդունարանը:

—Ներեցէք, Ռէօրգի Ալեքսանդրովիչ, աւելի հանդարտ ձայնով ասաց նա, ես կարծեմ անբաղաքավարի վարեցի ձեզ հետ, ձեզ կարծեմ չիմար բաներ ասացի, բանի տեղ մի դնէք:

—Ինչո՞ւ վախեցաք, աիկին Հեղինէ. ինչո՞ւ էք մոռանում, որ ես ձեր բարեկամն եմ և հոգով-սրտով ձեր բարին եմ ցանկանում, զգացած արտասանեց Սահառունին, բռնելով նորա ձեռքը:

Հեղինէն մի քիչ հանգստացաւ, քաղցրութեամբ նայեց նրան ու, նորից խօսքը զցելով Կատարինէի մասին, սկսեց խօսել նորա ամենահամակրելի յատկութիւնների մասին:

—Ի՞նչ է, ինչպէս երևում է, մարդը արդէն սկսել է անտանելի դառնալ, հոգիս քաղում է, որ տեսնում եմ նորան անբախտ վիճակում, մտածում էր Սահառունին տուն գնալիս և զայրոյթ զգաց դէպի Ամիրանովը, որ չէր խնայում այդպիսի սուրբ էակին:

XIX

Օր օրի յետեից անցնում էր, բայց խաղաղութիւնը չէր վերականգնում Սահառունիների ընտանեկան կեանքում: Հասկանալի է, թէ որքան ծանր էր այդ Սահառունու համար, բայց գոնէ այս անգամ նա մի քիչ աւելի հեշտ էր տանում այդ ցաւը, որովհետև այն մխիթարութիւնը, որ նա վնասում և չէր գտնում ընտանեկան կեանքում, այս անգամ նա կարող էր գտնել հասարակական կեանքում:

Հայ հասարակութեան մէջ նկատում էր մի արտասովոր շարժում և ուրախութիւն: Պատճառը թեմական դպրոցի կանոնադրութեան վերջնական հաստատութիւնն էր: Նոր կանոնադրութեան համաձայն՝ դպրոցի նոր հոգաբարձուներին ժողովուրդն էր ընտրել: Նորընտիր հոգաբարձուները, բարեխղճօրէն վերաբերելով իրանց պարտականութիւններին, սիրով յանձն առնելով այդ համակրելի գործը, արդէն մեծ եռանդով սկսել էին գործել: Առաջին գործը, որ նոքա պէտք է կատարէին, բարենորոգումների գործադրութիւնն էր, որ այդքան ժամանակ անհամբեր սրտով սպասում էր հասարակութեան ամենալաւ մասը և օրի համար ոչ մի ջանք չէր խնայում երիտասարդութեան առաջաւոր մասը:

Սահառունին, որ 12 նորընտիր հոգաբարձուներէ թւումն էր և բոլորովին անձնատուր էր եղել այդ հասարակական գործին, այնքան էլ չէր զգում ընտանեկան տարածայնութեան դառնութիւնը:

Մի օր եպիսկոպոսի մօտից, որի մօտ նա գնացել էր դպրոցին վերաբերեալ գործի համար և որ շատ լաւ էր ընդունել նորա առաջարկութիւնը, նա սաստիկ յոգնած, բայց և շատ ուրախ վերադարձաւ տուն:

— Կատեա ջան, մի բաժակ զինի ու մի քիչ ուտելու բան տուր, իսկ ես դորա փոխարէն քեզ կ'ուրախացնեմ լաւ համբաւներով:

— Զանգը տուր, կը բերեն, սառը-սառը պատասխանեց կինը ու խորասուզեց իւր ասեղնագործութեան մէջ:

— Ներիր, խնդրեմ, որ համարձակեցի քեզ անհանգստացնել, ասաց մտրղը ձեռը տանելով զէպի զանգակը ու միայն այդ ժամանակ նկատեց, որ կինը սաստիկ տխուր է:

— Սա, խնդրեմ, էլ ի՞նչ է դիպել քեզ:

— Որիորդ Միհրանեանները նոր այտոեղ էին, ասում էին այսօրէ գուց տեղիցդ կը զրկուես. ի՞նչ կը լինի այն ժամանակ մեր օրը:

— Հանգստացիր, Կատեա, սուտ է: Ճիշտն ասած, չեմ ուզում սիրտդ ցաւացնել, թէ չէ վաղուց թողած կը լինէի պաշտօնս. այդ պաշտօնը ինձ շատ բանում է արգելք լինում:

— Ինչ ուզում ես, արա. ինձ ինչ ես մտիկ անում, մի բան որ դու վաղուց ինձ չես սիրում: Բաւական չէ ինչքան թուք ու մութ կերայ, պէսք է հացի կարօտ մնամ... արտասուեց Կատարինէն ու ձեռի գործը վայր գցեց:

Ոչ մի բան Սահառունուն այնքան չէր վրդովում, որքան կանանց արտասուքը. նա չէր կարողանում դիմանալ կանացի լացին, թէև դիտէր, որ կանայք շատ անգամ ամենազատարկ պատճառներից ու մինչև անգամ կապրիզից են լաց լինում: Կնոջը թեք գցելով բազմոցի վերայ, նա սկսեց մխիթարել նորան, սիրտ տալ, բայց նա լացը չէր կորում:

Այդպիսի դէպքեր աննշան փոխակերպութիւններով այնուհետև համարեա ամեն օր կրկնում էին: Կատարինէի կապրիզներին, արտասուքին, քմահաճութիւններին վերջ չը կար, բայց Սահառունին ինքն իրան մխիթարում էր, թէ այդ բոլորը երևի շուտով կ'անցնի,

կը պրծնի: Նա զիտէր, որ կանայք երկհոգիս ժամանակ գազազուում են, ու համբերութեամբ տանում էր ամեն բան, շուտով հայր դառնալու ուրախ յոյսով:

Մի օր ճաշից յետոյ նոցա մօտ եկաւ Քոմսեւը:

—Հազիւ հազ եկաք. ինչո՞ւ էք այդպէս ուշ-ուշ գալիս մեզ մօտ, յանդիմանելով բարեւեց Վատարինէն:

Քոմսեւը կմկմաց ու ինչ-որ մի աննշան պատճառ բերեց արդարանալու համար, թէև իսկպպէս նա ուշ-ուշ էր այցելում նրանց բոլորովին ուրիշ, աւելի լուրջ դրդումից: Եթէ նա չէր յաճախում Սահառունիների մօտ, որոնց տանը նա միշտ մեծ հաճութիւն էր զգում, այդ նրանից էր, որ՝ նորա կարծիքով՝ Վատարինէի ու Տրուսիցիու մէջ պատահած դէպքից ու այդ դէպքի ծագեցրած ասէկօսէներից յետոյ, կողմնակի մարդկանց ներկայութիւնը Սահառունիների տանը աւելորդ ու ծանր պէտք է թւէր: Նորա խորին համոզմունքով, ամուսնական կապը, ամուսինների յարաբերութիւնը անմատչելի սրբալայր պէտք է լինի կողմնակի մարդկանց համար:

—Ներեցէք, ծուլութիւնն էր պատճառը, եկատերինա Խաւնովնա, այժմ տեղը կը հանեմ, այնքան շուտ-շուտ կը գամ, որ կը ձանձրացնեմ ձեզ, ինքներդ կը խնդրէք, որ մի քիչ թանկ ծախեմ այցելութիւններս, ասաց Քոմսեւը շփոթութիւնիցն ազատելով, և ծուլութեամբ ընկաւ բազկաթռօի վերայ:

—Լաւ, տեսնենք:

Սահառունին հասկանում էր, որ Քոմսեւը աշխատում է ծածկել Վատարինէից իւր ուշ-ուշ այցելելու պատճառը և ցոյց տալ իբր թէ ոչինչ փոփոխութիւն չի կատարել նոցա յարաբերութիւնների ու դրութեան մէջ: Սահառունին ի հարկէ չէր կարող չը գնահատել իւր ընկերոջ բարեսրտութիւնը և ինքն էլ աշխատում էր օգնել նրան, խօսքը փոխել ուրիշ բանի վերայ:

—Հրաշալի եղանակ է, դուրս գանք զբօսներու, հազիր այսօր նազահանդէս էլ կայ «Լնտանեկան այգում», առաջարկեց նա:

—Շատ լաւ, մանաւանդ որ յայտարարութեան մէջ տպւած ծրագրին նայելով, շատ լաւ նազահանդէս պէտք է լինի: Պետրոսեանցն ու Ասունին էլ էին ուղում գալ ձեզ մօտ. սպասենք, նոքա էլ գան ու բոլորով միասին դուրս գանք տանից:

—Աւելի լաւ, նոքա էլ որ գան, աւելի ուրախ կը լինի, վրաց բերեց Կատարինէն ու դնաց պատրաստելու:

Մի ժամ անցած, նոքա բոլորով այգումն էին և շատ լաւ ժամանակ անցկացրին:

Վերադառնալիս Սահառուներին անբախտութիւն պատահեց: Կառքի ձիերը, ինչպէս երևում էր, խամ էին, գլուխները տարան: Այդ ամենից առաջ նկատեց Պետրոսեանցը, որ ընկերների հետ կառքով դնում էր նոցա յեռուից, ու, առանց երկար ու բարակ մտածելու, թռաւ կառքից: Վայր ընկնելուց նորա ոտը դուրս ընկաւ, այնպէս որ ընկերները հազիւ հազ կարողացան նորան նստացնել կառքը: Բայց Պետրոսեանցը ամենևին ուշադրութիւն չէր դարձնում իւր ոտի անտանելի ցաւին և միայն Կատարինէի վտանգաւոր դրութեան վերայ էր մտածում:

—Ինձ վայր դրէք ու դուք, որքան կարող էք քշել, քշէք ձեր կառքը, հասէք նրանց, աղաչելով դիմեց նա ընկերներին:

Ստունին ու Թոմաւը իրանց բոլորովին կորցրել էին. չէին իմանում ինչ անեն:

Մի քանի բոպէ Պետրոսեանցի հետ քաշ գալով, նոքա աչքի առաջից կորցրեցին Սահառուներին կառքը, որ սլանում էր աւելի ու աւելի սաստկացող արագութեամբ: Կառապանը ամեն ջանքգործ էր դնում ձիերին կանգնացնելու համար, բայց չէր յաջողում. այդ դեռ բաւական չէր, կորցրեց հաւասարակշռութիւնը, գլուխը ներքեւ ու սանձերը ձեռքիցը բաց թողեց: Սանձարձակ ձիերը, ազատութիւն ստանալով, ուրախ-ուրախ խրինջացին ու թռան որքան ուժներումը կար: Կառքը նետի պէս սլանում էր, ձիերի ոտների տակից կրակ էր վեր կենում, գետինը դողում էր, փոշին երկինք էր բարձրացել:

Սահառուներն տեսնելով, որ փրկելու ոչինչ հնարք ու յոյս չը կայ բացի հրաշքից, մեռելի պէս սպրտնած, ամուր գրկել էր կնոջը. իսկ նա ուշաթափ գլուխը դրել էր նորա կրծքին և անգիտակցաբար ինչ-որ շնչում էր...

Բայց ահա կառքը դիպաւ ինչ-որ մի սուր բանի ու կոտրեց. ձիերը ականջները խլշտացրին ու տեղն ու տեղը դիք կանգնեցին... Սահառուները փրկեցին:

Սահառունուն ու Կատարինէին ոչինչ չէր եղել. բայց Կատարինէն սաստիկ վախեցել էր. նորան վախից համարեա մերձիմահ տուն բերեցին: Նոյն գիշերը նա ժամանակից առաջ սաստիկ դժւար երկունքով ազատեց և ծանր հիւանդացաւ: Թրէցօր նորա հիւանդութիւնը սաստկանում էր: Սահառունին ու Հեղինէն գիշերները անքուն նստած կողքին պահում էին նորան:

Սուունին համարեա ամբողջ օրը նոցա տանն էր լինում ու վազում էր բժշկի, դեղի յետևից:

Փոմանը օրը մի քանի անգամ գալիս էր հիւանդի դրութիւնը իմանալու համար:

Ամեն տեղից ուղարկում էին, հարցնում Կատարինէի առողջութիւնը: Բոլոր փոքր ի շատէ ծանօթները սիրում էին նորան ու հետաքրքրում էին նորա դրութիւնով:

Այդպիսով անցաւ հինգ օր: Վեցերորդ օրը իրան աւելի լաւ զգալով, Կատարինէն սկսեց խօսել ու ինչրեց մարդուն որ գրի մօրը զայ Թ. -ս:

— Գէորդ ջան, ներիր ինձ: Կարծես Հոգին Սուրբ իջաւ վրաս. այժմ եմ հասկանում, որ ես քեզ ինչպէս հարկն է չէի գնահատում, ազխողով ձայնով ասաց նա ու գրկեց մարդուն:

Սահառունին քնքշութեամբ նայում էր նորան, համբոյրներ դրոշմելով նորա գունատ ձեռքերին, յետոյ գլուխը դրեց բարձին ու սկսեց բարձրաձայն լալ...

Մի անորոշ զգացմունք ծնում էր նորա սիրտը. դժւար է ասել խղճահարութիւն էր այդ թէ զղումն: Եւ սկսեց նա մտաբերել, պատկերացնել երևակայութեան մէջ իւր կեանքի վերջին տարիները... առաջին երկու տարին նա սիրում էր Կատարինէին երիտասարդ սրտի բուն սիրով, յետոյ...

— Ատուած իմ, շնջաց նա, միթէ՞ ես մեղաւոր եմ այդ բանում, միթէ այդ իմ կամքիցս անկախ չի կատարել...

Երկար այդպէս անզգայ ընկած էր Սահառունին, վերջապէս կնոջ ձայնը սթափեցրեց նորան. նա բարձրացրեց գլուխը բարձից:

— Հեղինէ ջան, իմ բարի, սիրելի Հեղիկ, սիրի իմ Գէորդիս եղբորդ նման, զուք երկուսդ արժանի էք միմեանց, արտասանեց Կատարինէն արտասունքն աչքերին, բռնելով իւր թոյլ, նւազ ձեռքերով Հեղինէի ու Սահառունու ձեռները:

Ա՛խ, Գէորգ ջան, Հեղիկ ջան, սիրոս զեռ չի սառել կեանքից. ի՛նչ քաղցր բան է կեանքը: Չը մեռնէի՛ գոնէ մայրիկիս տեննէի...

—Սրեւիդ մատաղ, Կատեա ջան, սիրող հանգիստ պահի, զու զեռ շատ կ'ապրես, զեռ շատ ուրախ օրեր պէտք է անց կացնենք միասին, միսթարում էր նորան Հեղինէն, աշխատելով ծածկել իւր վիշտն ու արտասուքը:

—Ձէ՛, զզում եմ որ հեողհեաէ ոյժերս սպառուում են: Յիշում ես, հողիս, որ ասում էի քեզ, թէ սիրաս վիպում է, որ մի անբախտութիւն կը պատահի, ահա սրտիս վիպութիւնը կատարուում է...

Ասաց Կատարինէն ու սաստիկ վրդովմունքից նւաղեց: Սահառունին ու Հեղինէ սարսափած իրար անցան: Սահառունին, չոքած մահճակալի մօտ, ձեռներին օ-ղը-կողոն էր քսում, իսկ Հեղինէն սառը ջուր էր սրկում երեսին ու նաշատիւր տալիս հոտ քաշելու:

Նրկուան էլ մեռելի նման սպրտնել էին ու չէին կարողանում պահել արտասունքները:

—Գէորգ ջան, արտասանեց ուշքի գալով Կատարինէն հազիւ լսելի ձայնով, լալի՛ս ես... խղճո՞ւմ ես ինձ... իսկ եթէ իմանայիր... ինչպէս ծանր է ինձ համար բաժանել կեանքից... Ա՛խ, գոնէ մի քիչ էլ ապրէի... Հեղիկ ջան, աչքիս լոցը, չեմ ուզում մեռնել, զեռ շատ շուտ է... ինչպէս անսպասելի կերպով եղաւ... Մի լաք: ես արժանի չեմ ձեր արտասուքին: Շատ դառնութիւն պատճառեցի ես քեզ կեանքումս, Գէորգ, բայց...

—Կատեա ջան, հրեշտակ ջան, հերիք է, զուր տեղը սիրող մի պղտորիլ, Աստուած ողորմած է, կը լաւանաս, ընդհատեցին նորա խօսքը միաբերան Հեղինէն ու Սահառունին յուզւած, զողզոյուն ձայնով:

—Ա՛խ, Աստուած, մի քիչ էլ թող ապրեմ... ինչ զարհուրելի բան է մահը, նորից լսեց հիւանդի մարող ձայնը... և չետոյ՝ սրբտաճմիկ հառաչանք:

Հեղինէն էլ չը կարողացաւ պահել լացը ու դուրս վազեց ննջարանից:

Սահառունին ջղաձգաբար սեղմեց կնոջ երկու ձեռքը ու պիտի կպցրեց իւր շրթունքներին: Նա ուզում էր հանդստացնել Կատարինէին, սիրա տալ, բայց արտասուքը խեղզում էր կոկորդը ու չէր

Թողնում խօսի: Նա զգում էր, որ Կատարինէն ձեռից գնում է, սիրող սասաիկ մղկտում էր, տեսնելով թէ ինչպէս մեռնում է Կատարինէն ծաղիկ հասակում և կեանքի ու վայելչութեան բուռն փափագով սրտում:

Նա սկսեց ինքն իրան մեղադրել, որ, ինչպէս հարկն է, չէր սիրում ու խնամում նորան: Այս, մի չը մեռնէր, ապրէր, ոչինչ չէի ինայի Կատարինէիս բախտաւորութեան համար:

Այդ բոպէին զուռը կամաց բացւեց ու ներս մտան բժիշկները, — նոցա յետեւից յուշիկ քայլերով ներս մտաւ Հեղինէն:

Կատարինէն նորից սկսեց խօսել, բայց բժիշկները պատուիրեցին, որ բոլորը սենեակից զուրս զան ու թողնեն հիւանդը հանդիստ առնի: Սահառունին գնաց իւր առանձնասենեակը:

— Ի՞նչպէս է հիւանդը, Քէրդ, կարեկցարար հարցրեց Քոմսաւը:

— Ե՛հ, շատ վատ է, յուսահատ ձայնով պատասխանեց Սահառունին:

Քոմսաւը տխրութեամբ նայեց Սահառունուն:

— Իսկ Պետրոսեանցն ինչպէս է, Իւււիթ: Ոտը զուրս էր ընկել, չէ՞:

— Հա, բայց այժմ լաւ է, վտանգ չը կայ:

Քաւորդ ժամի շփի հիւանդի մօտ նստելուց յետոյ, բժիշկները կասկածանքով ու տխուր՝ գլուխները թափ տւեցին ու զուրս եկան ննջարանից:

Սահառունին ուշադրութեամբ նայեց նոցա դէմքերին, — յուսահատութիւն և մահւան դատաւճիւ էր գրւած...

Երկու օր էլ անցաւ, յուսահատութեան ու մտատանջութեան օրեր:

Այդ օրը հիւանդը իրան անհամեմատ աւելի լաւ էր զգում: Նա բռնեց մարդու երկու ձեռիցը և երկար անթարթ նայում էր նորա աչքերին:

— Քէրդ, ասաց նա աշխուժով, ինչպէս առհասարակ խօսում են մեռնողները վերջին բոպէներում, դու ինձ սիրում էիր ինչպէս մի կայտաւ երեխայի, և ես զգում եմ, որ ուրիշ սիրոյ արժանի էլ չէի... Մնաս բարև, սիրելիս... մնաս բարև, Հեղիկ... Դու միշտ ինձ համար հաւատարիմ բարեկամ ես եղել, բայց ես շատ անգամ չէի կարողանում գնահատել քո բարեկամութիւնը ինչպէս հարկն է:

Յետոյ, դառնալով դէպի մարդը, նա շննջեց նրան, որ չը մոռանայ այն չորս որբերին, որոնց մի քանի տարի էր որ ինքը մօր նման խնամում էր:

—Ախ, Քէորզ, գոնէ մայրիկս այստեղ լինէր, աչքերս իւր ձեռքով փակէր:

—Շուտով կը գայ, հոգիս, մխիթարում էր նորան մարդը, համբուրելով նորա սառած ձեռները, կարծես ուզում էր կեանք ներշնչել նորան իւր տաք համբոյրներով:

Մի քանի րոպէ բոլորը լուռ էին:

—Ո՞վքեր են այն սենեակում, երևի եկել են ինձ հետ մնաս— բարևանելու, կանչէք գան այստեղ, ընդհատեց լուռթիւնը Կատարինէն: Հեղինէն իսկոյն կատարեց նորա խնդիրքը:

—Մնաք բարև, սիրելի բարեկամներ: Բայց ո՞ւր է Պետրոսեանցը: Ախ հա, միտս է, իմացայ, որ նա ինձ ազատելու համար իրան զցել է կառքից ու հազիւ է ինքը մահից ազատուել: Տարէք նրան վերջին հրաժեշտս ու անկեղծ շնորհակալութիւնս, —նա հրեշտակի սիրտ ու հերոսի հոգի ունի:

Արի ինձ մօտ, մօտեցիր, Աննա ջան, արի քեզ համբուրեմ վերջին անգամ, Քէորզ, իմ սիրած ապարանջանն ու կրծքաքորոցը կը տաս Աննային: Քեզ շատ էին դուր գալիս, Աննա ջան:

Լսեց խուլ հառաչանք:

—Մի լար, Աննա ջան, Աստուած քեզ բախտաւոր կեանք տայ: Ալեքսանդր Վասիլիչ, շատ ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ:

Ինք բոլորդ միշտ բարի, միշտ քաղցր էք եղել իմ վերաբերմամբ, ներեցէք եթէ մէկնումէկիդ սիրտը ցաւացրել եմ: Մնաս բարև, մայրիկ ջան, իմ քաղցր մայրիկ, չը կարողացայ հորանց գալ:

Բախտաւոր եղէք բոլորդ, այնտեղ ես կ'աղօթեմ ձեզ համար: Հիւանդը այնպէս մղկտալով աչքերը բարձրացրեց դէպի երկինքը, որ սենեակում՝ եղողները բոլորն էլ չը կարողացան լացները պահել ու հեծկլտացին:

ՌՅ, շատ մոլթն է, լուսամուտը բաց արա, Քէորզ, արևին նայեմ... Ախ, Աստուած...

Կատարինէի ուշքը գնաց... մի քանի ժամ էլ անցաւ և խեղճը հոգին տւեց...

Վերջ առաջին մասի:

ԱՇԸՂԻ „ՆԷՅՆԻՄ“-ներին

ԶԱԻԱԳ ԲԱԼՈՒՂԵԱՆՅԻ

«Աշըղե հաղը (հեղը որ կըլի ի հատի, վերջանայ),
«Նեյնիմ»-ները ի՞նչ անեմ, ի՞նչ կըզեմ», կրակոսի:
Փողովրդ. ասաց. ամբ.

Մըտայ ծաղկանոց—քաղել ծաղիկներ,—
Թառամել էին...

Կամեցայ լըսել թըռչընոց երգեր,—
Բայց թըռել էին...

Նոր կոկոններին ջուր սըրըսկեցի,—
Ջըբացան բընա...

Փոքրիկ մանուկին երբ փայփայեցի,—
«Թո՛ղ» ասեց, փախա...

Մի աղջիկ տեսայ—խոստացայ սիրել,—
Դեմքը խոժոռեց...

«Ուսին» կանչեցի—ցաւերս սփսփել,—
Ամբը քողարկեց...

ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ ՍԵՋԱՆՈՒՄ

ԱՆՈՒՇ. ՔԱՆԱՆԹԱՐԻ

Վերջին տարիները թէ մտաւոր շրջանների և թէ մամուլի ուշադրութիւնը գրաւել է մեր տնտեսական հարցերից մէկը, որը ընդհանուր անունով կոչուում է պանդխտութեան խնդիր:

Ինչպէս է կատարւում մեղանում պանդխտութիւնը, ինչ դրութեան մէջ է խնդիրը և ինչպէս են նպաստում մեղանում այդ խնդրի վերաց, այդ պիտի լինի մեր չօղածի նիւթը:

Պանդխտ մենք անուանում ենք այն մարդուն, որը, իւր ծննդավայրը թողած, գնում է ուրիշ տեղ, բայց որը վերադառնալու ցանկութիւն ունի:

Պանդխտ ասելով մեր չօղածում մենք հասկանալու ենք միայն այն տեսակներին, որոնք հեռացել են գիւղից և ապրում են նոյնպէս ֆիզիքական աշխատանքով, կամ առհասարակ՝ ոչ-մտաւոր աշխատանքով:

Խնդիրը լաւ պարզաբանելու համար, առաջ մի հալեացք զցենք նորա զարգացման պատմութեան վերայ:

Պանդխտութիւնը նոր խնդիր է և նորա մասին լիչատակութիւն չը կայ հին գրականութեան մէջ. նա մեր նոր կեանքի՝ տնտեսական կեանքի՝ ծնունդ է: Մեր Անդրկովկասի պանդխտութիւնը հետեանք է մեր տնտեսական կեանքի իւրատեսակ զարգացման, իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի պանդխտութիւնը հետեանք է տնտեսական կեանքի խանգարման: Մեղանում հողային խնդիրները կճճուուելով հասցրել են այն դրութեան, որ առանց պանդխտութեան ասրել չի լինի. իսկ Տաճկաստանում քաղաքական անլաջող պայմանները խոչընդոտ լինելով տնտեսական կեանքի զարգացման, քաղքայելով գիւղացու տնտեսութիւնը, ծնել են պանդխտութիւնը, որը կորստաբեր է ազդում այնտեղի ժողովրդի կեանքի վերայ: Այսպիսով Անդրկովկասի, Տաճկաստանի և Պարսկաստանի պանդխտութեան պատճառը մէկ է. տնտեսական է. բայց մեր երկրում (չովկասում) նա հետեանք է տնտեսական կեանքի զարգացման. իսկ Տաճկաստանում և Պարսկաստանում հետեանք է զլիսաւորապէս տնտեսական կեանքի կանոնաւոր ընթացքի խանգարման:

Մենք այս չօղանում պիտի գլխաւորապէս խօսենք Անդրկովկասի պանդխտութեան մասին, իսկ Պարսկաստանի պանդխտութեան վերայ աչնքան կանգ կ'առնենք, որքան նա կապ կամ ազդեցութիւն ունի մեր պանդխտների խնդրի վերայ:

Պանդխտութեան մեծ կենտրոններ համարոււմ են մեր գիւղացիների համար՝ Բագուն, Թիֆլիսը, Անդրկասպեան երկիրը, Նրևանը, Գանձակը, Բաթումը և այլ մեր նահանգական և դաւառական քաղաքները և կենտրոնները, իսկ զարաղազցի (Պարսկաստանի) հաչ մշակների պանդխտելու կենտրոնը պիտի համարել Շուշին:

I

Սօթանասնական թւականների սկզբում և թէ նորանից էլ շատ առաջ, ինչպէս և հիմաչ, շատ նկատելի էր աչն երևոյթը, որ մեր դաւառական փոքր քաղաքներից և գիւղերից, աչունը սկսելուն պէս, երբ գիւղական ծանր աշխատանքը վերջացած էր լինում, մեծ քանակութեամբ մեր տանու արհեստաւորները ճանապարհոււմ էին դուրս իրանց տեղից, դէպի մեծ կենտրոնները, իրանց համար գործ գտնելու: Գոցա մէջ աչքի էին ընկնում գըլխաւորապէս հիւսնները, քարտաշները, կլէկչիները, զինագործները և աչն: Բացի արհեստաւորները՝ քիչ քանակութեամբ գնում էին և աչնպիտի գիւղացիներ, որոնք պատահական, ընտանեկան և այլ մանր պատճառներից ստիպւած էին թողնելու մի առժամանակ գիւղը, մինչև որ մի փոքր միջոց գտնեն կրկին գիւղ վերադառնալու: Վերջին տեսակի պանդխտները պարապում էին և մշակութեամբ գլխաւորապէս Թիֆլիսում, Նրևանում, Գանձակում և այլ աչն ժամանակ չաչոնի վաճառանոցներում: շատ քիչ քանակութեամբ և Բագուն էին գնում: Բագունում գլխաւորապէս լինում էին պարսկաստանցի և բագուցի թուրք մշակներ, քանի որ աչն ժամանակ Բագունում քրիստոնեաներ քիչ կալին, իսկ մահմեդականները երբէք գործ չէին տալ կատարելու ոչ մահմեդական մշակների, որոնք աչժամ կազմում են կովկասցի պանդխտների ամենամեծ կոնտինգենտը...

Մինչև 70-ական թւականները կիսապանդխտական շարժում կար Ղուբալի և Գերբեճտի կողմերում, ուր տորոնի մշակութիւնը գրաւում էր բազմաթիւ մշակներ Գաղստանի լեռներից: Գաղստանցիների պանդխտութիւնը աչժամ կատարոււմ է այլ ուղղութեամբ, դէպի Անդրկասպեան երկիրը, ուստի անմիջապէս չի մտնում մեր տեսութեան մէջ...

Պանդխտական խնդիրը աւելի բազաղրեալ և հետաքրքրական է գաւնում գործարանական շրջաններում, որոնցից ամենաուժեղն է Բագուն:

Սօթանասնական թւականների սկզբումն էր, որ Բագուչ Նաֆթի արդիւնաբերութիւնը սկսեց ուշադրութիւն գրաւել Բագուչ Նաֆթի արդիւնութիւնը սկզբում աչնքան փոքր էր, որ մեր և օտար կապիտալիստները

դեռ ուշք չէին դարձնում նորա վերայ, բայց ահա 1874 թւականը ¹⁾ գուշակեց Բագլին մեծ ապագայ և այլ օրից սկսեցին Բագլում կենդրոնանալ գումարաւոր մարդիկ՝ դրամատէրեր, սկսեցին նաֆթի հողեր առնել և նաֆթ արդիւնահանել: Մի քանի տարւաջ մէջ Բագլուն ճանաչել չէր կարելի. սկսեցին դումարներ խաղալ, վաճառակաճեութիւնը սեծացաւ և սկսեց աւելի և աւելի գրաւել թէ հարուստ դրամատէրերին, և թէ աշխատող, արդիւնաբերող ձեռքերը—Բագլուն ժամերով էր մեծանում... Նաֆթի արդիւնաբերութիւնը մեծացաւ և մեծ աշխատանքը ակններն էր, մշակող ձեռքեր էին հարկաւոր: Պատահական պանդուխտ մշակները, աւելի օգուտ սեռնելով նաֆթի մշակութեան գործից, քան քարւանդարաներում զիշերապահութիւնից, սալապանութիւնից, բեռնակրութիւնից, վարձեցիցն այլ գործին:

Գործի պահանջը աւելի մեծ էր, շատ էր, քան աշխատող ձեռքերը, պահանջը առաջարկութիւնից գերազանցում էր, հետևաբար բանւորի վարձը շատ բարձր էր: Արհեստաւորների մի մասը թողեց իւր գործը և մշակ վարձեց նաֆթի հորերում և գործարաններում: Պարսկաստանի թուրք մշակների մի մասը, թէպէտ սկզբում շատ փոքր, վարձեց նոյն պէս նաֆթի գործին: Սորանից մի քանի տարի առաջ՝ Բագլայ թուրքը անպատաւար կը համարէր նաֆթագործարաններում և հորերում մշակութիւն անելը. զլխաւորապէս նա ասպարէզ ընտրել էր ծովի, նաւերի վերայ աշխատանքը, բայց այժմ նորա դրութեան վատանալը, գործարանի բանւորի բարձր գինը խիցին նորան նաւերից էլ, հողից էլ, գիւղից էլ և դարձրին բանւոր այն գործին, որը առաջ նա ստոր էր համարում... Բայց աշխատող մարդկանց հարկաւորութիւնը, աշխատանքի պահանջը շատ մեծ էր: Մշակները իմաց էին տալիս իրանց համագիւղացիներին, բերել էին տալիս Բագլու, խի ուլ իրան ուղղած էր համարում, կարճ ժամանակից չէտէ վերադառնում էր գիւղ կլորիկ գումարով, սնդուկով, սամովարով, իւր կնոջ, մօր, քրոջ և ազգականների համար ներձերով, և այլն... կարգի էր բերում իւր տնտեսութիւնը և ապահովում իւր կեանքը...

Ակն երև աշխատանքը, քաղաքից եկածների փալը, նորա «մարդ» դառած լինելը՝ շլացնում էին, նախանձ էին գրդում համագիւղացիների սրտում: Ամեն տուն աշխատում էր իւր որդուն, եղբօր, մարդուն ուղարկել շուտով Բագլու՝ հարստանալու և «մարդ դառնալու» ²⁾...

Այս երևույթը մինչև այսօր էլ շարունակում է և նկատելի է, քանի որ այժմ էլ պանդուխտ օտարութեան մէջ արած աշխատանքը դեռ բարձր

1) Այդ թւականին յայտնեց առաջին նաֆթի շուղըւանը—Մերզոյեանց—նաֆթ թահալում:

2) Տես 1,5օի «Պանդուխտը» արտ. «Մշակ» լրագրից, հրատ. Արշ. Քալանթարի Բագլու 1886 և «Հայ գիւղացու սև օրը» Ա. Մ. Նահապետեանցի, արտ. «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս 1890.

է, քան զիւղացու ստացածը, եթէ նա տանը մնար. բայց այս մասին ներքեր մանրամասնաբար կը խօսենք...

Մենք տեսնում ենք այդպիսով, որ մեր պանդխտական կեանքի զարգանալու հէնց սկզբի օրերից, մեծ դեր է խաղում քաղաքից եկածների արտաքին փախումը շէն ա ն ա լ ը և ք ա ղ ա ք ի ա կ ն եր և ա շ խ ա տ ա ն քը...: Քաղաքը իւր աշխատանքով մրցում է զիւղի հետ, մրցման շնորհիւ խլում է աշխատող ձեռքերը զիւղից: Մեծ արդիւնաբերութիւնը սկսում է ծեծել և կլանել փոքրին և զրկում է զիւղական փոքր արդիւնաբերութիւնը ուժից և շուտ թէ ուշ պիտի բոլորովին չաղթի էլ, որովհետեւ այդպէս է մեր տընտեսական կեանքի ընթացքը: Այդ ճանապարհով է ընթացել նա Եւրոպայում և այդպէս էլ կը գնայ մեզանում, քանի որ տնտեսական նոյն պայմանները անպատճառ պիտի արտադրեն նոյնատեսակ հետևանքներ...

Ով հետաքրքրուել է մեր երկրի պանդխտութեան խնդրով, նա նկատած կը լինի, որ պանդխտութիւնը գլխաւորապէս վերաբերում է հայ գիւղացուն, իսկ չետոյ վրացի և վերջ ի վերջոյ մեր երկրի թուրք ազգաբնակիւթեան:

Հայ գիւղերը պատմական-տնտեսական հանգամանքների շնորհիւ, համարեա, քիչ բացառութեամբ, լեռներումն են դտնուում: Շատ քիչ հայ գիւղեր կան, որ դտնուում լինեն դաշտ-տափարակում, իսկ ընդհակառակն՝ լեռնային թուրք գիւղեր մեղանում այնքան էլ շատ չեն: Շուշու և Ջաբրայիլ գաւառների գիւղական տնտեսական կեանքը ուսումնասիրող Ա. Գ. Կեկոնսկու ասելով՝ հալերը լեռնցիներ են. շնորհիւ չարձակումների և տափարակի անառողջ կլիմայի՝ հալերի լեռներում ապրելու սէրը այնքան մեծ է, որ մինչև հիմա ոչ մի գիւղ չի համաձայնում իւր ապրուստի ձեր փոխելու¹⁾. Թուրքերը նախկին տիրապետութեան ուժով բռնել են գաւառիս ամենալաւ տեղերը (տափարակի ջրովի հողերը), և պարապում են այգեգործութեամբ և թիթենիների մշակութեամբ²⁾: Այդ գաւառների բնակիչների 96 տոկոսը պարապում են երկրագործութեամբ, իսկ հալերը բացառապէս երկրագործութեամբ³⁾: Նոյն կարծիքը մենք գտնում ենք միւս հետազոտութիւնների մէջ: Ջելինսկու ասելով, Չանդեաղուր գաւառի հայ և Սիսեան մահալի թուրք ազգաբնակիւթիւնը բացառապէս պարապում է երկրագործութեամբ (հացահատիկ) և սաւարապահութեամբ⁴⁾ և այլն:

Մեր գիւղացիների գլխաւորապէս երկրագործ և լեռնցի լինելը իմանալուց չետոյ, եթէ կանց առնենք մեր երկրի տեղագրական և կլիմայական

¹⁾ Материалы для изучения экономического быта госуд. крест. Закавказ. края, томъ IV часть I, Шупинск. и Джебрайлск. уез. изс. Л. Г. Деконского.

²⁾ Նոյն տեղը:

³⁾ Նոյն տեղը:

⁴⁾ Изсл. С. Зелингаго, томъ IV, ч. I Загезурской уездъ.

պայմանների վերաջ, կը համաձայնենք, որ մեր Անդրկովկասում կան այն-
պիսի տեղեր, ուր ձմեռուայ ձիւնը գալուն պէս՝ ճանապարհները կապում
են և երկրի զանազան մասերը բոլորովին զրկում են հաղորդակցու-
թիւնից, ամենքը մտնում են իրանց տները և մինչ գարուն սպասում նո-
րից եղանակի կակղանալուն, որ կարողանան նորից գուրս գալ. իսկ մե-
զանում, ինչպէս յալտնի է, տանու-արհեստագիտութիւնը տեղ տեղ ամե-
նեին չը կալ կամ իւր գարգացման ստոր աստիճանի վերան է, բացի մի
քանի ճիւղերը՝ հիւսնուութիւնը գլխաւորապէս: Մեր դիւ-
զային ամբողջ ձմեռը պարսպ է, շնորհիւ երկրի տեղագրական զիրքի և
տանու-արհեստագիտութեան բացակաութեան, կամ քիչ տարածած և զար-
գացած լինելուն: Մեր տանու արհեստագիտութիւնը գլխաւորապէս կա-
նանց ձեռքին է. կանաչքը դորանով պարապում են ձմեռը: Ամառը
երբ կանաչքը լինում են ամառաճոցներում՝ միմիայն պատրաստութիւններ
են տեսնում ձմեռուայ աշխատանքի համար՝ թել են մանում, կամ պա-
րաստում, նիւթ պատրաստում կարպետի, գորգի, շալերի, մահուղի, կտա-
ների համար և այլն: Ի հարկէ կանանց մասնակցութիւնը գիւղական գոր-
ծերում դորանով չէ սահմանափակում. Ա. Ջելիսկին վկայում է ¹⁾, որ
Ալէքսանդրապոլի դաւառում համարեայ դաշտային գործերի կէսը կա-
տարում են գեղջկուհիները, որոնք տղամարդկանցից վատ չեն գործում,
թէպէտ նույնը չէք պատահիլ կրեանեան հանանդի տաք կողմերի հալերի
մօտ: Պատում է և մի դէպք, ինչպէս մի գիւղում պատահել է կնկայ,
տղամարդու շորերով, միւս տղամարդկանց հետ գործելիս... Նոյն Ջելի-
սկու ասելով ²⁾ կտաւր Սիսեանում տղամարդիկն են գործում, իսկ Չան-
դեպոլը գաւառի մնացած տեղերում կանաչքը: Տղամարդին ինչ է մտնում
անելու, բացի մի քանի մանր մուկ արհեստները ³⁾, նա կամ հանդատանում
է, կաղրուրում է իւր ամառուայ ծանր աշխատանքից վտոյ և կամ եթէ
նորա տնտեսութիւնը կաղում է, իսկ ինքը աւելորդ է ընտանիքի մէջ,
չտապում է աշնանը՝ դաշտի աշխատանքը վերջացնելուց վտոյ՝ դնալ կամ

¹⁾ Матер. для изуч. экон. быта гос. крест. томъ I. вып. I. Александроп. уѣзд-
всел. С. П. Зелинского.

²⁾ Исх. Зелинского—IV т. I час.

³⁾ Մենք այստեղ կը դենեք Ձանդեպոլը գաւառի արհեստագործներ թիւր
և կը տեսնենք, որ շատ քիչ քանակութիւն է կաղմում. (Исх. Зелинск. IV т. I час.).
Աշուղներ—28, դուրնաչի և դոնչի—79, բրտու—37, կոշկակար—14, քեչա և չուլ
շինող—95, քարտաշ—134, սեղչի—24, ներկարար—28, դարբին, փահանակագործ, պալ-
առու—91, անալչի—27, սղիճագործ—6, գինալործ—7, համտագործ—28, չիւսն—231,
գերձակ—48, սակերիչ—11, սափրիչ—63, կտաւ դործող (աղ.)—131. Բացի այդ գիւ-
ղացիք գանազան գաւառներում պարապում են անուր այլերով, աղիւսագործու-
թեամբ, դաւնում են սալադան և ֆուրգուհի, ճագացպան, կղահան, ուղտագան,
չարւազար և այլն:

մի քանի տարով կամ մինչև դարունը բացելը՝ մի որ և է կողմնակի դործով պարագելու քաղաքում կամ մի այլ տեղ:

Այժմ մի խնդիր է ծագում, ինչու հարը և թուրքը շատ անգամ ապրելով նոյն պայմաններում, հաւասար չափով չեն դնում պանդխտութեան, օրինակ վանդահողուրցիք: Այդ կարելի է բացատրել նորանով, որ թուրքերի տնտեսական դրութեան վատանալը համեմատաբար ուշ է սկսել նկատել: Հարը պատմական ժամանակից հալածւած և ճնշւած է եղել տիրապետող թուրք տարրից, և միշտ մասծում է եղել մի ելք գտնելու իւր դրութիւնը բարւոքելու համար և այդ ժամանակահատից դեռ սովորութիւն է արած եղել դնալ հեռու տեղեր գլուխ պահելու: Եւ կամայ կամայ հալի մէջ կալմել է մի տեսակ ձեռնարկու ոգի և բնաւորութիւն, աւելի, քան իւր հարեան թուրքի մէջ, որը միշտ աւելի լաւ դրութեան մէջ լինելով, շնորհիւ պարսիկ կառավարութեան տեղեկացիական վերաբերման, սովորել է համեմատաբար աւելի դանդաղկոտութեան և ծուլութեան: Եթէ թուրքին չէր աջողում եղել մի բան, նորա համար դժուար չէր լինում նոյնը լրացնել չափշտակելով. բայց այժմ, երբ նորա տիրապետող ուժը թուլացել է, և չափշտակելովու կողոպուտով նա էլ չի կարող ապրել, իսկ տնտեսական դրութիւնը քայքայում է, նա ևս իւր ապրուստը պահպանելու համար ստիպւած է գնալ պղնձահանքերը, նաֆթահորերը և գործարանները և աւելի հեռուն: Զանգեսաղուր դաւառի Ղափան մահալի դիւղացիք գնում են մօտիկ Հալիձորի, Կաւարթի և այլ պղնձահանքերում աշխատելու, և եթէ չէր սխալում իմ ծանօթը, որը հանքում ծառայողներին էր, մշակների կէսը թուրքեր են: Նոյա մէջ էլ տնտեսական դրութեան վատանալը սովորութիւն է դրում պանդխտանալը...

Մեր կարծիքով թուրքերի քիչ պանդխտանալու պատճառը ընդհանրապէս դրութեան համեմատաբար լաւութիւնն է, բնաւորութեան դանդաղկոտութիւնը և ծուլութիւնը և վերջապէս պանդխտանալու սովորութեան չը լինելը: Աշնանը դնացած պանդխտների մի մեծ մասը մնում են գիւղից դուրս մինչև իրանց հունձի սկսելը. չուլիսի մէկից առհասարակ պղնձադործարանները փակում են մշակ չունենալու պատճառով: Ծարուր Գարալագեաղ դաւառի (գլխաւորապէս Գարալագեաղ) տղամարդկանց 10% -ը դաշտի աշխատանքը աւարտելուց փտող՝ գնում են աշխատանքի Երևան, Նախիջևան, Գանձակ, Թիֆլիս, իսկ ով երկրագործութեամբ չի պարագում ¹⁾, դարնանը, ամառը և աշնանը վարձում է իւր հարուստ հարեանների մօտ բանւոր ²⁾:

¹⁾ «Ով երկրադործութեամբ չի պարագում» նախադասութիւնը պիտի հասկանալով ով հող, վարուցանք չունի մտքով:

²⁾ Материалы для изуч. экон. быта госуд. крестьян. IV—ч. 2. северо-западной части Шарура и восток. часть Даралагеза. III.—Д. уезд.—изсл. А. В. Парвицкого.

Մենք շատ անգամ պատահել ենք զարնանը բազմաթիւ մշակների, բարձր սար գիւղերից, որ ձմեռը Բագու են անցկացրել և դառնում են եղել հայրենիք: Եւ ինչ էք կարծում՝ երբ են նոքա իրանց գիւղը հասնում: Նոքա սկսում են դաշտ-տափարակից (արան) հնձուր վարձւած, և հնձելով հնձելով՝ կամաց կամաց բարձրանում են լեռները և հասնում են իրանց գիւղը աչն ժամանակ, երբ իրանց գիւղի հուճը նոր սկսում է: Այդ հնձուրների լեռներ բարձրանալը տևում է 1—2 ամիս... ¹⁾ Բացի սա, լեռնալին գիւղերից, տափարակի հուճը սկսելուն պէս, Շուշու և Ջարրալէլի գիւղացիք թողնում են իրանց տնտեսութիւնը և գնում են դաշտ-տափարակը աշխատելու. ²⁾ Աբարանի և շրջակայ լեռնացիները, դարուճը սկսելուն պէս, գնում են մշակութեան Արարատեան տափարակը, և նոյնպէս Երևան քաղաքը՝ մօտ մի ամսով աղջիներ փորելու, ստանալով օրական 30—40 կոպ. և երբեմն 50 կ. իրանց հացով. իսկ ամառը 6—10 օրով հուճի՝ ստանալով օրավարձ 80—1 ր. 20 կ. և կերակուր: Այդ կարողանում են անել նորա շնորհիւ, որ զարնանը գիւղացին դորձ շատ չուճի և նա կարող է տունը թողնել. նոյնը նա անկարող է անել ամառը, իրանց հնձի ժամանակ, երբ մինչև անգամ գիւղացին հնձուրներ է վարձում և աղ ոչ թէ նորա համար, որ նորա ցանքը աչնքան շատ է, որ ինքը մէնակ իւր ընտանիքով անկարող է վերջացնել, ոչ, այլ աղ պահանջում է երկրագործութեան մի անչարմարութիւնը, որ գիւղացին չի կարող երկար արտը չը հնձած թողնել, որովհետև հատիկները կը թափւեն, և երկրորդ՝ հարուստ գիւղացիները իրանց հուճը աւարտելուց վետոյ (հնձուրների օգնութեամբ), առհասարակ արձակում են տաւարը խողանը արածելու, առանց ուշք դարձնելու թէ աղքատների արտը հնձած է թէ ոչ. այս հանգամանքը հարկադրում է աղքատներին էլ հնձուրներ վարձել և իրանց հարևանների հետ միասին հուճը վերջացնել ³⁾:

Այս մեր վերև վիշածից պարզ է, որ առաջինը՝ պանդխտութեան գնում են լեռնցիները, իրանց երկրի տեղադրական դիրքի և տաճու արհեստագիտութեան բացակայութեան պատճառներով. նոքա գնում են պանդխտութեան կարճ ժամանակով, և նոցա աշխատանքը լինում է իբր մի օժանդակ նոցա մշտական դորձին՝ երկարագործութեան. գնում են անշանը և դառնում ամառը կամ դարձանը: Այս տեսակ պանդխտներին պիտի ի նկատի ունենալ և գաճաղահել աչն պանդխտներից, որոնք գնում են աւելի երկար

¹⁾ Մեզ յայտնի է, որ մեր երկիրը, թէպէտ դանուում է բաւարար կլիմայում, բայց նորա զանազան մասերը, զանազան կլիմաների են. մի օրւայ մէջ մեզնում տրօպիկական տաքերից կարող էք անցնել սառնամանիք մասերը, որտեղ մշտական ձիւն և մշուշ է թագաւորում. դորա համար էլ մեր հուճը միաժամանակ չի սկսում. Սալեանի և ուրիշ տաք կողմերում հուճը սկսում է մայիսին, իսկ լեռներում տևում է մինչև հուճի ժամանակը և օգոստոսի առաջին կէսը:

²⁾ Пасеба, Шушан, и Джебр. уезд. — Деконский.

³⁾ Сводъ матеріаловъ, X. А. Вермишевъ, т. IV ч. I ст. 458.

ժամանակով, և որոնց գնալու պատճառը միայն այդ չէ, ինչ-որ կարճատև պանդխտութեանը, այլ ուրիշ աւելի լուրջ պատճառներ: Ինչպէս այդ երկու տեսակ պանդխտները տարբերում են ժամանակի մեծութեամբ, նոյնպէս տարբերում են նոքա և իրանց պարագմունքներով. կարճատև պանդխտութեան գնացողը իւր համար անկարմար է համարում բեռնակրութեամբ և նորա նման բաներով պարագել, մինչդեռ երկարատև պանդխտների գլխաւոր պարագմունքը բեռնակրութիւնն է և լիտոյ այն պաշտօնները, որին այնքան սիրահար է կարճատև պանդխտը...

Պանդխտների վարած պաշտօնները լինում են դորժարաններում մշակութիւն, քարահասարաններում և բազարներում գիշերապահութիւն, սաղարայանութիւն և այլն. կարճատև պանդխտութեան գնում են չաճախ կիսադաշտ և կիսալեռնային գիւղացիք, կամ աւելի ընդհանուր խօսքով՝ քիչից շատ ապահոված գիւղացիներ, ուրեմն ոչ շատ աղքատ գիւղացիները: Շաճախու, Գեօղչալի, Շուշու, Շարսպանի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք, թէպէտ գնում են և երկարատև պանդխտութեան, բայց սոքա մեծ մասամբ պատկանում են կարճատև պանդխտների խմբին, իսկ հակառակը Չանգեագուրի, Գարալագետլի, Նախիջևանի, Հաճէի (Իմերեթիա) և այլ գաւառների գիւղացիք, — սոքա գլխաւորապէս պատկանում են շատ տարիներով մնացողներին և սոցա նշանաւոր պարագմունքը կազմում է բեռնակրութիւնը և լիտոյ ուրիշ աշխատանքներ:

Այս մեր ասածից դեռ չը պիտի եզրակացնել, թէ դաշտ տափարակի գիւղացիք չեն պանդխտանում. նոքա ևս մասնակցում են այդ շարժման, բայց ոչ այն չափով, ինչ լեռնային գիւղացիք: Գորա պատճառները շատ շատ են, որոնցից մի երկուսը վերեւ լիչեցինք, իսկ մնացածների մասին կը խօսենք ներքեւ: Գաշտ—տափարակցի պանդխտների թիւը շատ չէ: Այդ տեսակները շատ են Նախիջևանի գաւառում, ուր հեռանալու գլխաւոր պատճառներէց մէկը՝ ջրի պակասութիւնն է:

Այս բոլոր պատճառները, որ պանդխտութեան խնդրի ներկայ դրութեան մէջ շատ էլ մեծ դեր չեն խաղում, առաջ, այդ խնդրի ամենախիստ պատճառներն են իրաւունքի բացակայութիւնը ¹⁾ մորեթիւ ²⁾ մուկը, կարկուտը, հեղեղը, 1879—80 թւականի սոսիւր, գիւղական կուրուները: ³⁾ Բայց մեր տնտեսական կեանքը զարգանալով առաջ է բերել և մի մեծ պատճառ, որը ընդհանուր տնտեսով կոչւում է սակաւահոգութեան

1) Աստիկ երաշտութիւնը շարունակ աղքատացել է Նոր-Բայազէդի գաւառը:

2) Այս 1890 թւականին մորեթը սրբել էր հնձել էր ցանքերը աշագին տարածութեամբ, շատ տեղ էլ մնացածը կարկուտն է տարել:

3) Տես. «Մուսլիմի գանդաւա». Ա. Աբապեան. հր. Տիգրան Դոնդաղապեանցի արտ. «Նոր-Պար»-ից 1890 թ.:

խնդիր... Սակաւահողութեան խնդրի մէջ մտնում են շատ պատճառներ, որոնք գուցէ առանձին առանձին կարող էին մեծ դրդիչ հանգամանքներ համարել, ինչպէս անկանոն հողատիրութիւնը, այսինքն հողի սեպահականութեան անհաւասար դասաւորութիւնը հասարակութեան մէջ, դաշտալին մշակութեան միջոցները և դործիքները անկատարելիութիւնը, գիւղական հարստահարութիւնները¹⁾ չարչիցեցերը, հարկերը, ակցիզի և ալլտուքերը ծանրութիւնը, ճանապարհները և մօտիկ վաճառանոցները բացակայութիւնը և այլն...

Սակաւահողութիւն առաջ բերող հանգամանքները, բացի մեր լիշածը՝ ՚ի հարկէ էլի շատ շատ կարող են լինել, ինչպէս հալ կնոջ դերը, աղգագրական առանձնապատկութիւնները²⁾, բայց թէ գոքա և նոյնպէս դաշտալին մշակութեան ձևերի անկասարկութիւնը և այլն կաղմում են ալն տեսակ պատճառներ, որ եղել են միշտ, բայց այժմ աւելի գուցէ նկատելի են դարձել. բայց միւս պատճառները, ինչպէս հողալին անհաւասարութիւնը, գիւղական հարստահարութիւնը և այլն, քանի՛ դնում դարդանում են և մեծ ծաւալ ընդունում, և դառնում ներկայ գրութեան մօտիկ պատճառներ:

Գառնանք այժմ ալն երևութիւններն, որոնք առաջ են եկել աւելի ուշ և նպաստել են սակաւահողութեան դարդանալու արագութեան...

Հողի քանակութիւնը վերջին 20 տարւալ մէջ մնացել է նոյնը, ինչ որ էր առաջ, նահապետական մեծ, 40—50 և աւելի՛ անձերից բաղկացած ընտանիքները բաժանելով, բաժանել են իրանց հետ և իրանց հողը: Այդպիսով հողաբաժինները սկսել են փոքրանալ: Երկրորդ, չէ նալած տնտեսական գրութեան վատանալուն՝ մեր երկրի աղգարնակութեան բաղմանալու տոկոսը էլի շատ մեծ է... Երրորդ, վերջին ուս-թուրքական պատերազմի ժամանակ, թէպէտ քիչ, բայց էլի գաղթողներ եղան մեր երկիրը և քանի-քանի ընտանիքներով գետնազանցան մեր գիւղերում: Այս բոլորի հետևանքը մէկ է՝ հողի քանակութիւնը չի փոխուում, իսկ աղգարնակութիւնը անդադար աւելանում է: Արքունական գիւղացիների տնտեսական գրութիւնը ուսումնասիրողները ասելով³⁾, մեր գիւղացիների հողաբաժինները բոլոր տեսակ հողերի, լարմար թէ անլարմար, դասաւորում է հետևեալ կերպով, զանազան դաւառներում,

Ամեն մի ծուխ ունի՝

Շարուր Գարալաղեաղում. 20—25 դետետին

1) տես. Պ. Պառչեանի «Հացի խնդիր», արտատպած «Փորձ» ամսագր. և «Յեցեր» արտ. «Մուրճ»-ից 1889 թ.
 2) «Մուրճ» № 6 1890.
 3) Շուշեայ և Չարբայելի դաւառի համար միայն լեռնային շերտի մասին է մեր խօսքը:

Ալեքսանդրապոլի գաւառում	15,42
Չանգեագուրում	14,87
Շուշուալ գաւառում	18,98
Ջաբրայիլի գաւառում	10,91

} 1)

Եթէ համեմատելու լինենք այդ գաւառների գիւղացիների հողաբաժինները՝ կը տեսնենք, որ ամենամեծը գալիս է Շարուր-Վարալագեալի գիւղացու բաժինը՝ 20 — 25, իսկ ամենամոքրը Ջաբրայիլինը — 10,91 դեռ. բայց դորանից դեռ չի կարելի եղրակացնել թէ Շարուր-Վարալագեալցին պիտի աւելի լաւ ապրում լինի քան Ջաբրայիլցին: Ընդհանուր հողի բաժինը, քանակութիւնը դեռ չի որոշում փողովորդի բարեկենցաղը: Այդ կախած է նորանից, թէ մեր երկրի այս կամ այն մասի հողերը, որքան չարմարութիւններ և ապահովութիւն են տալիս գիւղացուն: Ժողովրդի բնակչութեան խտութիւնը միայն բաւական չէ բարբորութեան հարցը վճռելու համար: Իշխան Ասալչիկովի բերած թւերից ²⁾ երևում է, որ թէպէտև Բելգիան և Հոլանդիան ամենախիտ բնակեցրած երկիրներն են, համեմատաբար առած Անգլիայի, Գերմանիայի հետ և այլն, սակայն այդ երկու երկիրներից գաղթականութիւնը աւելի թույլ է, քան նոյն իսկ Անգլիայում և Գերմանիայում: Գորա նով նա ապացուցում է, որ միայն երկրի ազգաբնակչութեան խտութիւնը չէ դեր կատարողը, այլ զիցուք՝ Անգլիայի համար ունեն նշանակութիւն նաև հողալին և սոցիալական խնդիրները, իսկ Գերմանիայի համար — միլիտարիզմը:

Մի քառակուսի միջոնի վերայ ապրում են Ռուսիայի

Կուրսկեան նահանգում	2100 մարդ
Նովոքոթիան նահանգում	1367 "
Չերնիգովեան նահանգում	1638 "
Իսկ Օստրէլի նահանգներում	
Լիֆլանդեան նահանգում	1198 "
Կուրլանդեան "	1203 "
Էստլանդեան "	901 "

} 2)

Թէպէտ և Օստրէլի նահանգների ազգաբնակչութիւնը աւելի նոսր է, քան Ռուսիայի միջին նահանգներինը, բայց գաղթականութիւնը աւելի մեծ է: Այդ առաջ է գալիս հողի և հարստութեան անհաւասար բաժանման շնորհիւ: Թէպէտ և միջին հաշով գիւղացիները աչնտեղ աւելի հարուստ են քան Ռուսիայում, բայց և աչնտեղ բազմաթիւ է բանւորների և անհող գիւղացիների թիւը ³⁾...

1) Այսուհետև բոլոր իմ նիւթերս Շարուր-Վարալագեալի մասին քաղած գիտի լինի Պարսեցիու, Ալեքսանդրապոլի և Չանգեագուրի — Չելիսիու, Շուշուալ և Ջաբրայիլ գաւառների մասին Գեղտնիկու Հեռագրաութիւններից:

2) Князь А. Васильчиковъ—Землевлдѣніе и земледѣліе въ Россіи и въ Европ. госуд.—1881 г. изд. втор. тожъ I.

3) Землевлдѣніе и земледѣліе.—Князь А. Васильчиковъ.

Աւելորդ ենք համարում վկայութիւններ բերելու, պարզած լինելու համար, որ շատ անգամ ալնքան ազգաբնակչութեան խտութիւնը չէ որոշում ժողովուրդի լաւ դրութիւնը, որքան ալն պայմանները, որոնք սալիւ են գիւղացուն ապրելու չարմարութիւն. դորքա են 1. երկրի տեղագրական և կլիմայական պայմանները, 2. հողի մշակութեան ձևը և ուժը, արդիւնաբերող նիւթերի լինելիւնը, 3.—հողի կանոնաւոր կամ անկանոն բաժանուելը:

Մեր երկիրը լեռնալին է և քարքարոտ: Հենց դորա շնորհիւ էլ մեծ քանակութեամբ անչարմար հողեր կան երկրագործութեան համար. աղ հողերը ներկայացնում են կամ վատ արօտներ կամ անջուր անապատներ, կամ բոլորովին անպէտք քարակոյտեր: Երկրի տեղագրական աղ պայմանների շնորհիւ, Զանգեզուր գաւառի հետադասող Ստ. Զելինսկու ասելով, գիւղերը չեն կարողանում ընդարձակել և դորա պատճառով էլ մուլքերը մէկը միւսից հեռու հեռու են և բազմաթիւ: Նոյնն է ասում Պարսիցիլին Գարալագեաղ գաւառի մասին, ուր արօտատեղերը շատ են, շնորհիւ նորան, որ երկրի տեղագրական պայմանները անկարելի են զարձնում երկրագործութեամբ պարապելը:

Անչարմար հողը կազմում է բոլոր հողի հետեւեալ մասը:

Շ. Գարալագեաղում	58,16%
Շուշուլ գաւառում	32,25%
Զանգեաղուրի «	50,16%
Զաբրալելի «	45,27%
Ալեքսանդրապոլի գաւառում	28,86%

Իսկ ազգու, ցանքի, արօտի և անտառի տեղերը կազմում են.

Շ. Գարալագեաղում	41,34%
Շուշուլ գաւառում	67,75%
Զանգեաղուրի «	49,84%
Զաբրալելի «	54,20%
Ալեքսանդրապոլի «	71,14%

Այսպիսով Շ. Գարալագեաղի 20—25 դեա. հողարմոնից չարմար է.	10,46	7.
Շուշուլ գաւառում	18,89	» » » 12,84
Զանգեաղուրի գաւառում.	14,87	» » » 7,81
Զաբրալելի «	10,91	» » » 5,97
Ալեքսանդրապ. «	15,42	» » » 10,91

Անչարմար հող, ինչքան ուղում էք, ունեցէք, նա համարեա ոչինչ չի աւելացնում, զլիւսաւորը՝ չարմար հողի քանակութիւնն է: Եւ բանից ինչ գուրս եկաւ: Շ. Գարալագեաղը, որ երևում էր ամենաչատ հող ունեցողը՝ համարեա սակաւահողներին է պատկանում, դեռ մեր վեր ատած գաւառ.

ներում ¹⁾։ Ամենամեծ հողաբաժին՝ այս մեր առած դաւառներում ունի Շուշաչ գաւառը, իսկ ամենափոքր լարմար հողաբաժին՝ Զաբրայիլինը...

Բայց սորանից էլ դեռ բան չենք իմանում գիւղացու բարեկենցաղի մասին, քանի նոյն դեռեատինա հողը կարող է դանազան արդիւնք տալ, նալած թէ արդիւն աբերող նիւթը ինչ է. օրինակ մի դեռեատինան, որը ցանած է.

2)	}	Բրինձ (Նրեան. Նահ.)՝ տալիս է	127,6	րուբ. արդիւնք.
		Սիմինդր (Քութալիսի Նահանգ.)	130,58	»
		խաղող (Նխաղողատուրի Նահ.)	158—335	ր. »
		» Թիֆլիսի Նահ.	175—294	» »
		» Նրեանի Նահ.	100—161	» »
		Յորեն—գեմիլ.Ս.	34	
		» ջրովի	57	

Ինչպէս որ 34-ը—100-ը—335-ը միևնոյնը չեն, ախպէս էլ միևնոյնը չէ թէ գիւղացու ստացած հողաբաժինը ինչ տեսակին է պատկանում. գիւղացին մի դեռեատին խաղողի աչգով կարող է առատ առատ ապրել, մինչդեռ 5 դեռեատին գեմիլ ցորենի ցանքով չի կարող նորանից գոնէ քիչ վատ ապրել, այլ կ'ապրի աղքատ, որովհետև ամեն մի դեռեատին խաղողի աչգուց գիւղացին կը ստանալ 7—8 անգամ աւելի արդիւնք, քան մի դեռեատին գեմիլ ցորենի արտից։

Հասկանալի է դառնում ալժամ, թէ ինչու Քութալիսի Նահանգի նարոպան դաւառի գիւղացին, չը նալած, որ անհամեմատ քիչ հող ունի քան Նխաղետապուրի Նահանգինը. աչնուամենայնիւ աւելի լաւ է ապրում։ Վերմիչևի ասելով՝ Քութալիսի Նահանգի հողաբաժինը 5—7 անգամ աւելի քիչ է քան մնացած Նահանգներինը. ²⁾ Այս կարճ դատողութիւնից երևում է, որ իսկապէս մեծ նշանակութիւն ունի արդիւնաբերող նիւթերի ինչ լինելը.

Ալժամ մի խնդիր էլի մնում է անվճիւռ։ Մի դեռեատին խաղողի աչգին դանազան սող դանազան արդիւնք կարող է ցոյց տալ. դա կախած է հողի մշակութեան ձևից և ուժից, ճանապարհներից, երկաթուղուց, վաճառանոցների հետու կամ մտաիկ լինելուց։ Որովհետև մեր երկրի շատ մասերում արհեստական պարարտացնելը չը կալ, ցանում են մշտական նոյն բույսերը, ուստի դորանից առաջ է գալիս հողի չորնելը, որ և արդէն դառել է մեծ խնդիր... Ալէքսանդրապուլ գաւառի մասին օրինակ Գ. Տէր-Պետրոսեանը ասում է. ³⁾ հողը թէպէտ պողաբեր է, բայց ներհարումս չորնած,

1) Մենք այս գաւառները աւելի ենք իբր օրինակներ, համարելով միւսների պայմաններն էլ նոյնը։ Բաքուայ մշակների մեծ մասը Զանգազուր Գաւառագետագ, Շուշի, Զաբրայիլ գաւառներից են և այլն։

2) Свод матеріал. изсл. Вермишева т. IV

3) Свод. матер. т. IV.

4) Труды общ. Сел. Хоз. № 11—1885 Причины безд. кр. Тер-Петросовъ.

ուժասպառ է եղած դաշտավին մշակութեան անկատարելիութեան շնորհիւ, իսկ բացի վերոյիշեալից մեզանում հողը մշակուում է անդրջրհեղեղեան ձևով, միայն մի քանի տեղ մտցրած են եւրոպական և տեղալին հանգամանքներին չարմար երկրագործիքներ...

Վերջապէս խօսենք մեր նկատած երրորդ այն կէտի մասին՝ թէ հողը կանոնաւոր է դասաւորւած հասարակութեան մէջ թէ ոչ:

Շատ անգամ եթէ հաշուելու լինենք մի նահանգի, գաւառի, գիւղի հէնց թէկուզ չարմար հողի քանակութիւնը և բաժանելու լինենք դորանմշակող գիւղացիների թւի վերայ՝ կը ստանանք ամեն մի գիւղացու համար այնքան մեծ հողաբաժին, որ կը թւայ, թէ այդ քանակութեամբ գիւղացին կարող կը լինէր միջակ ապրել. բայց փորձը հակառակն է ցոյց տալիս.—մի գիւղում 10 դեսետաին հող ունեցողի հարևանը՝ 1, 1/2 դես. ունի՝ կամ ամենին հող չունի: Այս բանը թէև աւելի աչքի է ընկնում սեպհականատէր հասարակութիւնների մէջ, բայց մեր համայնական հողատիրութիւնը դորանից զերծ չէ: Չը նալած այս բանին առ այժմ ուրիշ միջոց չունենք արդիւնքը հաշուելու, իմանալու, քան համայնքի միջին մեծութեան հողաբաժնի վերայ մեր ուշքը դարցնելով, ամեն տեսակ մշակութեան համար առանձին առանձին (խաղողի, բրնձի, ցորենի և այլն): Այս բոլոր խորհրդածութիւններից վնասը պարզ է, որ գիւղացու բարօրութիւնը հասկանալու համար հարկաւոր է հաշու ճորա մի տարւաչ հողաբաժնից ստացած արդիւնքը, հաշուել իւր մշակութեան և իւր անհրաժեշտ ծախքը և տեսնել, որքան ապահովել կարող է հողը: Մեր խնդրի համար նշանակութիւն ունի հացահատիկներից ստացւած արդիւնքը, որովհետև ինչպէս և վերև նկատեցինք, պանդխտութեան գնացողները գլխաւորապէս լեռնալին գիւղացիներն են, որոնք թէ կլիմայական և թէ տեղագրական պատճառներով, չեն կարող դաշտ-տափարակցու նման խաղողի, բամբակի, բրնձի մշակութեամբ պարապել: Գաշտ-տափարակցիք չեն կաղմում մեր պանդխտների գլխաւոր մասը, այլ ճոքա միայն լեռնցի-երկարատև պանդխտների թւի վերայ մի թիւ են աւելացնում: Սակաւահողութիւնը մեր ասած մտքով գաշտ-տափարակցիներին շատ չէ վերաբերում:

ԱՆՏԱՌՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ՄԱՍԵԱՒՈՐ ԱՆՁԵՐԻՆԸ, ՄԱՍԵԱՒՈՐԱՊԷՍ ԵՒ ԱՆՏԱՌԱՊԱՇՏՊԱՆ ՕՐԻՆՔՆԵՐԸ

Ա. Ա.-ի

Թերևս մեր ընթերցողներին շատերին զարմացրած լինենք, ասելով, որ Կովկասը աշխարհքիս ամենամանտառուս երկիրներինցն է: Մենք այնքան ենք գանդատում անտառների բացակայութեան վերայ մեր երկրի զանազան տեղերում, այնքան ենք տեսնում մի ժամանակ անտառ ունեցած և այժմ ամալի դարձրած տեղեր, որ մեզանում արմատացել է այս կարծիքը, իբր թէ մեր երկիրը անտառներով աղքատ երկիր է: Այդ կարծիքը աւելի ևս ամրանում է այն իրողութիւնով, որ Բաթում և Բարու քաղաքները, երբեմն անգամ Անդրկովկասեան երկաթուղին իրանց տախտակների, իսկ վերջինս իւր շղակների պիտույքների համար արտատահման են դիմում: Եւ իրօք, շինութեան փայտը Բաքուն ստանում է հեռու Ռուսիայից՝ Կամա, Ախտակա, Չուսեւալա և այլ գետերի վերին մասերից, ուրեմն հազարաւոր վերստ հեռուից, Արզալի և սորա օժանդակ գետերի վերայով և փոքր ինչ աւելի քիչ տարածութեամբ՝ Կասպից ծովով: Բաթումը բերել է սալիս տախտակներ և փայտեր Խերսոնից, Գալացից, Նեղիպից, Նորեգիպից և մինչև անգամ Հիւսիսային Ամերիկայից: Վերջ ընթեր երկու ղէպքերում այդ ապրանքը պատում է ամբողջ Արմատեան Նւրուպան և լող է տալիս ամբողջ Միջերկրական և Սև ծովերը. իսկ Ամերիկայից խօմ նա համարեա երկրագունդն է պատում: Գիցուք թէ նաւատէրերը, զալով զիցուք Բաթում, իրանց հետ վերցնում են այդ երկիրներինց փայտը շատ էժան գնով, լոկ որպէս նաւի անհրաժեշտ բալաստ, միայն թէ իրանց ճանապարհածախսը ծածկեն, բայց ախար չէ թէ այդ փայտը իւր հարկերի տեղում ծախսեր է նստել մինչ ծովի նաւահանդիստ հասնելը՝ գետերով բերելը, տրանսպորտը անտառի ճանապարհներով և երկաթուղիներով, վեր բերելը և կրկին բարձելը ճանապարհների մի սխտեմից միւսը անցնելու համար և ալն:

Ունենալ անտառներ և զիմել այդքան հեռու—դա գրեթէ ամօթ է և ցոյց է տալիս թէ որքան մենք քիչ դիտենք օգուել մեր երկրի բնական հարստութիւնից:

Բայց որ այդ հարստութիւնը կալ, թւերը այդ ապացուցանում են ամենափայլուն կերպով: Կովկասի անտառների մասին մենք ունինք պատւական աշխատասիրութիւններ Սա. Ս. Մեղվեղչեւի «Կովկասեան անտառները» (Очерки Кавказских лесовъ), տպած Կովկասեան Գիւղատնտ. ընկերութեան ամսագրում (1880 թ., հատոր III) և նոյն հեղինակի զիրքը՝ «Պետական գիւղացիների շարաքերութիւնը դէպի տէրունական անտառները Անդրկովկասում», Թիֆլիս, 1888 թ.: Այդ ուսածքները որպէս նաև Կովկասեան երկրի քարտէզը, ուր նշանակած են անտառային տարածութիւնները, հետեւեալն են ասում:

- 1) Կովկասը (Հիւսիս. Կովկ. և Անդրկ.) ունի անտառներ . 6.913.200 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 7.310.045 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 0.95 դես.
 - 2) Անդրկովկասը, առանձին վերցրած, ունի անտառ. . . 4.801.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 4.707.926 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 1.01 դես.
 - 3) Հիւսիս. Կովկասը, առանձին վերցրած, ունի անտառ. . 2.112.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 2.602.119 հոգի
 - Այսինքն մի հոգու վերայ ընկնում է 0.81 դես.
- Վերցնենք այժմ այն նահանգները, որ կտրոււմ է Անդրկովկասի երկաթուղին: Գործա են՝ Քուսթայիսի, Թիֆլիսի, Գանձակի և Բաքուի նահանգները:
- ա. Քուսթայիսի նահանգը ունի անտառներ. 1.508.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 922.564 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 1.63 դես.
 - բ) Թիֆլիսի նահանգն ունի անտառներ. 1.104.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 922.564 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 1.38 դես.
 - գ) Գանձակի նահանգն ունի անտառներ. 855.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 800.000 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 1.18 դես.
 - դ) Բաքուի նահանգն ունի անտառներ. 428.000 դես.
 - Ունենալով ազգաբնակչութիւն 735.304 հոգի
 - Ուրեմն մի հոգու վերայ ընկնում է 0.58 դես.
- Ընդամենը Անդրկովկասեան երկաթուղու գծի շրջանում անտառների տարածութիւնն է. 3.896.000 դես.
- Որից մասնաւոր անձերին պատկանում են. . . 1.571.000 "
 - Իսկ պետական են (թագաւորական). 2.325.000 "
- որ նշանակում է, թէ պետական անտառների տարածութեան շարաքերը

թիւնը զէպի մասնաւոր անձերի (կալաժատիրական) անտառների տարածութիւնը է՝ 1₃: 1, իսկ ամբողջ անտառալին տարածութեան չարաբերութիւնը զէպի մասնաւորների անտառները է՝ 2₃: 1:

Համեմատութիւնները աւելի հեռու տանելու համար, տեսնենք թէ առհասարակ Կովկասի և նորա Նահանգների ոչ միայն անտառալին, այլ առհասարակ ընդհանուր տարածութեան որ մասն են կազմում անտառալին տարածութիւնները.

ա) Կովկասի (Հիւսիս. Կովկ. և Անդրկովկ.) անտառների տարածութիւնն է մօտ	42.534.305	դես.
Անտառների տարածութիւնն է	6.913.200	»
այսինքն 100 դեսեատին ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 16 ₂ դեսեատին:		
բ) Անդրկովկասի ընդհանուր տարածութիւնն է	22.198.473	»
Անտառների տարածութիւնն է	4.801.000	»
այսինքն 100 դեսեատին ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 16 ₂ դեսեատին:		
գ) Հիւսիսային Կովկասի ընդհ. տարածութիւնն է	20.334.832	»
անտառների տարածութիւնն է	1.112.200	»
այսինքն 100 դես. ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 10 ₄ դեսեատին:		
դ) Վոլթայիսի Նահանգի տարածութիւնն է.	3.223.569	»
անտառներինը	8.104.000	»
10 ⁷ դեսեատինի վերայ ընկնում է 45 ₃ դես.		
ե) Թիֆլիսի Նահանգի տարածութիւնն է	3.699.656	»
անտառներինը	1.104.000	»
100-ի վերայ ընկնում է 29 ₃ դեսեատին:		
զ) Գանձակի Նահանգի տարածութիւնն է.	3.993.908	»
անտառներինը	856.000	»
100-ի վերայ ընկնում է 21 ₄ դեսեատին:		
է) Բաքուի Նահանգի տարածութիւնն է	3.572.989	»
անտառներինը	428.000	»
100 դեսեատինի ընդհանուր տարածութեան վերայ ընկնում է 12 դեսեատին:		

Ահա թւերը Կովկասի և մասնաւորապէս Անդրկովկասի և սորա առանձին Նահանգների վերաբերեալ, թւեր, որոնցով հաստատում է, որ, համեմատած իւր տարածութեան հետ, Կովկասը եւրոպական երկիրներից վատ է միայն եւրոպական Ռուսիայից, Նորեգիայից և Շեդիայից: Եւրոպական Ռուսիայում մի հոգու վերայ ընկնում է անտառալին տարածութիւն երկու ու կէս անգամ՝ աւելի, քան Կովկասում, իսկ Նորեգիայում մի հոգու վերայ գալիս է 15₁₃ դես., Շեդիայում՝ 5₃₁ դեսեատին անտառալին տարա-

ծութիւն (մինչդեռ Կովկասում առհասարակ մի հոգու վերայ ընկնում է 0,95 և կամ մօտ մի դեսետալին անտառ):

Կովկասի անտառները ընտրել են իրանց համար գլխաւորապէս Կովկասեան գլխաւոր և փոքր շղթաները իրանց ճիւղաւորութիւններով, թողնելով ընդարձակ չարթութիւններ իբր բաժին անապատային խոտի, երբեմն և մացառների բուսականութեան: Այդպէս են Կովկասի հովիտների հիւսիսային և արեւելեան մասերը: Նոյնն է և Եւրոպական Ռուսիայում, այս զանազանութեամբ միայն, որ վերջինումս անտառային շրջանները հարիւրաւոր և հազարաւոր վերստեր հեռու են անտառազուրկ շրջաններից, մինչդեռ մեղանում հարիւր և մեծ մասամբ միայն տասնեակ վերստերով բաժանւած են նոքա մէկը միւսից: Բաթումի շրջանի անտառները, որ 17.200 դեսետալին են, հենց կպչում են Բաթում քաղաքին և հանում երկաթուղու գծին: Բաքուի Նահանգում թաւըշեան անտառները Բաքուից 200 վերստ են, Ղուբայինը՝ 150 վերստ, Շամախինը՝ 60 վերստ:

Վերը առաջ բերած թւերից, կարծում ենք, որ այս եզրակացութիւնն է բղիւում, որ եթէ մեղանում անտառի փայտեղէնի պակասութիւն է զգացւում, այդ նորանից չէ, որ անտառները մեղանում պակաս են: Արդ, որոնք են այդ պատճառները: Ահա զոքս՝ կալւածատիրական (մասնաւոր անձերի) անտառների ջնջելը ճանապարհների և բնակութեան մօտ տեղերում, պատահող հրդեհների հետ միասին. իսկ միւս պատճառը նորա մէջն է, որ ճանապարհներից հեռու գտնուող անտառափայտի տրանսպորտի համար չը կազ կանոնաւոր կազմակերպութիւն: Այլ խօսքերով մեր անտառներից գերան հասցնելը մինչև մեծ վաճառատեղերը շատ թանկ է նստում, աւելի թանկ, քան աշխարհքի էն ծալրից մինչ մեր երկիրը տալու արեւը:

Թէ ինչպէս, զորանում ես համոզւեցի՝ կարգաւորվ պ. Նա. Կ. Վասիլիւնի աշխատասիրութիւնը Կովկասեան կաշտերական Գիւղատնտեսական ընկերութեան այս տարւոյ «Գործքեր»-ի մէջ, № 6—9 ¹⁾:

Բանից զուրս է գալիս, որ մեր անտառները մնացել են միայն այնպիսի տեղերում, որտեղից գերան բերելու օրինակ թիֆլիս հասցնելը, մեր անգական հաղորդակցութեան հանգամանքների մէջ, նստում է սարսափելի թանկ. այսինքն միայն ճանապարհածախսը կազմում է գնի կէսը!

Նւ ահա ինչպէս: Գիցուք գերանը բերում է Գորւայ կամ Ախալցիսայի գաւառներից: Գորւայ և Ախալցիսայի գետերի վերայ 8 վերջովանց գերանը ծախւում է 6 ր. 50 կոպէկ, որից մի մասը պէտք է հաշուել իբր

¹⁾ Труды Императорскаго Кавказск. Общ. Сельск. Хозяйства, Июнь—Сентябрь, № 6—9, Тифлисъ, 1890 года.

վարձատրութիւն՝ մի զոգ գոմէջներով կամ եզներով 15 վերստ հեռու անտառից գերանը բերելու համար: Այդ գնի մէջ մտնում է 2 ր. 20 կոպէկ, որ գերան կտրող կապալառուն տւել է անտառի տիրոջ: Ուրեմն գերանի տիրոջ մնաց 4 ր. 30 կոպէկ: Հիմա տեսնենք այդ գնից ինչ օգուտ է ստանում գերանի տէրը: Անտառից մինչ գետը հասցնելու համար գերանատէրը պէտք է վճարէ մի զոգ գոմէջների տիրոջ օրական 1 ր. 50 կոպ. և անտառի բանւորին օրական 80 կոպէկ: Արդ, ծառը կտրելու համար նա վճարում է 40 կոպ., երկու բանւորի, որոնք գերանը իջեցնում են անտառի զաւխվարով—1 ր. 60 կոպ., կէս օրավարձ՝ գերանը անտառի առաջին պահեստը հասցնելու համար—75 կոպ., այդտեղից գերանը հասցնելու համար մինչև գետի նաւահանգիստը—1 ր. 50 կոպէկ: Ուրեմն գերանատիրոջ ծախք նստել է 4 ր. 25 կոպ., իսկ անտառատիրոջ 2 ր. 20 կոպէկն էլ հաշւելով՝ 6 ր. 45 կոպէկ, մինչդեռ, որպէս ասացինք, գերանը նոյն անգում ծախուում է 6 ր. 50 կոպէկ: Ասել է թէ գերանատիրոջ, այդ գնով, օգուտ չի մնում համարեա, քանի որ այդ մնացած 5 կոպէկը գնում է անասունի նալնելուն, գործիքների գրատելուն և այլն:

Գէ հիմա տեսնենք, թէ ինչ է լինում լետոյ այդ գերանի հետ մինչ թիֆլիս հասնելը և խերխանոցից դուրս գալը: Այդ գերանը առնում է լատապանը 12 միւս գերանների հետ միասին և, երկ կողմանի լատի կապելով, լողացնում է մինչ թիֆլիս, ուր նա ծախում է 8 բուբլիով: Նորան դիպուք սղոցում են շոգ սղոցանոցում: Ինչ է աշխատում գործարանատէրը, որ գերանը դիպուք վերչոկանոց տախտակների է սղոցում: 8 վերչոկանոց լայնութեան տախտակներ, երկու ծալրակոճղ և 4 կողատախտակ: Ներկալ գներով առաջինները նա կը ծախի հատը 1 ր. 50 կոպէկով, երկրորդները հատը 75 կոպէկ և երրորդները հատը 40 կոպէկ: Ընդամենը նա կը ստանայ 10 ր. 60 կոպէկ: Արդ, սղոցանոցի տիրոջ այդ սղոցելը, վերչոկին 3 կոպէկի հաշւով, նստում է 1 ր. 74 կոպէկ: Ուրեմն 8 բուբլու հետ, որ նա վճարել է գերանի համար, այդ կ'անէ 9 ր. 74 կոպէկ, որը, հանելով 10 ր. 60 կոպէկի գումարից, կը ստանանք, որ սղոցատիրոջ մնաց 86 չօֆոպ: Ահա այդ 86 կոպէկից նա պէտք է բաժին հանէ իւր համար, սղոցանոցի բեմնտի համար, կապիտալի սոկոսի համար և վերջապէս քաղաքային հարկի համար:

Իսկ այն 1 ր. 50 կոպէկը որ վերցրեց լատապանը? Այդ նրան չը մնաց որպէս զուտ օգուտ: Լատը նա միայնակ չը վարեց, նրան հարկաւոր էր օգնական: Երկու հոգու համար այդ 1 ր. 50-ից նա պէտք է դուրս բերէ 5—6 օրւաչ ուտելածախս և լետոյ, թիֆլիսում նա պարտաւոր է վճարել ամեն մի գերանի համար 30 կոպէկ հարկ քաղաքին:

Այսպիսով մենք ինչ ենք տեսնում: Այն, որ անտառից մինչ գետի նաւահանգիստը գերան բերելը նստում է 4 ր. 25 կոպ., մինչ թիֆլիս հասցնելը ևս 1 ր. 50 կոպ., ուրեմն միասին ճանապարհածախս նստում է

5 ր. 75 կոպ., այսինքն դերանի գնի (8 ր.) մօտ 72⁰/₀-ը, և Նորանից ստացած տախտակների և մնացորդների գնի (10 ր. 60 կ.) 50⁰/₀-ը:

Եթէ մեղանում տախտակը այդքան թանկ է, դորանում ուրեմն ամենից շատ մեղաւոր է անտառապին ճանապարհների վատութիւնը և մենք խօսում ենք այստեղ զլիսաւորապէս մասնաւոր անձերին պատկանող անդամների մասին, որոնք, որպէս վերը տեսանք, Անդրկովկասի չորս նահանգներում (Սրեանի նահանգը չը հաշւած) կազմում են ոչ պակաս քան 1 միլիոն 571 հազար դեսեատին, այսինքն նոյն նահանգների բոլոր անտառների 40⁰/₀-ը:

Իսկ էլ հենց նրանումն է, որ մասնաւոր անձերին պատկանող, ալրապէս կալւածատիրական անտառները, շատ սակաւ բացառութիւններով, փչացրած են ճանապարհներին և բնակութեան մօտ տեղերում, իսկ հեռու անտառներում հազորդակցութեան միջոցները անտանելի են: Եւ այդտեղ էլ ծառեր կտրելու դործը շարունակում է նոյն անտեսու կերպով կատարել, որպէս և միշտ եղած է մեղանում:

Ինչն է արդեօք նպաստել և նպաստում մեղանում կալւածատիրական անտառների այդ կործանիչ տնտեսութեան:

Ամենազլիսաւորը՝ անտառապին սեպհականութեան իրաւաբանական բնաւորութիւնն է: Եւ իրօք, մասնաւոր անձերի անտառները մեծ մասամբ դեռ չափւած չեն տէրութեան օրդաններին: Այդ պատճառով սեպհականութիւնը դեռ մնում է անհաստատ վիճակի մէջ: Գորանից է, որ այդ անտառները մնում են անբաժան՝ մասնակից անձերի մէջ: Որպէս զի սեպհականութիւնը ճանաչւի տէրութիւնից, նոքա, այդ տէրերը, աշխատում են իրանց անտառները կապալառուների տալ, որով նոքա ստեղծում են տիրապետութեան համար փաստապին մոմենտներ, իսկ այդ նպատակին հասնում են նոքա բնակեցնելով իրանց անտառները կապալառուներով: Այդպիսի անտառապին բնակիչները ամենից առաջ աշխատում են իրանց ապահովել վարելահողով և խոտ հարելու տեղերով: Օգնականներ նոքա գտնում են կացնի և կրակի մէջ: Յանկացած տեղում նոքա կարասում են ծառերը և ամառաչ շոքերին կրակի ճարակ տալիս: Այդպէս է վարում ամեն մէկ կապալառու: Աւելցրէք դորա վերաջ նաև այն, որ ամեն մի գիւղ, որի մօտ անտառ կա, իւր տաւարը արածայցնում է մօտ անտառում, որը ի հարկէ փչացնում է:

Ապալիսով եթէ նշանակելու լինինք քոյր բոլոր պատճառներով բաց մնացած տեղերը, կը ստանանք հազարն տարածութիւններ: Իսկ տեղը խօսմ նոր անտառ չի մեծայնում:

Յետոյ կապալառուն շարունակում է իւր կործանիչ դործը: Գիւղատնտեսութիւնից ազատ ժամերը նա նւիրում է իւրան անտառապին գոր-

ծին: Տիրոջից ստանում է թույլտուութեան թուղթ ծառեր կտրելու, առանց որոշելու ոչ տարածութիւնը, ոչ տեղը: Մալխ ամսին նա կտրում է չորս սափեանոց ծառեր, որ նա կամ նոյն տարւալ աշնան և կամ մի երկու տարուց չեա, չորս սափեան գերաններ կտրելով՝ տանում է մօտակալ գետի նաւահանգիստը և վճարելով անտառի տիրոջ որոշւած մասը, ծախում է գերանը վերը վիշւած գներով: Ասացր, որ ծառից նա ջրկում է 4 սափեանոց ուղղաձիգ բուռը, իսկ բուռնի մնացած մասը և ճիւղերը, որոնք կազմում են ընդհանուր մասսայի 60%օ-ը, թողնում է անտառում, որ և փտում է և ճիւղների ու ապագալ հրդէհի կերակուր դառնում:

Այսպիսով միմիայն պետական գանձարանը և մի քանի մասնաւոր անձեր դեռ ևս պահպանել են ճանապարհների և բնակութեան մօտ իրանց անտառները, իսկ մասնաւոր անձերի լաւ անտառները պէտք է որոնել լեռնային, դժւար մատչելի և հեռու տեղերում:

Անտառատէրը ինքը կատարեալ գերի է ստեղծւած հանգամանքների: Եթէ նա ուղենալ էլ ինքը չահեցնել իւր անտառը, նա էլի սախլած կը լինի ընկնել կապալառուների ձեռքը: Հարկաւոր են բանւորներ գիւղացիներից. բայց սօքա էլ ազատ են միայն տարւալ 2—3 ամիսը: Իսկ բաւական է որ տաւարի ցաւ (էպիզօօտիա) երեալ, որ շատ սովորական է մեղանում, ամենքը քշում են իրանց տաւարը անտառի խորքերը և սպասում մինչև ցաւի անցնելը և կամ ցաւին զոհ են զնում: Հետեանք աչն է լինում, որ պակասում են բանւոր ուժեր թէ մարդկանցով և թէ տաւարով: Այդ հանգամանքներում, ի նկատի ունենալով անտառի վատ ճանապարհները, ինչ անէ անտառատէրը, որը որ և է կապալ է վերցրել և ստիպւած է իւր ժամանակին գերանը կամ տախտակը տեղը հասցնել: Տուգանքներ և սնանկութիւն...

Մենք դեռ չենք խօսում կալւածատիրոջ Փինանսական դրութեան մասին, քանի որ կալւածները մեծագոյն մասով զրաւ են դրւած վարկի ընկերութիւնների և մասնաւոր անձերի մօտ, որոնց պահանջած տոկոսները կապիտալի շիջման մասով սովորապէս աչնքան մեծ են, որ անտառը փչացնելու դնով անգամ նա դժւարանում է իւր պարտքից ազատուել: Ել որտեղից նա մտածի կապիտալներ դնել իւր անտառի վերալ, քանի որ տարէնը երկու անգամ նրան սպառնում է հրապարակական վաճառումը բանկային հաստատութիւններից՝ իւր ժամանակին ապառիկները (նեղօթիկա) չը վճարելու համար, իսկ ամեն բոպէ էլ սպասում է իւր մասնաւոր պարտատէրերի կողմից դատարանական գործողութիւնների?...

Եւ ահա թէ ինչպէս է պատահել, որ, Կովկասը, լինելով անտառներով հարուստ երկիրներից մէկը, այս օրւալ օրս ստիպւած է անտառալին ճիւղերի համար չը բաւականանալ իւր փայտով, ալ նաև դիմել Եւրոպական Ռուսիային և Շւեդիա ու Նորւեգիային և դեռ Հիւսիսային Ամերիկային:

Մասնաւոր անձերի անտառները ապահովելու համար ապագայ փչացումներին և իրախուսելու համար անտառատէրերին, որ իրանք զբաղւեն իրանց տնտեսութիւնով, տէրութիւնը արել էր մի շարք օգտակար կարգադրութիւններ, որոնց մէջ, հենցից, կարևոր է 15 մայիսի 1867 թւականի անտառապաշտպան օրէնքը, որով մասնաւոր անտառատէրերին հեշտացրեց հրախիւ իրանց ծառալուծեան համար անտառապահ ծառալողների կորսուսից մասնադէտներ, չատկացնելով սրանց պետական ծառալուծեան իրաւունքները: Նոյն օրէնքով աւելի իրիտ պատիժների են ենթարկւում ծառերի կամաչական կտրատումները կողմնակի մարդկանց կողմից:

Բայց այդ օրէնքը չարգելեց աշտուամենաչիւ, որ անտառատէրերը իրանք փչացնեն իրանց անտառները մինչ աշն աստիճան, որ համարեա ժողովրդական բարօրութիւնը դորանով խախտւած զգաց իրան.

Եւ ահա այդ հանգամանքների մէջ է որ հաստնացաւ 4 ապրիլի 1888 թւականի անտառապաշտպան օրէնքը (Лѣсохранительный законъ 4 апрѣля 1888 года):

Այս օրէնքով ընկան տէրունական խնամատարութեան ներքոյ եւրոպական Ռուսիայի և Կովկասի բոլոր այն անտառները և մացառները, որոնք պահում են աւաղը գետերի, լճերի, ծովերի, ջրանցքների և ջրի արհեստական ամբարների ափերը. լետոյ որոնք պաշտպանում են քաղաքները, գիւղերը, մշակւած հողերը, ամեն տեսակ կալւածները և ճանապարհները, աւաղի հեղեղումներից, լետոյ որոնք պահպանում են գետերի, գետակների ափերը և աղբիւրները՝ փլուզումներից, հեղեղներից, անտառներ և մացառներ, որոնք կան լեռների և սոցա լանջերի վերայ և որոնք պահպանում են գետինը անձրևային հեղեղներից և պաշտպանում ձիւնի կոտորի փլուզումներից ու արգելում առհասարակ սրբնթաց հեղեղներից:

Այդ կարգի անտառները այդ օրէնքը անւանում է պաշտպանելի անտառներ (защитные лѣса).

Բայց ամենաթեթև մի հպեացք եթէ գցելու լինենք Կովկասի տեղադրութեան, տոպօգրաֆիայի վերայ, կը համոզւենք, որ այդ երկրի անտառները, մեծազոյն մասամբ, իրանց բնաւորութեամբ ընկնում են պաշտպանելի անտառների կատեգորիայի տակ, չը նայած որ առ այժմ, Կովկասում պաշտպանելի ճանաչւած են դեռ ևս միայն Հրախիսային Կովկասի Ստաւրապոլի նահանգի մի քանի անտառները, այնտեղ, ուր անտառների ջնջումը հասել է սպառնացող չափերի և կամ ուր առհասարակ անտառների մեծ կարիք է զգացւում: Այդ տեղերի համար առանձին կանոնադրութիւններ են տրւած:

Ընդհանուր հսկողութիւնը անտառապաշտպան օրէնքի գործադրութեան վերայ լանձնւած է պետական կալւածների մինիստրութեան, իսկ անմիջական տեսչութիւնը լանձնւած է անտառապաշտպան կոմիտեաներին, որոնք, նահանգապետների նախագահութեամբ, կազմւած են հետևեալ ան-

դամներից՝ ազնւականութեան նահանգական առաջնորդից, նահանգական դատարանի նախագահից, պետական կալւածների կառավարչից, անտառալին րեւիդոր-ինստրուկտորից, նահանգական ղեմսուօլի նախագահից, երկու տեղական անտառատէրերից, որոնք ընտրուում են նահանգական ղեմսուալին ժողովից: Հարկաւոր գէպքերում, իրր անդամներ, կոչուում է նաև հաղորդակցութեան ճանապարհների վարչութեան ներկայացուցիչը:

Առ ալժամ բաւականանում ենք միմիայն լիշատակելով այդ օրէնքի գոյութիւնը, առանց նորա մանրամասնութիւնների մէջ մտնելու, որ մեզ փոքր ինչ հեռու կը տանէր:

Կը վերջացնենք ներկայ չօղւածը լիշատակելով նաև, որ մասնաւոր անձերին տրւում են նաև պրեմիաներ լաւագոյն տնտեսութեան համար և տէրութիւնից նշանակած սեղերում անտառ զցելու համար: Առաջինների համար տրւում է պրեմիա 300 պոլիմպերիալ և ոսկէ մեդալ, իսկ երկրորդների համար՝ 500 պոլիմպերիալ նպանապէս ոսկէ մեդալով, և միննոյն ժամանակ պետական կալւածների մինիստրին իրաւունք է տրւած աւելացնել պրեմիան ի հաշիւ առաջւայ տարիներում չը տրւած պրեմիաների:

Յիշատակենք նաև, որ պետական խորհրդի 21 մարտի 1888 թ. կարծիքի բարձրագոյն հաստատութիւնով՝ խոտացրած են պատիժները՝ անտառապաշտպան օրէնքը խախտողների դէմ, բացի մանաւանդ ուրիշի անտառի գողութեան և միլասներ տւողների համար:

Անտառները պաշտպանելիների կարգում ընդունել տալու իրաւունքը պատկանում է պետական կալւածների վարչութիւններին, նահանգական և գաւառական ղեմսուալին վարչութիւններին և հաղորդակցութեան ճանապարհների վարչութեան:

ՈՒՒԼԵԱՄՍ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՎՐԴՈՎՄՈՒՆՔԸ ԲՎԱՑԱԻԻ ՊԱՏՃԱՌՈՎ

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ ¹⁾

(Պատմել է Հեղինակին Նիւ-Եօրքի քաղաքացի Մակ Ուիլեամսը, որն Հեղինակը պատահել է երկաթուղու կառքում):

Պատմածս վերաբերում է, այսպէս սկսեց Ուիլեամսը, այն ժամանակին, երբ կրուպանուանւած սարսափելի և անբուժելի բկացաւը տարածւած էր մեր քաղաքումը և ահ էր գցել բոլոր մայրերի վերայ: Այդ ժամանակն էր, որ ես իմ կնոջ ուշադրութիւնը հրաւիրելով մեր փոքր աղջիկ Նելլու վերայ, ասացի՝

—Յս, հոգեակս, եթէ քո տեղ լինէի, թոյլ չէի տալ, որ երեխան կրճի այս սոճի ճիւղտը:

—Էհ, ինչ փնաս ունի, սիրելիս, պատասխանեց կինս և միւնոյն ժամանակը պատրաստեց պաշտպանելու երեխայի արածը, որովհետև կանայքը չեն կարող առանց հակառակելու ամենալաւ խորհուրդն անդամ ընդունել: Իմ խօսքն պսակւած կանանց մասին է:

—Բոլորը գիտեն, նկատեցի ես կնոջս, որ սոճին ամենից անսնդարար ծառն է, որ կրճում է երեխան:

Կինս, որ ձեռքը տարել էր ճիւղտը առնելու, յետ քաշեց իւր ձեռքը: Լաւ երևում էր, որ տիկինս ներքուստ կուռում է և վերջապէս ասաց.

—Դու, ի հարկէ, սիրելիս, այդ բանը աւելի լաւ իմանում

¹⁾ Տուէնը—ամերիկական կատակարան (հումորիստ) է, շատ չափով հեղինակ կրթւած աշխարհում:

կը լինես, կամ գոնէ երևակայում ես, որ գիտես: Բայց բոլոր բժիշկները ասում են, որ սոճի ծառի մէջ եղած հիւթը, տերպինտինը, շատ օգտակար է այն երեխաներին, որոնց մէջքը և երիկամունքը թոյլ են կազմւած:

— Հա՛, եթէ այդպէս է, ես սխալ եմ: Դէ՛ ես չը գիտէի, որ նելլու երիկամունքը և ողնաշարը փնասւած են և որ բժիշկը խորհուրդ է տւել...

— Ո՞վ ասաց, թէ աղջկանս մէջքը և երիկամունքը փնասւած են:

— Միթէ՞, հոգեա՛կս, այս բոպէին դո՛ւ չէի՞ր ակնարկութիւն անողը:

— Ի՞նչ ես բաներ հնարում: Ես այդ տեսակ ոչ մի ակնարկութիւն չեմ արել:

— Ինչպէ՞ս, ազաւնեակս: Դեռ երկու բոպէ էլ չի անցել, որ դու ասացիր թէ...

— Փիլիսոփայութիւններ մի՛ անիլ, ինդրեմ: Ես ինչ գիտեմ, ինչ ասացի: Աղջկայ ճիպոտ կրծելուց ոչ մի փնաս չի կարող պատահել. այդ ինքը էլ լաւ գիտես դու: Թող կրծի իրան համար. ի՛նչ ես ուզում:

— Բաւական է, հոգեակս. ես այժմ հասկացայ քո կարծիքը այդ բանի մասին և կը գնամ կը կարգադրեմ, որ հենց այսօր նելլու համար պատրաստեն երկու կամ երեք սայլ լաւ սոճի փայտ: Իմ երեխան չը պէտք է պակասութիւն զգայ, թէ ինչ է, ես...

— Ա՛հ, գնաս մէկ դու քո գործիղ և ինձ հանգիստ թողնես: Կինդ մի խօսք չը պէտք է ասի, որ դու չը բռնես նորանից: Եւ յետոյ կը վիճես-կը վիճես, մինչև որ ինքը էլ չես իմանալ, թէ ինչից սկսեց բոլոր խօսակցութիւնը:

— Լաւ, քո ասածը լինի. բայց ախր հեռուողութիւն չկայ քո այն վերջին նկատողութեան մէջ, որով...

Բայց իմ անկողնում կինը դեռ չը վերջացած խօսքիցս բռնկեց և դուրս վազեց, հետը տանելով և աղջկաս: Երեկոյեան, սեղանի վերայ նորից տեսայ կնոջս՝ բայց սարսափած, սպրտնած, պատից աւելի սպիտակած երեսով:

— Դիտես ինչ, ա՛ մարդ, շտապեց նա ասելու, դարձեալ մի զո՛հ: Փոքրիկ Գէորգը հիւանդացել է:

— Չը լինի՞ կրուպով:

—Այո կրուպով:

—Բայց միթէ փրկելու յոյս չը կայ:

—Ոչ մի. Տէր ամենակալ, ի՞նչ պէտք է լինի մեր վիճակը:

Այդ ժամանակ դայեակը բերաւ Նելլուն բարի զիշեր ասելու և մօր ետևից զիշերապ աղօթքը կրկնելու: Աղօթքի ժամանակ՝ ինչպէս եղաւ՝ երեխան հազաց: Կինս սարսափեց և երեսի վերայ վայր ընկաւ, կարծես կայծակահար եղած: Բայց շուտով ոտքի թռաւ՝ երկուդից առաջացած հոգսերին նւիրելու:

Նա հրամայեց Նելլու մահճակալը մանկասենեակից հեռացնել մեր ննջարանը և գնաց ստուգելու հրամանի կատարումը: Ինձ էլ քաշ տւեց իւր հետը:

Մեծ արագութեամբ ամեն բան կարգադրւած էր: Կնոջ առանձնարանում զրւած էր մահճակալ դայեակի համար: Բայց կինս յանկարծ մտաբերեց, որ այստեղ մենք շատ հեռացած կը լինենք միւս երեխայից և դժւար վիճակի մէջ կը լինենք, եթէ ցաւեր սկսեն նորանում: Խեղճ կին-արմատս սարսափից կրկին գունատւեց:

Այն ժամանակ երեխայի և դայեակի մահճակալները տարանք զարձեալ մանկասենեակը. իսկ մեր մահճակալները տեղաւորեցինք հարևան սենեակում:

Հազիւ գործը վերջացրել էինք, կինս մտաբերեց, որ Նելլին կարող է Գէորգից վարակւել: Այդ նոր ծագած կասկածը այնպէս վրդովեցրեց նորան, որ մենք չը գիտէինք էլ՝ ինչպէս նորան հանդրատացնենք: Աներևակայելի արագութեամբ դուրս հանեցինք մահճակալները մանկասենեակից: Կինս այնպէս կատաղի կերպով շտապում էր, որ քիչ մնաց ջարդուփշուր անի Նելլու մահճակալը:

Մենք իջանք ստորին չարկը, բայց այնտեղ դայեակի համար չը կարողացանք տեղ չարմարեցնել, մինչդեռ կինս մեծ յոյս էր դրել դայեակի փորձառութեան վերայ: Ստիպւած մենք կրկին տարանք բոլոր իրեղէնները մեր ննջարանը և վերջապէս՝ փոթորիկից ցրիւեկած և նորից բունը գտած թռչունների նման՝ ուրախացանք, երբ կարգադրութիւններս իրազործեցինք:

Կինս անհամբեր վազեց մանկասենեակը անսնելու՝ ինչ է այնտեղ կատարում. բայց շատ շուտ դարձաւ նոր սարսափով և հարցրեց ինձանից:

—Սա ի՞նչ է նշանակում, փոքրիկը ձիգ քնում է:

—Հոգեա՛կս, դու լաւ գիտես, որ մեր փոքրիկը միշտ լաւ է քնում:

—Գիտեմ, գիտեմ: Բայց այժմ նա ուրիշ կերպ է քնած: Նա կարծես... կարծես... այնպէս հանգիստ չունչ է քաշում... Տէր Աստուած, ես վախենում եմ...

—Ռէ՛ հոգեակս, նա միշտ հանգիստ է քնում:

—Այս, այդ գիտեմ. բայց հիմի այդ բանը ինձ կարծես վախեցնում է: Նորան հսկող աղջիկը շատ է ջահել ու անփորձ: Մարիամին ուղարկենք նորա մօտ. ով գիտէ, ինչ կարող է պատահել այնտեղ:

—Այդ ասենք լաւ ես մտածել. բայց քեզ ո՞վ պէտք է օգնի, հարցրի ես:

—Այ, դու կարող ես ամեն բանում ինձ օգնել: Այսպէս սարսափելի ժամանակ ես ոչ ոքի ինքնուրոյն գործ չեմ հաւատալ. ինքս պէտք է անեմ:

Ես կնոջս պատասխանեցի, որ ես անվայել կը համարեմ՝ պառկել և քնել—նորա ուսին գցելով մեր հիւանդ երեխայի խնամելը և հոգատարութիւնը ամբողջ տանջալի գիշերը: Բայց կինս ինձ հանգըտացրեց: Պառաւ Մարիամը զնաց առաջւայ պէս մանկասենեակում մնալու:

Նեղին քնի մէջ երկու անգամ հազաց:

—Ա՛խ, ի՞նչ եղաւ բժիշկը: Ա՛ մա՛րդ, սենեակումը շատ շոք է, անտանելի է: Փակիր վառարանի պահակը:

Կատարեցի պատուէրը. բայց նայելով ջերմաչափին, որ ցոյց էր տալիս միայն 16°, զարմացայ թէ ինչու է այդ աստիճանը շատ երեւացել հիւանդ երեխայի համար:

Այդ ժամանակ կառապանը քաղաքի հեռու ծայրից տուն դարձաւ, լուր բերելով, որ մեր բժիշկը ինքը հիւանդ է և պառկած է անկողնում, կինս նայեց ինձ վերայ մոլոր հայեացքով և յուսահատ ձայնով ասաց.

—Ես այստեղ ճակատագիրս եմ տեսնում: Երևի մեզ այդպէս է վիճակւած: Նա առաջ երբէք, երբէք հիւանդ չէր լինում: Երևի Աստուծու օրէնքի դէմ ենք ապրել, ահա որտեղ է բանը: Քանի հազար անգամ՝ քեզ ասել եմ այդ մասին: Այժմ պառուզները տեսնում

ես: Մեր երեխան էլ չի առողջանալ: Երանի քեզ, որ այս դասը դու չես զգում: Իսկ ես ինքս ինձ չեմ ներիլ երբէք:

Ձը ցանկանալով ի հարկէ կնոջս վիրաւորելու և միայն անզգուշութիւնիցս ես պատասխանեցի, որ ես երբէք չեմ էլ մտածել, թէ մենք անազնիւ, անբարոյական կեանք ենք վարել:

— Ա՛ մարդ, ուզում ես այժմ էլ Աստուծու բարկութիւնը երեխոս գլխին թափես:

Կինս սկսեց լալ և յանկարծ բացականչեց:

— Բժիշկը գոնեա դեղեր ուղարկէ՛ր:

Ես պատասխանեցի՝

— Ի հարկէ: Ահա դեղերը: Ես սպասում էի յարմար բոլակի, որ քեզ հաղորդեմ:

— Դէ, որ այդպէս է, տուր այստեղ շուտով, դէհա: Թէ չե՞ս հասկանում, որ ամեն մի վայրկեանը թանգ է: Ի՞նչ եմ ասում. ինչ եմ անում դեղերը, երբ բժշկի ասելով՝ այս հիւանդութիւնը անբուժելի է:

Ես պատասխանեցի, որ քանի որ երեխան կենդանի է, յոյսներս չը պէտք է կորենք:

— Յոյսներս, ճչաց կինս, հասկանում ես ի՞նչ ես խօսում, չը ծնած երեխայի չափ էլ... Սա ի՞նչ է նշանակում, զեղատոմսակի վերայ գրած է «Ժամը մի անգամ մի թէյի դրար»: Ժամը՞ մի անգամ: Կարծես թէ երեխայի կեանքը փրկելու համար մի տարի ժամանակ ունենք: Սէ, շտապի՛ր, ա մարդ, դեղը բաց արա: Դու մի հացի գդալ ածա. դէհա, շուտ արա:

— Բայց, սիրելիս, յանկարծ հացի դդալից...

— Հոգիս մի հանիլ, Աստուած սիրես՝ մէկ է... Ա՛ռ, ա՛ռ, ընկունիւր այս դեղը, իմ սիրունիկս, իմ քաղցրիկս, մի քիչ դառն կը լինի, բայց յետոյ՝ նեղիկս, մայրիկի աղջիկը, կ'առողջանայ: Այ, այդպէս, այ, այ: Ապրես: Դէ հիմի գլուխդ զիր մայրիկի կրծքին և քնիր, աչքերդ փակիր, փակիր, սիրունիկս... Սէ, ես զխտեմ, նա մինչև էգուց չի ապրիլ: Գիտես ի՞նչ (դարձաւ նա ինձ). եկ դեղը տանք հացի գդալով ամեն մի կէս ժամից յետոյ: Թէ ասում եմ, երեխային մի քիչ էլ բեղադոն տանք, օհօնիտ տանք, կ'օգնեն: Կնաս, ա՛ մարդ, բերես: Բայց սպասիր, լաւ կը լինի՝ ես ինքս զնամ: Դու այսպէս բաների գլուխ չ'ունես:

Շուտով դորանից յետոյ մենք պառկեցինք քնելու՝ երեխայի մահ-
ճակալը մօտիկացնելով կնոջ բարձին: Այս տար ու բերը ինձ լա-
յոգնեցրեց, այնպէս որ հազիւ պառկեցի քունս սաստիկ տարաւ: Բայց
կինս զարթեցրեց:

—Սիրելիս, ասաց նա, վառարանի պահակը հօ բաց չի՞:

—Ոչ:

—Ես էլ այդպէս էի կարծում: Վերկաց մէկ բաց արա՛. սենեա-
կումը ինչ որ շատ է ցուրտ:

Ես կատարեցի նորա խնդիրքը և կրկին քնեցի, բայց մի քանի
ժամանակից յետոյ կինս ինձ նորից զարթնեցրեց.

—Որ երեխայի մահճակալը քո անկողնին մօտեցնես, լաւ կ'ա-
նես. վառարանին մօտ կը լինի երեխան՝ կը տաքանայ:

Ես ուզում էի մահճակալը տեղափոխել, բայց ոտքս դիպաւ
գորգին և երեխան զարթնեց: Կինս սկսեց նորան քնացնել, իսկ ես
մնջացի: Կարճ ժամանակից յետոյ լսեցի քնի մէջ կնոջս շշնջալը:

—Սիրելիս, սազի ճրագու է հարկաւոր, մենք ունենք, բայց
պէտք է բերող լինի: Զանգը տուր, աղախինը գայ:

Քնաթաթախ վերկացայ և յանկարծ կոխ տուի կառուին, որ սաս-
տիկ ճիչ հանեց: Ես քացով տուի նորան, բայց ոտքս դիպաւ բազ-
կաթուին:

—Ա՛ մարդ, ի՞նչու ես լուսաւորում սենեակը. գիտես, որ երե-
խան կարող է զարթնել:

—Մէ՞կ չը տեսնե՞մ, ո՞ր տեղս եմ ջարգել կամ վիրաւորե՞լ:

—Դէ որ այդպէս է, հենց բազկաթուն էլ նայի՛ր... կոտուած
է լինելու անպատճառ: Խեղճ կատու, եթէ քացիդ նորան հասած
լինէր...

—Կատուի դարդը մի թող է՛: Այս բաները տեղի չէին ունենալ,
եթէ դու Մարիամին այստեղ պահած լինէիր, որ նա ինքը կատարէր
այս նորան միայն վերաբերելի դործերը:

—Ա՜՛մ' թ քեզ, դե՛ռ տղամարդ ես. ես կարծում էի, դու կը քաշ-
ես այդպէս բաներ ասել: Ես վրդովու՜մ եմ լսելով, որ դու ինձ
ամենաչնչին օգնութիւններ չես կարողանում անել այսպիսի տարա-
փելի բողոքներում, երբ մեր երեխան...

—Լաւ, լաւ, լաւ. բոլորը կ'անեմ՝ ինչ ուզում ես: Բայց զան-

զակ տալը զուր է, ամենքը քնած են: Որտեղ է զրւած սագի ճրագուն:

—Մանկասենեակի վառարանի մօտ: Նթէ ինքզ ես զնում, այս՛
Մարիամին, որ...

Ես բերի ճրագուն և պառկեցի քնելու. բայց կինս ինձ հան-
զիստ չը թողեց:

—Գիտես, սիրելիս, որ ես քեզ նեղութիւն տալուց ինքս տանջ-
ւում եմ, բայց սենեակը էլի ցուրտ է, ճրագուն քսել չի կարելի:
Վառարանը մէկ վառես: Փայտը դարսւած է, միայն լուցկին վառես
ու կպցնես՝ բաւական է:

Վերկացայ տեղիցս, վառարանը վառեցի և վհատւած կերպով
ընկայ աթոռի վերայ:

—Ինչո՞ւ ես աթոռի վերայ նստում, ա՛ մարդ, կը մրսես: Մտի՛ր
անկողինդ:

Երբ որ պառկում էի, կինս ասաց.

—Մի քիչ էլ սպասի՛ր. Նելլին մի անգամ էլ դեղ ընդունի:

Իեղն էլ տւի: Դեղը փախցնում էր երեխայի քունը: Կինս հէնց
որ տեսնում էր, որ երեխան զարթնել է, իսկոյն նորան մերկացնում
էր ու մարմինը սագի ճրագու քսում: Ես դարձեալ քնեցի և դար-
ձեալ ինձ զարթեցրին:

—Սիրելի՛ս, մի տեղից փչում է և սաստիկ է փչում: Իսկ այս
հիւանդութեան ժամանակ քամին շատ վնաս է: Երեխայի մահճա-
կալը մօտիկացրու կրակին:

Այս պատուէրը կատարելուց ոտքս դարձեալ դիպաւ գորգին. ես
բարկացայ և զայրոյթից վեր առի գորգը վառարան զցելու. բայց
կինս անկողնից թռաւ և ձեռքիցս խլեց գորգը: Մենք մի թեթև
կուռեցինք: Փոքր քնելուց յետոյ ես վերկացայ և կռաւատի սերմ
դրի երեխայի կրծքին:

Որովհետև վառարանում կրակը ինքն իրան չի մնում, հանգ-
չում է, ուստի ամեն մի քսան բոպէն վեր էի կենում և ուղղում
էի փայտերը: Այս հանգամանքից օգուտ քաղեց կինս և նա էլ քսան
բոպէից յետոյ երեխային դեղ էր տալիս: Ժամանակ-ժամանակ, այն
էլ բաւական ստէպ, փոխում էի կռաւատի սերմը և մանանեխ ու
ուրիշ սպեղանի էի զնում երեխայի մարմնի ազատ մնացած տեղե-
րում: Այս բոլորը մի կերպ տանում էի. բայց առաւօտեան դէմ

փայտերը բոլորովին այրեցին և կինս ստիպեց, որ ես զնամ փայտանոցը և փայտի նոր պաշար բերեմ: Ես չը համբերեցի՝ ասացի.

—Հոգեակս, փայտ բերելը շատ էլ հեշտ ու հաճելի չէ: Երեխային կարելի է տաքացնել լաւ ծածկելով: Փոխենք մարմնի վերայ դրած դեղերը և այնուհետև...

Կինս մի աղմուկ հանեց, որ ինչ արած՝ զնացի մի խոտիս փայտ բերի, որից յետոյ ընկալ անկողինս և այնպէս խումիացրի, ինչպէս ընդունակ են Ֆիզիքսպէս և հոգեպէս շատ յոգնած մարդիկը: Առաւօտը լուսաբացին ես զգացի մի խիստ հարւած, որ ինձ սթափեցրեց: Կինս նայում էր ինձ վերայ մոլոր հայեացքով և վրդովմունքից շնչասպառ էր լինում: Մի կերպ ուժը ժողովելով՝ նա ասաց.

—Բոլորը վերջացաւ, բոլորը կորաւ: Տես, ինչպէս երեխան քրտնած է: Ի՞նչ անենք այժմ, Տէր Աստուած, Տէր Աստուած:

—Հեր օրհնած, մի թէ կարելի է այդպէս վախեցնել: Տէր Աստուած, չը զիտեմ՝ ինչ անեմ: Որ այդպէս է, նորից ձրագու քսի՛ր ու զնենք երեխային քամի տեղ, որ...

—Օհ, ինչ խեղառն ետ: Ամեն մի բույն այստեղ թանգ է: Ետևով զնա բժշկի ետևից: Ինքդ, ինքդ զնա՛ — և նորան ասա, գլխին դիր վերջապէս, որ պէտք է զայ այստեղ ինքը՝ կենդանի թէ մեռած:

Ես վազեցի, հիւանդ բժշկին ոտքի կանգնացրի և հետս առի ու տուն եկայ: Նա քննեց նեղուն և յայտնեց, որ նա մեռնելու ամենևին ցանկութիւն չունի: Ես ի հարկէ շատ ուրախացայ, բայց կինս այնպէս բարկացաւ, կատաղեց, որ կարծես թէ բժիշկը նորան վիրաւորել էր իւր խօսքով: Յետոյ նա ասաց, որ երեխայի հազի պատճառը նորա կոկորդը ընկած մի որ և է իրի աննշան գրգռումից է առաջ եկել: Ես կարծում էի թէ կինս բժշկի այդպիսի խօսքերի վերայ դուրս կ'անի սենեակից: Բժիշկը աւելացրեց յետոյ, որ եթէ երեխան մի անգամ սաստիկ հազայ, կոկորդը կարող է մաքրւել: Եւ արդարև բժիշկը տւեց երեխային մի ինչ որ դեղ, որից նորա հազը սաստիկ բռնեց և կոկորդից դուրս թռաւ մի կտոր բարակ բան:

—Ձեր աղջիկը կրուպով հիւանդ չէ, յայտարարեց բժիշկը: Կարելի է նա մի որ և է ճիւղի կտոր կամ ձիպոտ է կրծել, որից մի կտոր մնացել է կոկորդում: Դորանից մի սուսնձին վնաս չի առաջանալ:

—Ես էլ այդ կարծիքի եմ, աւելացրի ես: Բայց մի բան կայ,

որ սոճում եղած տերպենտինը շատ օգտաւէտ է մանկական միջանի հիւանդութիւնների ժամանակ: Սակայն իմ կինը ինքը աւելի լաւ կերպով կը բացատրի ձեզ այդ բանը:

Կինս դատողութիւն անելու գլուխ չունէր: Նա արհամարհանքով շուռ տւեց երեսը և սննեակից դուրս եկաւ: Այդ ժամանակից մեր ընտանեկան կեանքում մէկ միջնադէպ պատահեց, որի մասին մենք աշխատում ենք երբէք խօսք չը բաց անել. բայց և այդ ժամանակից մեր օրերը անցնում են ուրախ և անվրդով:

(Պսակաճներից շատ սակաւներն են ծանօթ պարոն Ուիլիամսի քաշած տանջանքին, ուստի հեղինակը կարծում է, որ այս դէպքի նորութիւնը հետաքրքրական կը լինի բարեմիտ ընթերցողիս համար):

ԱՐԵՎԱԿԻ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

(Կոպիասում արած դիտողութիւններէց)

Ա. ԲԱՍԱՆԹԱՐԻ

(Յնադէտներէ և բժշկիներէ VIII ժողովում կարգացած Պետերբուրգում)

Պարոններ, Մենք ամենքս գիտենք, որ բոլորի կեանքի և զարգացումի համար արեգակի լուսաւորութիւնը ունի արմատական նշանակութիւն. Առանց արեգակին, առանց նորա լուսաւորութեանը, չէին կարող գոյութիւն ունենալ ոչ մեր արօտները, մարդագետիւնները և այգիների կանաչը, ոչ երկրադնդիս բոլոր բուսական աշխարհի անչափ բազմատեսակութիւնը և ոչ աչն կերակրանիւթերի կոտոր, որոնցով օգտոււմ է կենդանական աշխարհը:

Իսկ եթէ այդպէս մեծ է, այդպէս հիմնովին կարեոր է արեգակի լուսը բոլորի կեանքի համար, ապա պէտք է որ այդ լուսաւորութեան մեծ և փոքր ատօմանը, արեգակի ճառագայթների շատ թէ քիչ մասը լիութիւնը զէպի բոլորը՝ արտափայլեն այդ բոլորի վիճակի՝ նոցա զարգացումի վերաբար: Ահա, ներկայ ղեկուցումով ևս առաջարկոււմ եմ ձեր բարեհաճ ուշադրութեանը՝ իմ դիտողութիւնները և նկատողութիւնները, որոնք վերաբերում են աչն առանձնապատկութիւններին, որոնց առաջացրել է արեգակի ճառագայթներից եկած բարիքների ընդունելը բոլորի մէջ:

Արօտների և մարդագետիւնների բուսականութեան վերաբար արեգակի լուսաւորութեան ազդեցութեան վերաբերմամբ դիտողութիւնները ևս արել եմ կոպիասի լազն տարածութեան զանազան մասերում: Կոպիասի լեռնալիս և բլրալիս բնաւորութիւնը՝ չարմարութիւն է աալիս նկատելու և արձա-

Նազրելու ազգային մի ազդեցութիւն, մինչդեռ վերջինս ուրիշ տեղերում զխոռոչի աչքից սպիտաքում է: Եւ արդար՛ իւրաքանչիւր լեռան մի կողմից՝—աչն է հարաւային, հարաւ-արևելեան և հարաւ-արևմտեան՝—ենթարկւում է արեգակի լուսաւորութեան ուժեղ ազդեցութեան, իսկ միւս կողմից՝—աչն է հիւսիսային՝—մնում է արեգակի ճառագայթներից զուրկ: Մինչդեռ հաւասար, հարթ, սակաւալեռոն տեղերում՝ արեգակի լուսաւորութեան աստիճանների մէջ ազդէս սուր ելեէջներ չը կան և արեգակի լուսաւորութեան աստիճանից առաջացած զանազանութիւնը աչքի չի ընկնում:

Դեռնային արօտներ այցելելս առաջին օրերից իսկ՝ զխոռոչութիւններս ուժեղացնելու համար նիւթ մատակարեց: Ես նկատում էի, որ բլրոտ տեղի մի փոքր տարածութեան վերայ արօտային լուսականութիւնը նկատելի կերպով փոխում է. նա երևում է կամ բարձրահասակ, մուգ-կանաչ՝ և կամ կարճ, մի թեթև դեղնած, լեռոյ՝ կամ շատ կերած-կրճած մինչև բուսերի արմատները և կամ քիչ կերած, լաւ պահպանւած: Մի այլ տեսակ զանազանութիւնը կարող էր հետևանք լինել զանազան հանդամանքների, զորօրինակ՝ ջրի առատութեան մի տեղում և սակաւութեան միւս տեղում, կամ տեղական տաւարապահների տնտեսական կարգադրութիւնների, որով մի կտոր արօտը լաւ է համարել կերցնել տաւարին, իսկ միւսը թողնել անշարժ և ալն: Արտիճատն առաջուց ես հետաքրքրւած էի արեգակի լուսի ազդեցութեան խնդրով, ուստի իմ զիտած փաստերի բացատրութեան համար ես վճռեցի ուշք դարձնել այդ հանգամանքի վերայ:

Իսկ երբ համուզեցի, որ արեգակի լուսաւորութիւնը, չիրաւի, ամենին վերջին դիրք չէ խաղում իմ զիտած փաստերի ծագումի գործում, ես սկսեցի համակարգել զխոռոչութիւններս և ստուգել նորանց տեղական տաւարապահներից հարց ու փորձ անելով: Բանից երևաց, որ և նոքա վաղուց նկատել են արօտների լուսաւորւած և լուսազուրկ կողմերի զանազանութիւնը և նոցա գնահատել են տնտեսապէս. Նոքա վաղ ժամանակներից և անուններ են չօրինել այդ կողմերի համար: Թուրքերը արեգակից լուսաւորւած կողմը, որ մեծ մասամբ նախում է դէպ հարաւ, անուանում են գիւնէլ, իսկ հակառակ կողմը դուզեի: Այս բառերը ամենատարածւածներն են Անդրկովկասում: Հայ լեզուում այս բառերին համապատասխանում են ժողովրդական՝ արեգուհի ¹⁾ և ծմակ ²⁾ բառերը: Անդրրկովկասում բնակեցրած ռուս ազանդաւորները անուանում են առաջինը—նա պրիպիօկէ, պրիպրեյկ (արևակէզ) արևային կողմը, երկրորդը—պօդ զատմենիւմ, զախօլօդ, վը խօլօդկե, խօլօդնայա:

¹⁾ Փամբակում՝ արագուհի, Աղուլիսում՝ քրքիւհի, Ալաշկերտի գաղթականները լեզուով՝ արեգիւն:

²⁾ Աղուլիսում՝ ծմակ, Ալաշկերտի գաղթականների լեզուով՝ Հովամ:

Արևի լուսաւորութիւնը, ինչպէս լաւտնի է, իւր մէջ պարունակում է երկու գործող տարրեր—լուս և տաքութիւն: Թէ ալն և թէ միւս տարրերը անհրաժեշտ են բոլորի կեանքի համար: Իմ զիտողութիւնների ժամանակ, ի հարկէ, են աչքի էի առնում արեգակի ազդեցութեան համազումարը, իբրև իրողութիւն, և մտածել անգամ չէի կարող փորձելու լուսի և տաքութեան ազդեցութիւնները ազատելու, թէև շատ երևոյթներ ակննրև կերպով երևում էին կապուած տաքութեան, արեգակի ճառագայթների չորացնող ազդեցութեան հետ: Իմ բոլոր գործը կարող էր կրել և կրում էր իսկապէս վիճակագրական զիտողութիւնների, աչխնքն փաստեր ժողովելու և նորանց միատեսակ դասերի բաժանելու բնաւորութիւն:

Արեգակի լուսաւորութիւնը, կովկասում ունի իւր արդիւնաւետ և ապարդիւն կողմերը բուսականութեան զարգացումի համար: Արեգակի տաքութիւնը, որ աչխպէս անհրաժեշտ է բոլորի աճումի համար, շատ զէպքերում դառնում է հողի չորանալու և բոլորի աճումը ճնշելու պատճառ: Եւ որովհետև ծովի մակերևոյթից աստիճանաբար բարձրանալը (տաքութեան վերաբերմամբ) և ամպերի շատանալը, մինչև մի լաւտնի աստիճան, ազդում են արեգակի լուսաւորութեան էութեան հակառակ, ապա ուրեմն՝ արօտների լուսաւորած և լուսաղուրկ կողմերի արժանիքը փոխում են՝ նալած տեղի բարձրութեան աստիճանին և բուսականութեան աճումի շրջանում տեղի ունեցած անձրևների և ամպամած օրերի քանակութեան:

Արեգակի լուսաւորութիւնը այս բարդող հանդամանքների հետ միասին, առաջացնում է երևոյթներ, որոնց կարելի է բերել արեգակի ազդեցութեան հետեւալ չորս տեսակներին:

ա, Արեգունին, իբրև սաստիկ լուսաւորածը, աւելի վաղ է ազատում ձմեռալ ձիւնից, քան ծմակը, քիչ լուսաւորածը:

բ, Արեգունին տալիս է աւելի թանձր և անդարար խոտ, քան ծմակը:

գ, Արեգունին աւելի շուտ է մլեաւում երաշտութիւնից, քան ծմակը:

դ, Բարձրագիր՝ լաճախ ամպամած՝ տեղերի արեգունու բուսականութիւնը նման է ծմակ տեղի բուսականութեան:

Առաջ բերեմ մի քանի փաստեր և խորհրդածութիւններ բացատրելու և հաստատելու ասածներս և պարզելու ալն գործնական նշանակութիւնը, որ տանում է արեգակի լուսաւորութեան ալս կամ ալն աստիճանը դանաղան տեղերի արօտների և մարդերի համար:

ա, Արեգունին աւելի վաղ է ազատում ձմեռալ քնից, քան ծմակը: Արեգունին լաճախ բոլորովին սղատ է լինում ձիւնից, որովհետև վերջինս արեգակի ճառագայթներից շատ շուտ հալում է: Երևանեան նահանգի, Նախիջևանեան դաւառի Բիտա կամ Բուստ գիւղի բնակիչները՝ գալնան բացելուն պէս՝ ուղարկում են իրանց սչիարների հօտերը արեգունի արօտները, ուր արեգակի տաքութիւնից շուտ է չքանում ձիւնը և բուսականութիւն է պատում, իսկ մի ամսից լիտոյ՝ ոչ-

խարները ուղարկում են աւելի բարձրագիր տեղերը: Գիտերի հոսանքով ձգւած ձորերը և նեղ հովիտները շատ լաճախ ձմերոցներ (ձմեռւայ արօտներ) են դառնում, թէկուզ նոքա լեռնոտ և ծովի մակերևութից բաւականաչափ բարձր տեղում լինէին, որովհետև այդ ձորերի հարանալին լանջերը սաստիկ տաքանում են արեգակից, մերկանում ձիւնից և արածելու խոտ են մատակարարում կենդանիներին: Այդպէս են ալն նեղ հովիտը, որ ձգւում է Ախալքաւաքից դէպ Ախալցխա, Արփաչալի ձորը Գարալագեաղում, Բազարչալի հովիտը Զանգեազուրում, Քասախ դեղինը Էջմիածնի գաւառում, Արփաչալինը—Ալեքսանդրապոլի գաւառում և այլն: Սեանալ լիճը, որ գտնւում է աւելի քան վեց հազար ոտնաչափ բարձրութեան վերայ, իւր հիւսիսարեւելեան կողմից պատած է լեռնաշղթայով, որ նաւում է արեգակին և լաւ տաքանում: Այդ ափը լայտնի է գիւնեւ (տես վերև աղ թուրքական բառի բացատրութիւնը) կամ պաշտօնապէս գիւնեւակի անունով: Այս ափում եղած արօտները երկալն ժամանակ ձիւն չեն պահում, ուստի գործադրում են իւրև արօտ դարձան և նոյն իսկ ձմեռը: Անդրկովկասի արօտների պաշտօնական հետադոտութեան ժամանակ մինչև անգամ խնդիր ծագեց այս արօտները, չը նալելով, որ դոքա գտնւում են ամարանոցների գցելու շրջանում (եապաղների), շարել ձմերոցների (ղշաղների) դասը: Հարաւալին լանջերի վերայ ձգւած դարձան արօտները (արեգունի) մեծ գին ունեն տաւարապահների աչքում: Նոցա ձեռք բերելու համար լաճախ ծագում են վէճեր, որոնք ընդունում են նոյն իսկ շատ սուր բնաւորութիւն:

Ը, Արեգունին աւելի թանձր և սննդարար խոտ է մատակարարում, քան ծմակը: Արեգունի տեղերում աւելի բուսնում են հասկակալ և հոտաւէտ բոցեր, ծմակում՝ լաճախիտները և բարդածաղիկները: Արեգունու խոտը ծանր է, թանձր, ամուր, շուտ է կշտացնում կենդանուն, ծմակի խոտը թեթև է (կոզակների ասելով «անհողի»), շուտ է փչանում դէղերում և բարդերում: Արեգունու խոտը լաւ է որակութեան, իսկ ծմակինը—որքանութեան կողմից: Զանգեազուրի, Շուշալ, Նոր-Բալաղէզի և ուրիշ գաւառների արօտները դիտելուց, ես նկատել եմ, որ նախիրները և հօտերը, երբ բարձրանում են լեռնալին արօտները, առաջին ժամանակները նոքա բուսում են արեգունիներից, ուրտեղ նոքա գտնում են իրանց համար աւելի համեղ կերակուր: Մինչև անգամ և չեսու, երբ արեգունիները արդէն կերւած և մերկացած են լինում, իսկ ծմակները ծածկւած են առատ խոտով, հօտերը հեշտութեամբ չեն թողնում արեգունիները և նախադասում են սոցա խոտերի մնացորդներով կերակուրել: Քան թէ անցնել ծմակների աւելի անհամ խոտերին: Ոչխարների գերացնելը արեգունում աւելի կատարեալ կերպով է չաջողւում, քան ծմակում: Հիւսիսալին լանջերի վերայ արածացնող ոչխարապահները գանգատում են, որ, չը նալելով ամենատաւատ կերպով կերակրելուն՝ նոքա չեն կարողա-

նում կարողին՝ իւզակաթ՝ շաղպցենն ոչխարներին, ուստի չարմար դէպք լինելուց՝ նոքա արօտներ են վարձում արեգունիներում և անտեղ լրացնում են գերացնելը՝ ինչպէս նոքա ասում են (ամբմնի վերայ իւզ քաշելու) նպատակով: Արեգունու խոտը այս դէպքում աղղում է, ինչպէս հացաբոլսի հատիկ, ինչպէս ուժեղ կերակուր: Արեգունում արածացրած տաւարի կաթը աւելի թանձր, իւղալի և համեղ է, քան ծմակի կաթը: Շատ յիստներ ցուց են տալիս, որ արեգունու հացը աւելի սննդարար է ու ծանր, մինչդեռ ծմակի հացաբոլսը թույլ է զարգանում և գարնան սկզբին չաճախ փթում է ձիւնի տակ երկաղն մնալուց, կամ ջրի առատութիւնից:

դ) Արեգունին աւելի շուտ է վնասուում և բաշտից, քան ծմակը: Վերոյիշեալ Սեանայ լճի արեգունի ափը, չը նայելով, որ մօտ 6½ հազար ոտնաչափ բարձր է ծովի մակերևութից, ամառ ժամանակը չորանում է արեգակի տաքութիւնից: Արագած սարի հորաւային և հարաւարեմտեան կողմերը, արևի տաքից կիզում են ամառայ մէջերքը, մինչդեռ միևնոյն սարի հիւսիսային և հիւսիս-արևելեան կողերը երկաղն ժամանակ մնում են կանաչ: Արեգունում բուսականութիւնը վաղ է սկսում իւր զարգացումը և արածելուց ազատ պահած տեղերում շատ մեծանում է և բարձրանում. իսկ այն տեղերում, ուր արածադները շարունակում է անդադար, խոտը մի անգամ ուտելուց, քաղւելուց չեսող՝ ջրի, խոնաւութեան պատճառով՝ վերականգնում է բաւականին դանդաղ: Ուստի՝ արեգունիներում առհասարակ բուսականութիւնը լինում է փոքրահասակ, կարճ, իսկ ծմակներում՝ բարձրահասակ և ուտելուց չեսող շուտ է նորոգում: Չաճաղի բարձրաւանդակներում արեգունիները զրկում են խոտից արդէն գարնան մէջերքը: Բայց այդ միևնոյն արեգունիները անփոխարինելի են դառնում ջրարբի տեղերում, ուր ջուրը միջոց է տալիս երաշտութեան հետ մարտնչելու, իսկ չարմար տեղերում ցանկ կերակրախոտեր, առւտուց կորնդան, շամբալա և գցեկ զեղեցիկ ազդիներ, իսկ սովորական պալմաններում՝ ծմակները, քանի մօտենում են տափարակներին, այնքան դառնում են արեգունիներից աւելի գնահատելի, որովհետև նոքա երաշտութիւնից քիչ են վնասում: Միջին բարձրութիւնների վերայ արեգունիները գին ունեն գարնանը և նոյնպէս ձմեռը. իսկ ծմակները—ամառը և երբեմն աշնանը: Շատ անգամ արեգունիները գործադրում են իրրե արօտներ, իսկ ծմակները— իրրե խոտահարք: Միևնոյն պարագաներում արեգունիները աւելի են վնասում տաքից, երբ հողը աւաղում է: Արեգունիները առհասարակ աւելի մերկացած են լինում և քարքարոտ: Վեժ բարձրութիւնների վերայ արեգունիները չեն վնասում երաշտութիւնից, իսկ ծմակները չաճախ վնասում են ջրի աւելորդից: Աչպիսով՝ որչափ տեղը բարձր է, այնքան գնահատելի են արեգունիները, իսկ որչափ տեղը ցածր է, այնքան գնահատելի են ծմակները:

դ) Բարձրագիւր՝ չաճախ ամպամած՝ տեղերի արեգուն:

Նու բուսականութիւնը նման է ծմակ տեղի բուսականութեան: Ալդպէս են կովկասեան գլխաւոր շղթալի բարձր լեռները և այն նշանաւոր բարձրութիւնները, որոնք գտնուում են Ջանդեաղուրի, Շուշալ, Նոր-Բալաղէղի, Արեքսանդրապոլի, Ախալքալաքի, Ախալցխալի, Բորչալուի, Գանձակի, Ղուբալի և ուրիշ գաւառներում: Եւ առհասարակ՝ բարձր լեռների բուսականութիւնը պակաս սննդարար է, քան միջին և ցածր բարձրութիւններինը: Որչափ մօտենում ենք տափարակին, այնքան բուսականութիւնը դառնում է թանձր և ուժեղ: Տափարակում ցանած աւուղտը աւելի ծանր և ուժեղ է, քան սարաւանդում ցանածը: Բարձր լեռներում ծմակների բուսականութիւնը դառնում է ուտելու անսխորժ, եթէ նամանաւանդ բուսում է այնպիսի տեղերում, ուր ջուրը կոյա է լինում (չի հոսում): Խոտառատ տեղերում՝ բարձր լեռների ծմակները երբեմն մնում են ամենին անչարժ, չը կերւած, բոլոր ամառաւ ընթացքում:

Իմ այս առաջ բերած փաստերը և դիտողութիւնները, ապրիլիսով, ցոյց են տալիս, որ արեղակի լուսաւորութեան ազդեցութիւնը, նալած տեղի պայմաններին, ներկայանում է մի հանդամանքում աւելի, միւսում պակաս օգտակար, իսկ երբեմն և վնասակար արօտների և մարգագետինների բուսականութեան համար: Իսկ մի չափանի տեղի բուսականութեան առանձնաւատկութիւններից կախւած է մի չափանի չափով և՛ տեղական տաւարապահութեան եղանակների հաստատուելը: Զորօրինակ՝ արեղունի արօտները, որոնք խոտը համեմատած ծմակին հետ, կարճ է և չի կարող բաւականաչափ հեշտ լքցնել կենդանու ստամոքսը և նորան կշտացնել, աւելի չարմարութիւն ունեն մանր տաւարի, ոչխարապահութեան համար: Արագած սարի արեղունի կողմը, որ իբրև ամարանոց (ամառաւ արօտ) բարձր դին ունի ալդտեղ թափառող քրդերի աչքում, ամառաւ մէջերքը այնքան մանր և ցածր խոտ է մատակարարում, որ ոչխարը հալիւ հալ է նորանից բաւականանում: Ալդ տեսակ հանդամանքների շնորհիւ՝ այն տեղերում՝ ուր արեղակի լուսի ներգործութեան զանազանութիւնը մեծ է, մեծամարմին կովերին և ոչխարներին պէտք է որոնել աւելի հիւսիսային, քան թէ հարաւային լանջքերում: Ծմակներում արածող կովերը, ոչխարները և ուրիշ կենդանիները, թէև համեմատած արեղունիներում արածողների հետ՝ ունեն աւելի մեծ հասակ ու մարմին և տալիս են շատ կաթ, բայց փոխը կազմաւածքի տէր են, իւղազուրկ և անհամ միս ունեն և ջրալի կաթ են տալիս: Իմ ժողոված բազմաթիւ տեղեկութիւններից երևում է, որ արեղունիներում բուսցրած հացահատիկները աւելի ծանր են, սննդարար ուժով (ղուաթով), քան ծմակներինը: Նոյնպէս արեղունի լեռնալանջերի ալդիներից ժողոված խաղսղը և միրզը՝ համեմատած ծմակին հետ՝ աւելի քաղցր են և համեղ: Բայց և այս դէպքում արեղակի շատ օտարակ ներգործութիւնը նւաղեցնում է արեղունիների ջրի քանակութիւնը (երբ անպէտք ջրի բացակայութիւն է), որ կարեսր է բոսերի համար և պակ-

սացնում է ալզ տեղերի տնտեսական արժեքը: Հասկանալի է ուրեմն, որ այս կամ այն ընձնալանջում գտնուող հողի վերջնական զնահատուժիւնը կարող է տեղի ունենալ այն փամանակ, երբ բոլոր նպատաւոր և աննպատա հանգամանքները միասին հաշւի են առնւած:

Լրացնում ստածներս մի քանի խօսք աւելացնելով արեգունիների և ծմակների: հողի և բուսականութեան մասին:

Արեգունիների հողը, համեմատած ծմակներիին հետ, երես է, ոչ փուխը, պակաս հարթ, պատռոտւած, քարքարոտ, խաղխուած, քանդոտւած և տեղ-տեղ մինչև ստորադիր հիմնական հողաչերտերը բացւած: Արեգունիներում հողը աւելի շուտ է ճարճըքում երաշտութիւնից, աւելի է կարծրանում արկպակի լուսից և գարնանը արածող տաւարի ստակոխելուց, աւելի է ուսուում կենդանիներից, որոնք նախադասում են արեգունիների բոլսերի արմատները կրծել և գուրս հանել, քան ծմակներում արածել. և վերջապէս՝ աւելի են ենթարկւում ընձնավտակների և հեղեղների քանդող և աւերիչ ներգործութեան: Ալզ հեղեղները՝ մեծ արգելք չը տեսնելով բոլսերի կողմից, քերում և տանում են արօտների հողը և ճանապարհներ են բաց անում հողի երեսին բացւած ճաքերով: Ծմակները, ընդհակառակն՝ ունին աւելի հարթահաւասար հող, չը պատուած—խոտագորդով և իրանց մէջ աւելի ջուր են պահում:

Ինչ վերաբերում է բուսականութեան բնաւորութեանը՝ նա ահա այս տեսակ է: Հիւսիսային ընձնալանջերում, ծմակներում, աւելի լաճախ են այս բոլսերը. ցողկալ (չահտեար, շեհեթուրան Alchemilla), դանաղան տեսակի խնձորախոտ (երեքնուկ, իւչեարփաղ, իւչղանաղ, սերալըլը (Frifolium), չատ տեսակ հասկարուսեր, վերօնիքա (veronica), հզօրուկ (Potentilla) դաւնատերև (վղնոց, առիւծաաամ Leontodon), մեխակ (չահողրամ Dianthus), տեղ-տեղ կարմրասող (Astrantia), ասըրղալ (Deratrum) և այլն: Յողկալը տեղ-տեղ ալնպէս բազմաթիւ է, որ կաղմում է բոլոր բոլսերի 50—80%, խոնձորախոտը՝ 5—50%, հասկարուսերը՝ 10—50%, վերօնիկան, հզօրուկը—պատում են արօտները ամառու առաջին կէտում, դաւնատերերը թաղմ տեղերում կաղմում է բոլսերի 5—60%: Բացի վիշաձներիցս կան և չատ ուրիշ բոլսեր, սրոնք, պէտք է նկատել, ալնքան բնասորչ չեն ծմակների համար և ալնքան բազմաթիւ չեն, որ արժենար նոցա անունները նշանակել: Արեգունիներում լաճախ սլատահում են. հասկարուսեր (20—60%) նամանաւանդ խոնձորակալիներից և մաղախոտերից, ալնուհետև իշաուուտ (Sotus), ծոթրոն (ծնթարսն, Thymus)՝ 5—60%, աուուտ (Medicago), մեղրալուտաս (Melilotus), օչինդր (եաւչան, Artemisia), փուչեր և այլն: Արեգունու բոլսերից չատերը ունեն սաստիկ բուրմուռք, օրինակ՝ ծոթրոնը, օչինդրը և ուրիշները: Արեգունում գարնան առաջին չարաթները պատահում են ալն բոլսերը, որոնք աւելի լաաուկ են ծմակներին: Անտառները կովկասում ըստ մեծի մասին պահպանւել են ծմակներում: Ալս երեւոթի պատճառն ալն է,

որ սուաջինը՝ բնակիչները վաղ ժամանակներից գնահատել են արեգունիները՝ գարնան արօտները և կտրատել, խորտակել են անտառները ան նպատակով, որ սուտար արածացնելու և վարուցանքս անելու համար տեղ բաց անեն, ըստ որում վառելիքի պահանջ էլ ժողովուրդ է եղել մօտ տեղերից և երկրորդ՝ ծմակները քիչ են վառում շուրջ և աղպիտով՝ անտառ բուսանելու համար լարմարութիւններ են ներկայացնում:

Ահա այսպէս են արեգակի լուսաւորութեան աստիճանից առաջացած փաստեր և երևութիւնները, որոնք դիտելի են Կովկասի լեռնոտ մասերում: Այիտոս, որ մինչև այժմ ալս ինչորի վերաբերմամբ ճիշդ և երկարատև դիտողութիւններ չատ քիչ են կատարւած և չեն գործադրւած անպիսի հետազոտութիւններ և լաբորատորիալի փորձեր, որոնցով կարելի լինէր ճիշդ կերպով որոշել կանաչի, խոտի, դանազան լեռնալանջերի տաւարից ստացած արդիւնքների կշիռը, բաղադրութիւնը և սննդարարութեան արժէքը: Մինչդեռ այդ տեսակ հետազոտութիւնները չատ օգտաւէտ և հետաքրքրական են և կարող են լոյս զցել անպիսի երևութիւնների վերաջ, որոնք մինչև այժմ պարզ որոշւած չեն և ներկայումս քննուող տեսակէտից չուսումնասիրւած:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ արեգակի մեծ թէ փոքր աստիճան լուսաւորութեան հետ կապւած երևութիւնները պէտք է տեղի ունենան Եւրոպական Ռուսիայի շատ տեղերում: միայն թէ նոքա անքան սուր և բնորոշ չեն, որ առանձին կերպով նկատեն և չեչտեն: Կովկասի իրականութիւնից առած որոշ գծւած երևութիւնները թեկադրում են դիտողութիւններ անելու և Կովկասից դուրս երկիրներում:

Յաճախ մենք տեսնում ենք, օրինակ, որ թէ հիւսիսային և թէ միջին ու հարաւային Ռուսիայում, զիցուք, մի կտոր խոտահարքի խոտը լաւ է, սննդարար և շանր, իսկ միւսինը, որ ըստ երևութիւն նույնաման հանգամանքներումն է, սակաւասննդարար և թեթեւ է, որ մի գիւղի կիժան կովը աւելի կուշտ է, ամրակազմ, դեր, ունի իւղալի և թանձր կաթ, իսկ միւս՝ հարեան գիւղինը—լղար է, ծանր գերացող և տալիս է հեղուկ և անհամ կաթ, որ մի տնտեսութեան իւղ և պանիրը համեղ են, բարձր տեսակի, զիմացկան, իսկ միւսինը—միջակ լատկութեան և շուտ փչացող: Գուցէ՛ մանրամասն հետազոտութիւնը ցոյց տար, որ դանազան աղբող հանգամանքների շարքում պակաս դեր չէ կատարում և արեգակի լուսաւորութեան աստիճանը ան հողում, ուր գտնւում է տնտեսութիւնը: Ի հարկէ աղտեսակ աղբիցութեան մասին խօսք կարող է լինել ան տեղերում, ուր երկիրը ունի թեքումներ դէպի աշխարհի դանազան կողմերը: Այդ տեսակ տեղեր շատ կան Եւրոպական Ռուսիայում՝ և աղբաբնակութիւնը, ընդհանուր առմամբ, արել է, ըստ երևութիւն, բաւականաչափ դիտողութիւններ, թէև մանր-մանր և անկապ, որոնք միասին ժողովւած կարող են մեծ դին ունենալ մի քանի եղրակացութիւնների և ընդհանրացումների համար: Եւրոպա-

կան Ռուսիային վերաբերեալ եւ մինչեւ անգամ ունեւ ալդ տեսակ մի քանի տեղեկութիւններ, բայց նորա զեռ սակաւաթիւ եւ ժողոված եւ առանց որոշ կարգի (Վորոնժեան նահանգի մի քանի տեղերում արեղունիները համարոււմ են աւելի չարմար բոսաւանների համար, իսկ ծմակները և միւսները—ցանքսերի համար, ուրիշ տեղերում արեղունիները վարոււմ են, իսկ ծմակները խոտատեղ շինոււմ):

Յիշեմ վերջապէս և մի քանի փաստեր, որոնցով նկատոււմ է արեղակի զանազան աստիճանի լուսաւորութեան ազդեցութիւնը:

Վաղուց նկատոււմ է, որ անասուններում բուսնող խոտը, սակաւանունդ, սակաւագին է, թէև բաւականաչափ նա մեծանում-բարձրանում է: Այդպէս է և ծառախիտ ալգինների խոտը: Այս տեղերի բոլոր վատ չատկութեան պատճառը նորա ստորին անլոյս մնալն է: Նոյնպէս վատ է ալն խոտը, որ բուսնում է խիտ ցանկապատների, բարձր շինութիւնների, հիւղերի սուէրներում և ալն: Սակալն երբեմն հարաւում՝ արհեստական կերպով պաշտպանում են բոլոր արեղակի լոյսից օգտելով և ծառերի սուէրից ալն տեղերում, ուր երկիրը կաշ ոչ թէ արեղակի լոյսի սակաւ ուժից, ալ նորա չափազանց մեծ չորացնող ազդեցութիւնից: Չուր եղած տեղերում՝ ծածկելու անհրաժեշտութիւնը պակասում է և կարելի է դառնում թողնել, որ բոլորը ալատ օգտեն և կշտանան հարաւային արեղակի կենսարար ճառագայթներից:

Բաւականանալով առաջ բերածներովս, վստահանում եմ ասել, որ արեղակի լուսաւորութեան աստիճանի գիտնական հետազոտութիւնը և մեծ շրջանում կատարուող տեղական գիտողութիւնների ժողովումը—ծառայութիւն կը մատուցանեն գիւղատնտեսական գիտութեանը, տալով նորան կարողութիւն՝ բուսաբուծութեան և անասնաբուծութեան մի քանի քիչ ուսումնասիրած երևոյթները բացատրելու և գիւղատնտեսութեան գործնական նպատակների համար մի քանի նրահանգներ ձեռք բերելու:

ՆԿԱՐԶԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԳԵՈՐԳ ԲԱՇԵՆՋԱՂԵԱՆԻ

ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ ¹⁾

Սիրելի ընկեր Ս.

Պատասխանում եմ երկրորդ նամակիդ: Դու տալիս ես ինձ բազմատեսակ հարցեր ու խնդրում ես, որ մի առ մի պատասխանեմ: Վաշխատեմ լիութիւն տալ ցանկութեանդ, սակայն ներողամիտ պէտք է լինես դէպի ինձ, եթէ ուզածիդ համեմատ գոհացուցի: չ'երևայ քեզ իմ այս պատասխանը: Դու հեռու հիւսիսում, անշտուած ծննդավայրից, ուր անց ես կացրել մանկութիւնդ, անկարող ես սառնասիրտ ու անտարբեր մնալ դէպի վաղուց անցեալը: Քեզ հետաքրքրում է այն ամենը, ինչ որ սուրբ և նւիրական պէտք է համարել ամեն մի պարտաճանաչ և քաղաքակիրթ մարդու համար: Դու ինձ պարտաւորեցիր այցելել քեզ հետաքրքրուող խլացած անկիւնները և տեղեկութիւն տալ նրանց այժմեան դրութեան և վիճակի մասին: Քո խնդիրքը եթէ ոչ բոլոր, գոնէ մասամբ կատարեցի և պէտք է ասած, որ ի սրտէ ուրախ եմ, քանի որ քեզ օգտակար լիւնելուց զատ՝ ինքս էլ բարոյապէս բաւականաչափ օգուեցայ: Բայց թողնենք այս բոլորը և խօսենք գործի մասին: Ահա սկսում եմ իմ թոյլ գրչով հաղորդել քեզ մի քանի բան:

Ինչպէս չալանի է, դեղաբւեռասների պատմութիւնը, խօսելով երկրագնդիս բոլոր ազգութիւնների ճարտարապետութեան զարգացման

¹⁾ Նամակ առաջին, տես «Մուրճ» 1889, № 11.

մասին, հայկական ճարտարապետութեան վերաբերեալ հաղորդում է մտաւորապէս այս միտքը՝ «հայերը թէպէտ սկզբում բիւզանդական արեւաթի ազդեցութեան տակ սկսեցին զարգացնել ճարտարապետութիւնը, սակայն հետզհետէ մշակելով ու կերպարանափոխելով՝ ստեղծեցին մի ինքնուրոյն ձև»։ Եւ այս ինքնուրոյն ձևի նկատմամբ գովասանքով է վերաբերում պատմութիւնը։ Եւ իրաւ Սանահնի և Հաղպատի սրբավայրերը կարող են ապացոյց լինել վերոյիշեալ պատմութեան կարծիքին։ Այս սրբավայրերը այնպիսի հատընտիր գեղարեստական ստեղծագործութիւններ են, որոնցից գերազանցը հարկ չէ ցանկալ։ Վերցնենք օրինակի համար Սանահնի վանքին կից «զրատուն» կոչւած շինութիւնը։ Նորա միապաղաղ քարէ սիւները այն աստիճան հրաշալի քանդակներ են պարունակում իրանց մէջ, որ պիտի մտնէին ինքնուրոյն հասարակ մահկանացու լինելը։ Նա ճարտարապետական գերագոյն հմտութեան հետ միասին ունեցել է և ստեղծագործական ազնիւ ճաշակ։ Նա իւր տաղանդի ամբողջ ուժը միմիայն մի սիւնի վերայ չէ արտայայտել, այլ ամեն մէկին ներքէլ է միմեանցից բոլորովին տարբեր շնորհալի զարդեր։ Եւ այս բազմատեսակ և բազմաձև սիւների մէջ տիրում է մի մեղմ գեղարեստական համերաշխութիւն ու ներդաշնակութիւն, և հենց սորանուն է կայանում զորա բարձր արժանաւորութիւնը։ Այս բանը պէտք է համեմատել այն բազմակերպ երաժշտական հնչիւններին, որոնք թէպէտ և ամեն կողմից զանազանում են միմեանցից, սակայն, շնորհիւ ճարտարութեամբ դասաւորելուն, ստացւում է ախորժալուր եղանակ։ Պէ՛ կամարները, թէ՛ կամարաձև առաստաղը և թէ՛ շինութեան միւս մասերը հասցրած են այն կատարելագոյն համաչափութեան, որ այցելուն զգում է մի տեսակ թեթևութիւն, նորա սիրտը չի ճնշւում քարերի ծանրութեան ներքոյ, չի երևակայում նորա քանդակը ու փլատակների տակ մնալը։ Բացի այս, պարզ երեւում է, որ վարպետը իւր արեւսան ու ճարտարութիւնը փողով վաճառելու ձգտումից հեռու է եղել։ Նա սիրել է իւր արեստը և իւր բարոյական կրքերը գոհացնելու համար կոշտ քարի վերայ արտայայտել է սրտի իղձերը, ինչպէս բուն բանաստեղծը։

Սիրելի ընկեր, խոստովանւում եմ, շատ թոյլ կերպով նկարագրեցի «զրատունը», սակայն գիտե՛մ երևակայութեամբ կը լրացնես

ու կը պատկերացնես առաջդ: Բայց ցաւում եմ ի սրտէ, որ մի փոքր ներքև պէտք է հիասթափւես: «Գրատուն» կոչող շինութիւնը, երևի մի ժամանակ, մեզանից շատ առաջ, իսկապէս զրատուն է եղել և, ինչպէս երևում է, մեր նախորդները զիտմամբ մտքի ու ոգևորութեան արտադրութիւնների համար են ծառայեցրել այս զեղեցիկ զեղարւեստական շինւած քը, բայց այժմս այդ զրատունը մասնին է փոխւած: Յատակը քարուքանդ է արած և զինու մեծ ու փոքր կարաններ է մէջը թաղւած, որոնցից մի քանիսը լցւած են զինով ու ծածկւած են խնամքով, իսկ միւսները բաց են թողւած, որոնց միջից անախորժ հոտ է բուրում: Այս ու այնտեղ ոչ խարների հոտած մորթիք են կախւած: Պէտքական ու անպէտք անտեսական գործիքներ ու ջարդւած անօթներ անկարգ ցրւած են ամեն տեղ: Եւ այս բոլորը խառնւած է աղբի հետ ու ծածկւած է թանձր կեղտի տակ: Մառանի սիւները ու պատերը, անկիւնները ու կամարները կեղտի ու սարգի ոտայնների տակից առանց լեզու կարծես ողբում են իրանց դառն վիճակը և շինութեան արտաքին տեսքը կրկնապատիկ ողբալի տեսարան է ներկայացնում, պատերը գրեթէ ամեն տեղ ձեղքւած են, որոնց միջից բոյսեր, մինչև անդամ մանր թփեր են զուրս ցցել իրանց մարմինները: Կտուրը ամբողջապէս ծածկւած է խոտով, ինչպէս արօտատեղի: Այս բոլորը կենդանի վիշտ է այն իրողութեան, որ դարերի ընթացքում մարդու աչքից ու ձեռքից անուշադիր է եղել թողած: Այսպիսի տխուր տեսարանից յետոյ պէտք է գալ այն եզրակացութեան, որ եթէ ոչ մօտիկ ու պազայում, դոնէ հաստատ կարելի է գուշակել՝ որ մի քանի տասնեակ տարիներից յետոյ այս զեղարւեստական դարդը, որ կարող է քաղաքակիրթ ժողովուրդի համար պարծանք համարել, կրկնում եմ, այս զարդը նոյնպէս պէտք է անցնի մեր անհաշիւ աւերակների շարքը: Եւ այս իրողութիւնը պէտք է կատարւի այժմեան մեր «Թարմ ողբերի», «ինտելիգենտ երիտասարդութեան» աչքի առաջ:

Մառանից զուրս, մի ուրիշ տեղ, մի պատի տակ համարեայ ամբողջապէս հողի տակ ծածկւած սրբատաշ քարերի հետքերն են նշմարւում: Մերունի զիւղացիք պատմում են, որ այդտեղ մի թագաւորի շիրիմ էր, բայց քանդուեց ու հողի տակ անհետացաւ:

Իսլով «խաչաքարերին», որքան ինձ յայննի է, այդ խաչքարերը

Հին ժամանակներում, սիւնածէ կանգնած են եղած զերեզմանների վերայ, իբրև տապանաքարեր: Դրանք ներկայացնում են միապաղաղ կարմրագոյն քար զանազան մեծութեամբ: Որպէս զի դու կարողանաս գաղափար կազմել, կ'աշխատեմ մօտաւորապէս նկարագրել նրանց ձևը: Ամենամեծերը ունեն համարեայ երեք արշին բարձրութիւն, մի արշին ու կէս լայնութիւն և կէս արշին հաստութիւն: Մի երեսը ամբողջապէս ծածկւած է անթիւ ու անչափ քանդակներով: Կոպիտ քարի միջից դուրս են բերած զանազան հիւսւածքների, օրնամենտների, խաչեր և ուրիշ բազմատեսակ զարդեր, որոնք անշուշտ ունեցել են իրանց համապատասխան անունները, բայց ես չը գիտեմ ինչպէս անուանեմ: Պէտք է զարմանալ վարպետի հնարագիտութեան վերայ, թէ ինչ ճարտարապետական հմտութեամբ է յօրինել այս նուրբ ձևերը, բայց կրկնապատիկ զարմանալի է թւում թէ վարպետը ինչ աստիճան հոգով ու սրտով նւիրւած է եղել իւր արեստին, որ այս աներևակայելի կախարդական հիւսւածքները դժոխային համբերութեամբ հասցրել է կատարելութեան զազաթնակէտին: Աչ մի Փրանսիական կրօնականներ իրանց նրբութեամբ չեն կարող համեմատել անզգայ քարի վերայ դրոշմւած հիւսւածքներին: Բայց այսպէս թոյլ նկարագրութեամբ կարող ես մօտաւորապէս, հարևանցի կերպով գաղափար կազմել, իսկ զմալլելու — հիանալու համար հարկաւոր է սեպհական աչքով տեսնել: Այդ խաչքարերի մի մասը դարսւած են քանդւած զանազան պատերի արանքների մէջ, երևի քամուն արգելք լինելու համար և բազմի բերմամբ իրանք էլ ազատ են մնում վտերուց, իսկ միւս մասը բաց օթիտակ, ենթարկելով բնութեան արհաւիրքին, մի քանիսը ջարդւելչ մամուլներով ծածկւել, ուրեմն և այլանդակւել են: Կնքս հետաքրքրութիւնից շարժւած, քարերի կոյտերի մէջ մի կարմրագոյն քարի կտոր, որ կիսով չափ թաղւած էր հողի մէջ, հանեցի ու շուրաւի: Դա նոյնպէս խաչքարի մի մաս էր, բայց ժամանակի ընթացքում հողը մաշել էր նորա գեղեցիկ դէմքը: Այդ պատմական չիշատակները, որոնցից ամեն մէկը մի-մի ընտիր զարդ կարող էին համարւել հարուստ թանգարանների համար, մեր լոկ տղիտութեան պատճառով ջնջւում են աշխարհքի երեսից: Մենք որ անկարող ենք այսպիսի զան-

ձերը խնամելու, մենք որ չը գիտենք մեր ունեցածը պահպանել, մենք որ զուրկ ենք մեր նախորդների յիշատակները գնահատելու շնորհքից, ուրեմն իմ կարծիքով շատ հեռու ենք իսկական քաղաքակրթութիւնից, ուրեմն և պարտաւոր ենք շատ հեռու լինել այն ցնորքներից, թէ այժմեան մեր երիտասարդ ոյժերը կարող են շոշափելի զարկ տալ ժողովուրդի մտաւոր ու բարոյական զարգացման: Բայց կը թողնեմ այս տեսակ դատողութիւնները, քանի որ սա չէ իմ նպատակը, միւսնոյն ժամանակ և չէ քո ցանկացածը: Ար շարունակեմ դարձեալ խօսել քեզ հետաքրքրող առարկաների մասին:

Ամեն մի քաջափոխում պատերի ու սիւների վերայ կարելի է տեսնել զանազան մետաղի գործիքներով խորը փորագրած ու օանմահացրած պատահական այցելուների ու անցորդների անուշները: Վերջապէս, որ կողմն էլ նայես՝ միսիթարական բան չես տեսնի. մի տեղ քանդուում է, միւս տեղ արդէն քանդւած է, մի ուրիշ տեղ հիմքից կործանւած ու բոլորովին անհետացած է: Այստեղ կ'ընդհատեմ նամակս, թէպէտ դեռ շատ բան կայ խօսելու, և խոստանում եմ հետևեալ նամակովս հաղորդել սորա շարունակութիւնը:

ՍՈՒՐԲ ԼԵԶՈՒ

Ղ. ԱՂԱՅՆԱՆՅԻ

Ներկայումս մեր կրաւորական բալը գրում են հինգ տեսակ ուղղագրութեամբ, ինչպէս.

ա. ուում, ուել...

բ. վում, վել...

գ. աււմ, աււել...

դ. վում, վել...

ե. աււմ, աււել...

Լաւ չի լինիլ արդեօք, որ այս զանազան չափաբար ունեցող կոտորակները մի ընդհանուր չափաբարի վերածենք լեզւի հնչական և պատմական ուղղագրութեան օրէնքով: Այդ զանազան չափաբարներն են՝ վ, ու, ա, խնդիրը, ինչպէս տեսնում էք, այդ երեք գրերին է վերաբերում. պէտք է հետազօտի և իմացել այդ երեք գրերի մէջ եղած հնչական տարբերութիւնը և սրբ ուղիղ դատել, ալն ընդունել միայն:

Նախ և առաջ տեսնենք ինչպէս են հասկացել այդ բանը մեզանից առաջ, և երեքից սրն են ընդունել աշխարհիկ լեզուի գրելիս: Ասում են աշխարհիկ լեզուի, որովհետև մեր կրաւորականը իբրև աշխարհիկ լեզւի սեփականութիւն, պարտաւոր ենք այնպէս գրել, ինչպէս սովորաբար գրում ենք մի որ և է բարբառով, երբ ուզում ենք հաւատարիմ մնալ նորա հնչիւնաբանական և քերականական օրէնքներին:

Արարատեան բարբառի համար ունինք անմահ Վէրք Հայաստանին, որի մէջ հանճարաւոր հեղինակը կրաւորական բալերը բոլոր ժամանակներում գրել է վնով—վում, ված, վել, վող, ալ և տված, տարվալ, տվեց, օսմանցվի, լվնալ, որից երևում է, որ հաւատարիմ է մնացիլ բարբառի արտաբերութեանը, ալլապէս չէր գրիլ մինչև անգամ կարթալ, քիսալ խիեց, քցած, հաքնել, և ալն:

Աբովեանցի պէս է վարել և Ախվերդեանը նախ քան «Վէրք Հայաստանի» լոյս տեսնելը: Նա Սալթի-Նօվալի վրացական տառերով գրած եր-

գերը հակերէնի վերածելիս չպտնի չտեղերում գրել է վե, և ա՛նա թէ ինչ է ասում ինքն արդ մասին: «Թիֆլիզցու խօսելուն, ևս կարդալուն լաւ ա կ ա ն ջ ղ զ ն ե լ ո վ՝ երբէք չը կարողացալ զանազանել և և Վ տառերու տարբեր արտասանելն. էնդուր էլ սրանց ձէնն նշանագրելու գործ ևմ գրել Վ տառն»: Աբովեանի և Ախվերդեանի պէս է վարել և Ս. Սարգսեանը իւր «Ազուլեցոց բարբառ»-ի մէջ, ուր ոչ միայն բարբառի կրաւորականներումն է վե գրել, այլ իւր բուն գրական լեզուի մէջ ևս և այն էլ ոչ միայն կրաւորականներում, այլ և հատած, չօղած և այլ սրանց նման բառերի մէջ գրել է ված: Մեր Նոր կտակարանի առաջին աշխարհիկ Թարգմանութեան մէջ ևս կրաւորական բալի բոլոր ժամանակներում վե է տպագրւած: Այսօրէս և շատ մասնաւոր գրքեր:

Այս ընդհանուր ուղղութիւնից շեղել է միայն Պ. Պաօշեանցը իւր «Սօս և Վարդիթերի» մէջ: Տաղանդաւոր պատանին աղգասիրաբար հաւատարիմ չի մնացել աշտարակցոց արտաբերութեանը, սխալ համարելով, և շատ բաներ աղաւաղել է, որով ուղեցել է մօտենալ գրաբառի ուղղագրութեանը և ցոյց տալ, որ իւր հայրենակիցները գրաբառի ուղղագրութեամբն են խօսում: Նոյն իսկ կրաւորականներում գրել է ու. ու. մ, փոխանակ իւր մեծ վարժապետի հետևութեամբ գրելու վում, վել, և այլն:

Ղարաբաղի բարբառում, ուր հաստ հնչիւնները ամեն տեղից աւելի հաստ են հնչում, իսկ բարակն ամենից նուրբ, չունի բարական և լ վերջաւորութիւն, այլ՝ էլ, ալ, իլ: Չունի եմ, ես, է, այլ՝ ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն: Սուրբականից էն լայն արտաբերելով՝ ասում են—տանել, տանւէլ, խօսել, խօսուէլ, մնալ, մնալ (մնացել), քերնալ (գնացել), ճրիլ, պիլիլ, խնրիլ, կերիլ, քերիլ, սերիլ, անուում, անւէլ, անւած, անւօղ, տըւած, տըւօղ, տըւալ (տւել) ¹⁾ անւալ, պիլւալ, անղւալ, մնղւալ, դնղւալ, և այլն:

Այս բառերը Աբովեանը կը գրէր վնով, Պաօշեանցը ու. ու, իսկ Ախվերդեանը կարող էր գրել և շիւնով, ըստ որում, ինչպէս ինքն ասում է, վիի և շիւնի մէջ հնչական տարբերութիւն չի գտել: Եւ չիրաւի, միակերպ կը կարդացւին, եթէ գրենք հաւաստ և հալատտ, հաւ և հալ, կաւիճ և կավիճ, կաւ և կալ, հոգեւոր և հոգեվոր, զօրաւոր և զօրալոր, տարաւ և տարալ, բարև և բարեվ, տիւ և տիվ, կուր և կուլ, պատիւ և պատիվ և այլն, որ ասել է և և Վ նոյնահնչիւն գրեր են, մինչդեռ ու. ու սրանցից տարբեր ձայն է և տառ, և կարող չէ գրել այն տեղերում, որ թէ վե և թէ շիւն կարելի էր գրել, օրինակ՝ չենք կարող գրիլ հաուատ, հաու, թէ պէտ գուցէ մի ժամանակ, բեւեռապրութեան դարերում կամ էլ առաջ:

¹⁾ Գրաբար—տըւեալ, թըւեալ, լըւեալ, երդըւեալ... ցըւեալ, կըւեալ կաշւեալ

հաք՝ հաւ ասելու տեղ՝ ասել են հաու: Մենք հիմա նախաջրհեղեղեան հա-
լերի համար չենք գրում, այլ ժամանակակից:

Համեմատական լեզուադիտութեան մազիտարոս Տօմսօնը Թիֆլիսի
բարբառի հետազոտութեան մէջ ասում է. վերի և լիւնի մէջ պէտք է որ
հնչական դանազանութիւն լինի, բայց թէ որպիսի, մենք հնար չ'ունե-
ցանք իմանալու, այս պատճառով էլ ամեն տեղ, ուր միայն լիւն էր
գրած, գրեցինք ռուսական В: Պարոն Տօմսօնը կրաւորականներում չի
գրել В, այլ մի թաւանջան ռուսական Ү, որին ինքն ասում է неслоговой
Ү. ալփինքն՝ անվանկ կամ կրոսածաշնաւոր ա: Այս ուղղագրութիւնը թէև
աւելի լիւնին է մօտենում քան թէ վերի և ուրի, այսու ամենալիւ ան-
հիմն է և սխալ: Այլ ալփիսի մի բան լինէր մեր լեզու մէջ, ալփ պէտք
էր փնարել աւելի Ախալցխայի բարբառում, ուր մի և նոյն Տօմսօնը՝ պ.
Մալիստեանի օգնութեամբ՝ գրել է В, և ոչ թաւանջան Ү: Այլ Ախալ-
ցըխացոյ բարբառումը չը կա, Թիֆլիսի բարբառումն ամենևին չը պէտք
է լինի և ահա ինչու: Ախալցիները (որի կաղմակերպած և հաստատ ըտ-
ղութեանը աւելի պէտք է հաւատալ, քան թէ մի աշակերտի ¹⁾), որ դեռ
գտնում է սևմինարական լեզուի ազդեցութեան տակ) ահա թէ ինչ է ասում.
«Քրոց լեզուի ուղղագրութիւնով բառերում պատահած ա վանկի տեղ գրել
եմ վ կամ ը, էս վանկն, որն որ ձայնաւոր տառերու առջև պատահէլիս՝
ըրոց լեզուի առողանութեան կանոնովն ու մէ քանի գաւառներում ճիշտ
պահած աւանդութիւնով հնչվում է մէկ ն ու րը՝ Հալոց լեզուին սեփական
ձևով, Թիֆլիզցիին արտաբերում է որպէս վ կամ ը. էնդուր էլ չեմ
գրում պատահական, լեզուի, տառած և ալն, բայց պատվական, լեզվի,
տրված»...

Ախալցիները ալստեղ լիշած ու-ի նրբութիւնը, ոչ ալ ինչ է՝ եթէ
ոչ այն, որ արևելեան բարբառներում ը կղածը, արևմտեան բարբառ-
ներումն է ուլ, բոլորովին ալնպէս, ինչպէս ուրիշ տեղերում կղած կըը
Թիֆլիսի բարբառումն է երչ, կամ մէկ բարբառի աւն միւս բար-
բառում օ է կամ օւ: Օրինակ մենք ասում ենք տաւ կամ տրեց,
նոր Նախիջևանցիք ասում են աուվեց: Բայց այս տարբերութիւնը կրա-
ւորականների վերայ չի տարածւում. չեն ասում տրուվեց, ասուվեց,
բայց լուվեց, չուվեց, կարուվեց, դիւրացուվեց: Մենք կարողում ենք
նրէր, նըւաղ, նըւասո, իսկ պօլսեցիք կարդում են նուվաղ,
նուվէր, նուվաստ: Իսկ կրաւորականները միակերպ ենք արտասա-
նում: Այլ բայերի արտաբերութեան մէջ տարբերութիւն լինէր մեր
և նրանց մէջ, տաղանդաւոր Պարոնեանը կրաւորականները վնով
էր գրել, ալ նա միւսների պէս կը գրէր ա: Չը նալած, որ նրանք կար-

¹⁾ Այս պարոնը «Աղբիւրի» աշխատակից Գ. Աստուածատրեանն է, որն օգնու-
թեամբն է գրել Տօմսօնը Թիֆլիսի բարբառի Հետազոտութիւնը:

գում են նուլաղ, նուլաստ, բայց վանկելիս և բանաստեղծութիւնների մէջ
գրում են նը-ւաղ, նը-ւաստ, նը-ւէր, տը-ւաւ, տը-ւած, տը-ւութիւն:

Բ.

Վերը բերած պատմական համառօտ տեսութիւնը նորա համար
արինք, որ ցոյց տանք թէ բարբառով գրողները կրաւորական բալի բոլոր
ժամանակներում գրել են վի և ոչ ու կամ ու, բացառութեամբ Պ. Պոօ-
շկանցի, որ գրել է ուել և ուուս...

Բայց հիմա գանք օրէնքով ու կանոնով խօսենք և ոչ անհատական
գեմքով: Պոօշկանցը, թէև բացառութիւն է կազմում, բայց հակասական
ուղղագրութեամբ չի գրել, այլ՝ ինչպէս միւսները բալի բոլոր ժամանակ-
ներում գրել են վի, նա էլ՝ դարձեալ բալի բոլոր ժամանակ-
ներում՝ գրել է ու: Սխալ է թէ ուղիղ, այդ այլ խնդիր է, բայց մարդը
չի հակասել ինքն իրան: Նւ արդարև, եթէ բալի վերջաւորութիւնն է ում,
ել, ած, օղ, եց, և այլն, ապա ինչ զիր որ դնես այդ վերջաւորութիւննե-
րից մէկնումէկի սկզբում նրան կրաւորական շինելու համար, նոյն գիրը
պէտք է դնես ամենի սկզբումն էլ. աչտեղ բացառութեան տեղիք չը կայ:
Ասել՝ մէկ ուն էլի տանելի է, իսկ ջուխտ ուն՝ անձոռնի, ուստի լաւ է
գրել վում կամ ոււմ, իսկ մնացածներում դնել ու, այդ կը նշանակէ ու-
նատակ տալ լեզւի օրէնքն ու կանոնը և հետեւել ինքնասնար և քմահաճ
կանոնի, որ ամենայն լեզւից մերժելի է: Կամ ասել՝ մեր լեզւի մէջ մի և
նոյն ձաշնաւորը կրկնակ չի գործ ածուում, այդ թերատածութիւն է. մեր
լեզւի մէջ ոչ թէ մի և նոյն ձաշնաւորը կրկնակ չի գործ ածուում, ուլ առ-
հասարակ երկու պարզ ձաշնաւոր իրար մօտ չեն դալիս առանց միջնա-
կապի: Այսպէս են վարել մեր նախնիք աչն օտար բառերի վերաբերու-
թեամբ ևս, որոնք չեն ունեցել ոչինչ չօրակապ, այլ երկու ձաշնաւորներ
իրար մօտ են կղած, իրանց ազգային ածասարբերութեան համեմատ. օրի-
նակ չեն գրել օա, որովհետև հաչն այդպէս բաւ չունի իւր լեզւումը, այդ-
պէս հնչելու սովորութիւն չունի, այլ պէտք է ասէ օւա, կամ ուլա, օյա
կամ ոլա, կարող չէ ասել աս, այլ աւօ կամ այո, և ոչ էօ, օէ, աս, օօ,
ուու: Օրինակ գրել են Տրոպաղա, որ է Տրօաղա, Շմաօն, փարաօն, Վե-
ւոնդ, Մենելաօս, Գանաօս, Աբրահամ, Գէհաներա: Միջնակապը բայ են
թողել միայն աչն բառերից, որոնք հասկանալի են եղել թէ ինչպէս պէտք
է արտաբերել: Օրինակ է և է առերից վետոյ չ չեն գրել, բայց կարդա-
լիս մենք մեղանից աւելացնում ենք, ալիինքն առանց նրան էլ հալի հանկի
ենք կարդում, ինչպէս էլի, էլակ, էլութիւն, իլա կամ իես՝ իլիլիա, Անա-
նիեա, Իտալիեա, բոլորովին աչնպէս, ինչպէս կարդում ենք նալեր, նու-
վա, թէպէտ աչնպէս չեն գրած:

Այսպէս ահա եթէ ուուս գրելը հակահնչական և անձոռնի ուղղագ-

բութիւն է, նորքան հակահնչական և անճոռնի են ուել, ուաւ, ուեց, ուած ձևերը, որովհետև դրած նուէր բառի պէս չեն դառնում ուլի կամ ըւել, ալ լել, ոչ գըրու-վել ալ գըր-ւել, գըր-ւող, ինչպէս գործուումն է գործ-ումն: Ուրեմն կրաւորականը լինելով աշխարհիկ լեզւի սեփականութիւն, նար ունենք համեմատել կենդանի արտաբերութեան հետ և աչնայէս գրել- իսկ կենդանի արտաբերութիւնն է գործվում կամ գործւում, գործւել կամ գործւել, և ոչ գործուում, գործուել:

Բայց, ինչպէս տեսնում էք, ուն զուրս մղելուց չեսոց էլ՝ լուծած չինք լինում միակերպութեան խնդիրը, որովհետև մէջ տեղ մէկ տառ-ի տեղ մնում են երկուսը՝ Վ և ւ, և երկուսն էլ իրաւունք են չարանում կրա-ւորականի մէջ բաղմելու: Գուրս մղել մէկը կամ միւսը չենք կարող ոչ մի ննչական օրէնքով, որովհետև երկուսն էլ հաւասարազօր և նոյնահնչիւն գրեր են, բոլորովին աչնայէս, ինչպէս ո և օ տառերը բառամէջերում և մանաւանդ օտար և չատուկ անուններում, ինչպէս գրող, գրող, Սիմոն, Սիմոն, Յակոբ, Յակօբ, Մեսրոբ, Մեսրօբ, Թորոս, Թորօս, Լևոն, Լէօն, և այլն:

Այստեղ խնդրում եմ ընթերցողիս փոքր ինչ լարել իւր ուշադրու-թիւնը: Նս գիտութեամբ մէջ բերի օն և օն, որովհետև վիի և լիւնի նոց-նահնչիւն լինելու պատմութիւնը նոյնն է, ինչ որ սլի և օի: Հնչումը օ չու-նենալով, ալ միայն ւ, որ սկզբումը գործ է ածւել իբրև ալ, ո, ու, օ, սլ, երբ ալ տառերը դեռ չը կապին, բայց երբ ներս բերին հետզհետ, հինն ու նորը իրար խառնուց, մի և նոյն բառը չորս իրարից տարբեր ուղղագրութիւն ստացաւ, թէև միահնչիւն: Աչնայէս Մեսրօբի անունը գրե-ցին Մեսրաւբ, Մեսրոլբ, Մեսրոբ, Մեսրօբ, գուցէ և Մեսրուբ: Վեր կե-նար Մեսրօբը և տեսնէք, թէ ինչպէս են նախշում իւր պատուական անունը, իւր աչն լանցանքի պատճառով, որ որոշ օ ձաչնի համար չինել էր մի ան-որոշ ւ երկատու: Ելի լաւ է, որ Մեսրօբ բառը մէկ օ ունի և գրում էին միայն չորս ձևով, եթէ երկու օ ունենար՝ կարող էին գրել 16 ձևով, եթէ երեք, ինչպէս է Սօզօմօն բառը, կարող էին գրել մինչև 64 ձևով, թէև Սօզօմօն խմատունը լաւ կը համարէր մէկ հաս ձևով Սիւլէլման գրուելչ քան 64 ձևով Սօզօմօն:

Բայց եթէ ալ հեռաւոր անցեալը լաւ երևակայենք, կը տեսնենք որ Մեսրօբի ւ երկատու բոլորովին բաւականութիւն էր տալիս ժամանակի պահանջին: Հին ժամանակ և հենց այսօր էլ աւ, սլ, օ, ու ձաչները լծորդ են միմեանց: Թող օրինակ դրած լինէր տաւն, ինչպէս կ'ուզէր կարգա-ցէք, հայերէն գուրս կը դաւ: Կարգացէք ասն, տուն, տուն, տալի, բոլորն էլ հայերէն են: Արարատումն ասում են տուն, Կարաբաղ՝ տօն, Գողթնում տուն (?), և հենց այս բոլորն էլ ալիպէս է: Կրեցէք աւրա ի և կարդացէք ինչպէս կամենաք: Ասում եմ «ինչպէս կամենաք» և իղուր չեմ տտում: Հնումը գրելը գրողի կամբիցն էր կախած, իսկ կարգալը՝ կարդացողի: Այս վիճակին և աչս գրութեանը ես իմ հասակումս վերահասու եղալ: Իմ

մանկութեան ժամանակ ուսումը դեռ վանքերի մէջն էր փակւած: Ուր որ դնացի, ջոկ տեսակ կարգալ տեսաւ: Ամեն մի գաւառացի իւր բարբառի ձեռքն էր կարդում և թարգմանում: Եկաչ Թիֆլիս, նոյնը տեսաւ եկեղեցիներում: Ժամերգութիւնը և Աւետարանը Թիֆլիսի բարբառի ձեռքն էին կարդում, ինչպէս «Հայրը մեր, վուր երկրին» և այլն: Աչսպէս էր ամեն գաւառում, և այսօր էլ, չը նալած մեր ուսումնարանների շատութեանը, շատ տեղերում ընթերցմունքը դեռ գաւառական և բարբառային է: Ստիպեցէք, օրինակ զարաբաղցի դիւղական քահանային, որ նա արատաւնէ թիւն և ոչ թիւն կամ թուն: Ի զուր չէր ուրեմն Մեսրօբը գրում թիւն և ոչ թիւն, որ վերջին դարու ուղղագրութիւն է:

Աչսպէս էր ահա հնումը, գրում էին այլ՝ և կարդում տեսակ տեսակ, ով ինչպէս կամենար: Այլ է ուրեմն նշանագրութիւն և այլ՝ արտաբերութիւն, քանի որ վճուած խնդիր է, որ ամեն մի բարբառ իւր խօսելու ձևին է ենթարկում բառն էլ, տառն էլ և այնպէս արտաբերում: Պէտք է սակալն մասնաւորը ընդհանուրից զանազանել: Բոլոր բարբառները ունին մասնաւոր և ընդհանուր չտփութիւն: Օրինակ ոչ մի բարբառում կարելի չէ գտնել երկու ձայնաւոր առանց ձայնակապի: Աչս մի ընդհանուր չտփութիւն է և ոչ մասնաւոր: Ընդհանուր չտփութիւն ունի, օրինակ, հետևեալ բառերի ուղղագրութիւնը՝ աւօր, հւօր, ալի, ուլի, գալի, գնալի, հսկալական, տղալական, տնալին: Աչս հիման վերալ ահա, մենք չունինք ու-ա, ու-է, ու-օ, այլ լա կամ վա, իսկ սրանից լիւնը աւելի վաղնչական է, քան թէ վեր, որ կարող է մտած լինել կրտսեր թարգմանիչների ժամանակ և նրանց մեծ վարդապետի ասելով սրբացրած:

Գ.

Բառագրութիւնը, ինչպէս ամեն լեզուի մէջ, նոյնպէս և մեր հին լեզուում գաղափարականից ձգտել է զէպի հնչականը, ընդհանուրից դէպի մասնաւորը, որ համարեա մինչև անհատական քմահաճութեան է հասել: Պատիւով դրւած մի բառ ով ինչպէս ուղեհար, այնպէս կ'արտասանէր, բայց երբ այդ գաղափարական բառը ընկնում է որոշ հնչիւնների տակ, նորա արտաբերութիւնն էլ ընկնում է գրողի կամքի տակ: Եթէ գրողը մշեցի է, անշուշտ մշեցու արտաբերութեամբ կը հնչիւնագրէ, եթէ զարաբաղցի՝ զարաբաղցի իսկ բառն էլ՝ եթէ սովորական և ընդհանուրին հասկանալի մի բառ է, ամեն տեղ պէտք է ծումուր, իսկ եթէ անհասկանալի, օտար և խրթին, նա դեռ կարող է անփոփոխ մնալ: Եթէ խոր ուշ դարձնենք մեր գրոց լեզուի ուղղագրութեան վերալ, մանաւանդ լծորդ համարած տառերի վերալ, մենք կը տեսնենք, որ մեր մատենագրութիւնը չորս գլխաւոր բառագրական շրջանով է անցել: Այդ շրջաններից ամեն մէկը իւր չաջորդից պակաս տառեր է ունեցել: Ամեն մի չաջորդ շրջան ուղե-

ցել է նախորդ շրջանի թերին լրացնել, և թէև շատ բառերում չաջողել է, բայց և շատ բառերի էլ ունքը չինելու տեղ՝ աչքն էլ քուսացրել է: Այդ շրջանները, որոնք շատերի համար խաւար վարպետութիւն են պատած, ինձ համար բոլորովին լուսաստը և պաշտառ են: Եթէ ոչ ուրիշներ, զոնէ ինքս ինձ համար պարզել եմ մի քանի բան, որոնք շատ կարեւոր են մեր ուղղագրութեան խնդիրը պարզաբանելու համար: Սրինակ ևս հաստատ հաւատացած եմ, որ Մետրոքի հնարած գրերն են ը, ո, ծ, ձ, ճ, ու, ց: Սորա հաստատ և անհերքելի ապացոյցն ալն է, որ միայն այս ձայներն են, որ չը կան Մետրոքին չափնի հղած լեզուներում և գրերում: Եղած բանը չեն հնարել կամ գտել, այլ չ'եղածը: Քանի որ Մետրոքը քաջ պարսկագէտ և ասորագէտ էր, միթէ կարելի էր, որ նա այդ կամ եչ գտնելու կարօտութիւն ունենար: Այդ չէր լինել զիւտ, այլ փոխառութիւն: Ես չեմ վարժանում, որ Միսիթարեանք այս մասին պարզ գաղափար չ'ունեն, որովհետև գրանք Մետրոքեան գրերը հնչում են արարերէնի նման. բայց վարժանալի է, որ զիտնական Լամիւնը անպիտի տառեր է վերադրում Մետրոքին, որոնք կան թէ պարսկերէնում և թէ ասորերէնում: Մետրոքը չունակած տառերից ոչ մէկ հատ չի վերցրել: Նա լրացրից արդէն հղած Դանիէլեան գրերը, որ ասորապարսկական ծագումն ունէին, իւր գտած եօթը գրերով: Սորա ապացոյցն ալն է, որ եթէ Մետրոքը չունաց տառերից վերցնէր իւր ալբուրները, չէր կարող նրանց երկու օ-երից մէկն ու մէկը չը վերցնել, քանի որ իւր երկտառ աւ-ին չորս ու հինգ պաշտօն էր տալիս մէկ օ չունենալու պատճառով: Եթէ նա չունական տառերից օդուտ քաղած չէ, ինչպէս վկայում է և ժամանակակից պատմութիւնը, ապա ուրիմն վ, է, ի, չ, գրերը, որոնք զուտ չունական են, Մետրոքը չէ մտցրած: Շատ նշաններ կան մեր հին լեզուի ուղղագրութեան մէջ, որ այդ տառերը չ'եղած՝ արդէն կազմակերպւած գրականութիւն է եղել հին ուղղագրութեամբ, որից շատ բառեր են անցել չաջորդ շրջաններին և մինչև մեր օրերը հասել: Քաջ հպկաբանները եթէ իրանց սովորական նախապաշարմունքից ազատ լինէին և փոքր ինչ լեզուագրական բնազդումն ունենան, կը նշմարեն, որ մեր լեզուի մէջ ոչ թէ երկու, այլ երեք է կալ, թէև գրերը միայն երկուսն են: Շատ բառեր կարելի է գտնել թէ հպերէն և թէ մանաւանդ օտար (օտար բառերն աւելի են պահպանում իրանց հին ուղղագրութիւնը) որոնցում կը տեսնեն, որ մեր եջը եղել է ն' երկբարբառ եչ, և' կիսաձայնաւոր չ, և' պարզ ու նուրբ է, և' հաստ է, և' պարզ է, որ ասել է՝ հինգ ձայնի նշանագիր է եղել: Դերանուն է-ը, եջը և բաշօժանդակ եմ, ել, ևս, ենք, են բառերի եջերը նոյնահնչիւն չեն: Դերանուն մէջ եջը երկբարբառ է, ևս բաշօժանդակների մէջ նոյն է, ինչ որ բառամէջերում, ոչ հաստ է, և ոչ էլ երկբարբառ, այլ պարզ և նուրբ է, ինչպէս գրել, որ չէ գրել և ոչ էլ գրել, այլ պարզ գրել: Բաշօժանդակ են նոյնպէս պարզ եչ է և ոչ հաստ է: Թէ այդ են վերջնամուտ է, մենք տեսնում ենք այդ մեր բաղբի

անկանոն խաւար հիմունքից եւ, ինչպէս բերեմ եւ բերէ, բերես եւ բերէք, գտնում ենք ճակ փոխանակ էի էիր ու գրած եի, էիր, եր, եար, էիք, էին: Ի՛նչ ասել կ'ուզի, որ ալզ ձեով գրածը մեր ժամանակի արտաբերութեամբ չէինք կարդալ, ալ սկզբի եչը պարզ էր պէս հնչելով: Բառերի վերջում եչ չը գրելը վերջնամուտ կանոն է եւ քմահաճ. կմ էական բայի եւ բաշարներջում մասնիկի նմանութիւնը պատահական եւ նույնանիչ չեն ամենին: Եթէ բայի վերջաւորութիւնն է ա, եւ նա դառնում է ամ, աս, ալ, եթէ վերջաւորութիւնն է աւ, եւ դառնում է ում, ուս, ու, եթէ վերջաւորութիւնն է եւ, եւ դառնում է իմ, իս, ի, ապա ուրեմն եթէ վերջաւորութիւնն է ել, պէտք լինի եմ, ես, ե. բերեմ, բերես, բերե եւ ոչ բերէ, իսկ եթէ բերէ, ապա ուրեմն բերէմ, բերես, բերէ, ինչպէս ազամ, ազաս, ազաս: Եթէ թողումք, թողուք, թողուն, ուրեմն եւ բերեմք, բերէք եւ ոչ բերէք: Ահա այս անկանոնութիւնը լառաջ է եկել էի վերջամուտ լինելուց: Եի վերջամուտ լինելը երեւում է եւ նրանից, որ չօգակապի պաշտօն չի կատարել, ալզպիսի տեղերում միշտ եչն է ներս մտել, եչը գրել է եւ բառասկզբներում աջպիսի բառերի սկզբում, որոնց եչը երկրարբառ չէ: Թէն մենք բառասկզբներում անխորհ հնչում ենք իբր երկրարբառ, իսկ դորա հետեանքն էլ աչն է, որ կարդում ենք տանում էմ, բերում էս, որ էսը հնչում ենք իբր երկրարբառ եւ, որ սխալ է բոլորովին:

Մեր բարբառներում էական բալը մի տեղ դառել է ըմ, ըս, եւ մի տեղ ամ, աս, ալ, մի տեղ էմ, էս, է, մի տեղ իմ, իս, ի, բայց եւ դերանունը ամենաչն տեղ եւ է, միայն Թիֆլիսումն ասում են երկրարբառ ինիով ինչպէս եիս: Այս հանգամանքը պարզ ցոյց է տալիս, որ էական բալը չունի երկրարբառ եչ, բայց ոչ էլ հաստ է, ալ պարզ է, որի նշանները մենք ունեցած չենք, իսկ ալզպիսի տեղերում եչն ու էն իրար դէմ մաքաւելով՝ ուղղագրութեան մէջ անկանոնութիւն են ձգել: Երկրպագումն մեր լեզուն ալնքան նրբացել է, որ մեր նոր սերունդը բառամէջերում եչն ու էն իրարից տարբերել չը կրէ:

Բայց դուրէ տմանք ալնքան անմիղ լինին, որ հարցնեն, թէ ալ տառերը որ պակաս լինէին, էլ ինչպէս կարող էին գրել: Իսկ եւ կը թելադրեմ, որ աւելի գժւար հարցմունք տան, թէ ինչպէս էին գրում Վանիէլեան գրերով, որից ոչ թէ չորս, ալ ինչպէս ասում են, 14 տառ էր պակաս: Աչն ժամանակ օրաթերթ չէին հրատարակում, գրածներն ալնքան էր, որ կարող էին ամբողջ գիրքը բերան էլ գիտենալ: Արդում էին միայն կարգադրանքը, արիւնքն նրանք, որոնք առաջուց կրտէին, թէ գրածն ինչ է: Բայց փոքրիկ համար հապերէն չընթերցող բալց պարսկերէն լաւ իմացող մի պարսկի կարելի է թելադրել հալերէն մի բան, որ նա գրէ պարսից տառերով: Նա իւր գրածը անկտուկած լաւ չի կարդալ, բայց պարսկերէն եւ հալերէն գիտցող մի հալ նույն գրածը շատ լաւ կը կարդալ: Բւրեմն հալը պակաս տառերով եւ ալլաձև գրածն եւ կարող էր ուժեղ կարդալ գրածի

միաքն ու դադափարը ըմբռնելով, իսկ եթէ այդ դրածը նորա բերան գիտցած աղօթքներից կամ երգերից մէկն է, առաւել հեշտութեամբ կը կարգաւ: Հնումը թէպէտ գրում էին պակաս տառերով, պատիւով, բայց գործը դիւրացնող դանազան ճշաններ ունէին: Մեսրօքն ուղեկալով գրագիտութիւնը վանքից դուրս բերել և ժողովրդի մէջ ընդհանրացնել, այս պատճառով նա չը բաւականացաւ Գաննէլեան գրերով, եթէ ոչ՝ այնքանն էլ բաւական էր վանքերին, և սրբան դժւար և խորհրդաւոր՝ այնքան լաւ, ժողովրդի աչքումն աւելի վնաս կը լինէր և սքանչելի իբրև մի ծածկագրութիւն և մինհնական լեզու, անհաս հասարակ մահկանացուներին:

Ինչ ասել կուզի, որ պակաս տառերով գրած բառերը ամենքը միակերպ չէին կարգում, այլ տեսակ տեսակ, և մենք այսօր սխալ կարդալու շնորհիւ բաւական շատ սխալ բառեր ունենք: Գրանց մէկն էլ հնց մեր առարկային է վերաբերում, այն է լիւնին: Առաջ ետ կամ իւ գրելու տեղ գրում էին եւ, որ թէ եւ էր և թէ ետ: Ուրեմն հնումը չէին կարող գրել լիւն, այլ՝ լեւն: Մենք հիմա կարող ենք նուս գիմորոջ լոգ համարել, և տեղը կը մնայ լեւ, որ իւր բնական և հնչական անունն է: Բայց կասէք՝ ի՞նչպէս կարելի է, որ լեւը լիւն դառնայ: Ինչո՞ւ չէք ասում, թէ ինչպէս կարելի է, որ լեւը հիւն դառնայ, և հիւանդը լեւանդ: Այս ասացէք, թէ ինչպէս է եղել, որ ահադին երկաթաղիւր լիւնից չիմեւ են մի սրա փշիկ՝ իսկ վիււի պոչը երկրացրել և շիմել մի գիտաւոր, որից շատերը վախենալով՝ նորա անունն են վեւ գրել: Ունիթօսներն ինչ կարող էին իմանալ, թէ ինչ տարբերութիւն կաւ, Վ և ու տառերի մէջ, քանի որ զիւ նրանցից առաջ Ներսէս շնորհալու գրածները մէջ տեսնում էին նվագ, նվատս «և տմանց ոչ հեւ և ա կ գ ը չ ա ց գրել ՚ի թվին, թվական, վարձատուութիւն»: (Քեր. Բագր. եր. 646):

Մեր բոլոր քերականներից միայն Հ. Բագրատունին է հասկացել, այն էլ կիսով չափ միայն, որ վեւ և լեւն նորահնչիւն գրեր են, իր ասելով թէ՝ «...և ո՞վ իբր երկբարբառ վարեալ է, և Վ ունի աստ զգործ լիւնին ՚ի ու, զոր չմարթէր զնել առ ոլին, զի մի լինեցի ու»...

Ասում եմ կիսով չափ է հասկացել, որովհետեւ այս բանն ասելուց վնաս իսկոյն զգուշացնում է, որ այդպիսի տեղերում վեւ վիւ նման չը հնչեն, այլ լիւնի նման... Հիմա եկ ու հասկացիր, թէ այդ ինչ հնչական տարբերութիւն է: Բարեհոգի հայրիկը ենթադրել է, թէ քանի որ երկու ասանձին գրեր են, ուրեմն երկու առանձին հնչիւն էլ պէտք է ունենան: Բայց եթէ զլիւ ընկնէր, որ իւր ով երկբարբառ առանդածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ու, խորհուրդ չէր տալ գիտնոց որ եկամուտ ալաղգական օի տեղ նախնեաց ու երկտաւը կրկին չարուցանել, այլ աւելի խորհուրդ կը տար «զդատապարտ խափանեալ գրութիւնն ւ, վերստին չարուցանել և զայն վարել փոխանակ եկամուտ ալաղգականին վ», մանաւանդ ինքն իսկ մի այլ տեղ ասում է. «Միայնակ պիտառութիւն (գործածութիւն) — զրոյց

խախտեալ է առ չետն ովի և առ մեւք», որ ասելէ հնումը լիւնը գործ էր ածուում միալնակ, առանց ուրի, և ալն էլ ոչ միալն վեւի, ալ և մի քանի ուրիչ տառի տեղ, ինչպէս պարսից ւօւը:

Գ.

Ներկայումս մեր բանակիրները իրանց մալրենի լեզուով թոթովում են տհաս կրեխալի նման, երբ դեռ նոր է լեզուն բացում և ասում է յունի, շունի, դուռի: Մերոնք էլ կրեխալի նման ամեն իրանց քմահաճ քերականութիւնը, գրում են օրինակ՝ գլխի-ի, կատու-ի, գառ-ի: Բաւական է, որ մէկ երկու սեռական գիտեն ք վերջաւորութեամբ, բոլորն էլ նրանց են նմանեցնում: Իսկ մեր քերականները իրանցից մի նոր բան չեն ասում, ալ ալն միալն, ինչ որ իրանցից առաջ հաղար անգամ աուել է և ամեն անգամ էլ նորանոր սխալներով: Սակալն ես սրանում մի վատ բան չեմ գտնում: Սա չալտնի ապացոյց է, որ մեր գրական լեզուն իւր մանկական հասակի մէջն է, և շատ խակամիտ պէտք է լինի մէկը, եթէ ենթադրէ, որ իւր լեզուն կատարեալ է: Կատարեալը մի իդէալ է, որին կարող ենք ձգտել և մօտենալ, բալց երբէք չը հասնել: Ի՞նչ է ալսօր իմ ջանքը, եթէ ոչ մի չնչին ձգտումն միալն, և ալն բնական ձգտումն դէպի կատարեալն: Այսպիսի ջանքը պէտք է խրախուսուի, քաջալերուի, և ոչ թէ հալածուի: Փառք Աստուծոյ, միջին դարերում չենք ապրում, ալ տասնին. ներորդ դարու վերջերում, երբ ամենալն ինչ կատարելագործութեան է դիմում հոկալական քալերով և ոչ կրիալի: Նախանձոտ մարդիկ տմարդութիւն ունին հրատարակելու, որ իբր թէ ես մի նորամուծութիւն եմ ուղում ընդհանրացնել, մինչդեռ իմ բոլոր ջանքն է քմահաճ ուղղագրութեան առաջն առնել, ցոյց տալով, ըստ իմ կարողութեան, մեր լեզւի հնչական օրէնքները և սլատմական կերպարանափոխութիւնը: Պաշտպանելով լիւնը ընդդէմ վեւի, դրանով կարող ենք վեւի հոսանքի առաջին առնել, որ իրաւունք չունի լիւնին սեփականացրած տեղերը գրաւելու: Մեր նախնիք վեւ գրել են միալն բառասկզբներում և մէկ էլ ուրից լետոյ, ուրիչ տեղեր ալգ տառը մտնելու իրաւունքը ունեցած չէ: Մեր նախնիք Մեսրօբից սկսած գրել են աւ, եւ, իւ, ըւ, էա, լե, էէ, էը, էի, էո, էօ, էու, և ոչ երբէք եվ, ավ, իվ կամ վա, վե, և ալն: Ասել է թէ վեւը չին շարժել իրան լատկացրած տեղից, չօղակասլ չեն շինել, դասափոխութեան դործում չեն խառնել, իսկ լիւն էլ չեն գործ դրել բառասկզբներում, և հենց սորա համար է, որ Ն. Շնորհալին ասում է.

Վեւն վարք՝ ասէ՛ պիղծ, անատակ,

Տեառն կամաց է չոլժ ներհակ,

Իիւնն չօղական է միալն տառ,

Բալց զոր չօղէ, քեղ խրմտ առ:

Ուղում է ասել, վեր կը գրեն բառասկզբներում, ինչպէս բառս ձարք, իսկ վրեր բառամէջերում, իբրև չօղակապ, ինչպէս գործուում, ուր գործ և ում չօղերը կապում է միմեանց հետ: Այ մի վն գրող գործվում և գործուում ձևերը տարբեր ձայնով կարդալ կարող չէ. ուրեմն եթէ վն գրողի նպատակը միայն հնչական է, գործուում ձևը բոլորովին հասցնում է նրան իր նպատակին, և դեռ մի բանով էլ աւելի, — այդպէս գրելով՝ նա մտերիմ կը լինի մնացած իւր նախնեաց ուղղագրութեանը: Ու գրողները նույնպէս ոչինչ չեն կորցնում և գրելով, այլ միայն ու են ուղում, որ նախնական ձև չէ, այլ վերջնամուտ և այն էլ ունիթօռական: Քամահանութիւնը միայն կարող է հակառակ երթալ լեզուի այս օրէնքին, որ թէ բնական է և թե պատմական, և՛ հնչական եղանակին է մտերիմ մնում, և՛ նախնեաց ուղղագրութեանը:

Շատերն արդէն սկսելէ են բազի ներկայ ժամանակում — գրել: Ներկայով ապրում են միայն վայրենի և կիսակիրթ ազգերն ու անհատները. իսկ լուսամիտ անձինք ոչ միայն ներկայի հետ ունին նաև անցեալ և ապագայ, այլ և ապագայ ներկայ էլ ունին և ապագան ամենամեծ է անցեալից. իրանք իրանց պատասխանատու են համարում ոչ անցեալի, այլ ապագայի առջև, ծառայում են ոչ թէ տնցեալին, այլ ապագային: Ամեն լուսամիտ անձն անցեալից ստացած հում նիւթը հում էլ պահ չի ստալիս ապագային, այլ մշակած, շահեցրած: Եթէ այսպէս է, դոնէ մի տեսակ ալքով պէտք է նախը բոլոր ժամանակների վերայ, եթէ ոչ կենցաղստեղծութեան մէջ, դոնէ լեզուի մէջ, քերականութեան ժամանակների մէջ: Կամ պէտք է լիտ երթանք զէպի անցեալը և ձեր ուուն կրկին պըպըպացնենք ներկայի գլխին, և կամ ամենայն տեղ պէտք է զնէք ւր և ոչ ու: Սրանով մենք վերջացնում ենք կրաւորական խնդիրը: Եթէ էլի մութ բան կալ մնացած, հետևեալ չօղւածներում կը պարզուի:

(Կը շարունակուի)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Վ. 1.ՈՒՆԿԵՎԻԶ.— «ՊՍԻԿ Է, ԲՍՅՅ ՉՍԻԿ Է»: Մըջիւնների կեանքից հետազոտութիւն: 46 երես, տառ № 12. Թիֆլիս, տպարան «Արօր». 1890 թ. գինը 5 կոպէկ:

Տգիտութիւնը ոչ միայն մի ժողովրդի մտաւոր ու բարոյական զարգացման խոչնդոտն է, պահպանելով մնապաշտութիւն ու երկիւղը, այլ նոյն իսկ մեծ մասամբ նաև ժողովրդի նիւթական վատ գրութեան պատճառը: Ամենամեծ գործոնը ազիտութեան դէմ մաքառելու՝ մասսայի մէջ բնութեան մասին ճիշդ գիտելիքներ տարածելն է: Ուրեմն հասկանալի է որքան օգտակար են բնագիտական գրքուկները ժողովրդական և մանկական ընթերցանութեան համար:

Մասնաւորելով խօսքը զանազան կենդանիների ստիտութիւններին ու կենցաղի մասին հետաքրքրական ու պարզ լեզուով գրած պատմութիւնների նկատմամբ, կարելի է նաև աւելացնել, որ բացի սխալ կարծիքներ փարտուելուց և աշխարհակցողութիւնը լազնացնելուց՝ նորա մեծապէս նպատակում են, մանաւանդ մանուկ ընթերցողների մէջ, գիտաւելութեան ու գիտարտութեան զարգանալուն: Երեխաները զէպի նոյն իսկ օգտակար կեն-

դանիները շատ անգամ անգուլ են լինում և տանջել, չարչարելը նոցա, կարծես, մի առանձին զարծութիւն է պատճառում. բայց հետաքրքրական պատմութիւնները կենդանիների կենցաղի ու ստիտութիւնների մասին՝ զարթեցնելով համակրանք և սէր դէպի այդ անբան արարածները՝ մեղմացնում են և արդարացի դարձնում երեխաներին:

Պր. Ղուկեկիչի գրքուկը գոնացնում է այն բոլոր պահանջներին որ դրում են ժողովրդական—մանկական ընթերցանութեան համար գրած գրքերին: Նա գրած է պարզ ու հետաքրքրական ձևով և թարգմանած լաւ կենդանի լեզուով: Ասկայն չի կարելի չը նկատել մի քանի աննշան թիւրութիւններ հրատարակչի կողմից: Օրինակ. «Պատիկ է բայց չտակ է» հետազոտութիւնն է, ալ ուրիշի հետազոտութիւնների ու գիտաւելութիւնների (Վերբոկ, Գրեբեր, Ֆոխս, Կարլին և այլն) վերայ հիմնւած պատմածք. Արաբները «սա-

մորթ» ցեղին չեն պատկանում, ինչպէս նեղրները (եր. 12): Մի տեղ սպաղրական սխալը մութ է թողնում նոյն խոյ միտքը. «Ամենից առաջ դուք կը նկատէք թիւաւոր որձերի, էղերի և անթիւ (պէտք է լինէր անթիւ) բանւորներին տարբերութիւնը» (երևս 9): Մեզ թւում է որ «մեղրաքաղի» և բանւոր մրջնակի մասին դրածը այնքան էլ պարզ չէ հասարակ ընթերցողի համար և որ մի բանի օտարերկրեալ մրջնակներին մա-

սին պատմելիս՝ պէտք էր լինել այն երկրի անունը, որտեղ պատահում են նոքա:

Առհասարակ պ. Վոնկելիչը ցոյց է տալիս այս դրբովիւում տաղանդ հետաքրքրական և զիւրամատչելի կերպով գրել ժողովրդի ընթերցանութեան համար ընական գիտութիւններից, ուստի ցանկալի է տեսնել շարունակութիւն սոյնանման գրքերի:

Լ. Ա.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) «ՊԻՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ».—Բղղէ, վէպ: Արտատպած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպ. Խօտեանցի, 1890, թ. գինն է 1 ռ. 20 կոպ.:
- 2) «ՍՄԱՅԼՍ, ՍԱՄՈՒԷԼ».—Թարգմանութեամբ Փիլիպպոս: Վարդանեանցի.—Ինքնօգնութիւն: Թիֆլիս, տպ. Յով. Մարտիրոսեանցի, 1890, թ. գինն է 1 ռ. 50 կոպ.:
- 3) «ԼԱԶԱՐԵԱՆՑ, ՅԱԿ».—Գիւլէ: Մի արկած քիւրդերի կեանքից: Հրատարակ. «Աղբ. և Տարազ» պատ. հանդէսների: Թիֆլիս, տպ. Նազարեանի, 1890, թ. գինն է 20 կոպ.:
- 4) «ՉՄՇԿԵԱՆ, ՄԱԿԱՐ».—Ծոցի օրացոյց, 1891 թ. համար Թիֆլիս, 1890, տպ. Խօտինեանցի, գինն է 15 կոպ.:
- 5) «ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.».—Թոփալ (թիւրքահայերի կեանքից), տպ. «Արօր» Նազարեանցի, 1890, թ. գինն է 5 կոպ.:
- 6) «ՇԱԻԱՐՇ».—Պատկերներ կեանքից: Շուշի, տպ. Շուշու հայոց հոգ. տեսչութեան, գինն է 50 կոպ.:
- 7) ԼԵՌԵՆՑ.—Բանաստեղծութիւններ. Ա. Պետերբուրգ, տպ. Սկրո-խոդովի, գինն է 60 կոպ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Անցեալ քրոնիկում, Կ. Պոլսի պատրիարքական ընտրութիւնների առիթով առեց հետեւալը. «Հրաժարական աւած Խորէն արքեպ. Աշրգեանի տեղ պէտք է ընտրել Նոր պատրիարք: Ինչ կարող ենք խորհուրդ տալ այսքան հեռուից: Մի բան միայն գիտենք, որ Նոր պատրիարքը իսկապէս դեր ունի կատարելու: Թող չը ստանձնի պատրիարքական պաշտօնը նա, ով գործի ալմեալ բարձրութեան վերաջ կանգնած չէ: Նա, ով մի է ճանաչւած իւր ժողովրդի հետ, Նորան է կանչում ժամանակը: «Բոլորիցալի» ամենեին ժամանակ չէ»:

Ալմա գոհունակութեամբ կարող ենք վկայել, որ Պոլսից դուրս հրատարակող հալ օրդանները նմանապէս եկել են այն եղրակացութեան, որ ալմեալ ընտրելին պէտք է լինի «նա, ով մի է ճանաչւած իւր ժողովրդի հետ» և որ «նորան է կանչում ժամանակը»: Բայց ով է Կ. Պոլսի նշանակութիւն ունեցող շրջանների թեկնածուն, արդեօք Մկրտիչ արքեպիսկ. Խրիմեանը, որին կանչում է ժամանակը, թէ մի ուրիշը: Պոլսից հաստատ լուրերը չունիմ ալմ մասին, բայց մի քանի վատ նշաններ աչու ամենայնիւ նշմարելի են, որովհետև ցուցեր եղան, որոնցից դժւար չէ եղրակացնել, թէ Խորէն Նար-բէլ թերևս պաշտպանւած թեկնածուն է Պոլսի մի ոչ աննշան կուսակցութեան համար:

Ներկայ նուեմբեր ամսին կատարւելու են ընտրութիւններ Թիֆլիսի քաղաքային խորհուրդի և լաջորդ-քառամեակի համար: Նոր ընտրւած խորհուրդը պէտք է ընտրէ և Նոր վարչական անդամներ՝ քաղաքապետին, նորա օգնական և երկու ալ անդամներ: Յատնի է, որ ընտրութեան մասնակցում են քաղաքին հարկ վճարողները: Արդ, դոքա բաժանւում են երեք կարգի, կամ նորագոյն հալկաբանութեամբ՝ երեք կուսարի. ամենաչատ անաշարի աւողները կազմում են առաջին կուսար, միջակները՝ երկրորդ կուսար, ամենա-

քիչ հարկ վճարողները երրորդ կուպար: Երեք կուպարներից իւրաքանչիւրը ընտրում է հաւասար թւով խորհրդակաճներ, կամ՝ ձաջնաւորներ, և որովհետեւ առաջին կուպարին պատկանողները քչերն են, երկրորդ կուպարին պատկանողների թիւն էլ աւելի քիչ է քան երրորդ կուպարին պատկանողները, ուստի խորհուրդի ձաջնաւորների մի երրորդը ընտրում է միաջն մի քանի տասնեակ անձերից, մի երրորդը մի քանի հարիւր մարդկանցից, մի երրորդն էլ՝ հազարից անց անձերից:

Մի բնական հետաքրքրութիւն ինձ մղեց խմանալու, թէ ալդ ուլքեր են Թիֆլիսի պէս մի քաղաքում առաջի կուպարին պատկանող անձերը, ալլապէս ասած՝ ուլքեր են Թիֆլիսի տնատէր տուղերը: Լսւ կարծում եմ, ընթերցողներուցս շատ շատերը նոյն հարցով կը հետաքրքրւեն, որովհետեւ նիւթը կարող է տեղիք տալ շատ հետաքրքրական և դուցէ՛ օգտակար եղրակցացութիւններին: Նս այս ցուցակը կազմել եմ քաղաքային վարչութիւնից պատրաստած պաշտօնական ցուցակի հիման վերաջ, միաջն թէ մի փոքր նեղութիւն եմ կրել՝ որ անունները շարւած լինեն ոչ թէ ալքրէնական կարգով, ալ նալած նոցանից իւրաքանչիւրի վճարած քաղաքային հարկի խոշորութեան: Այս ցուցակի մէջ մտնում են թէ հիմնարկութիւններ և թէ մանաւանդ մասնաւոր անձեր: Հիմնարկութիւնների մէջ են տներ և կալւածքներ ունեցող եկեղեցիներ, ուսումնարաններ, բանկային հաստատութիւններ, մի խօսքով՝ կալւածատէրեր:

Ահա ալդ ցուցակը:

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Տ Ն Ա Տ Ե Ր Ե Ր

Առաջին կուպարի

Հարկի չափսը ¹⁾
րուբլի, կոպ.

1	Թիֆլիսի Ազնւակ. հող. բանկ	3.163
2	Չիթախեան Յովհաննէս	2.930
3	Բաղրատիօն-Մուխրանսկի, իշխ. Իւան.	2.492
4	Ալեւեան Յովսէփի ժառանգ.	2.179
5	Մանթաշեան Ալեքսանդր.	2.064
6	Թիֆլիսի քաղաք. վարկի ընկերութիւն.	1.754
7	Սարաջև Դաւիթ	1.646
8	Ծովիանեան Իսահակ.	1.300
9	Թամամշեան Իւան.	1.275
10	Մարիամեան-Յովնանեան աղջ. ուսումն.	1.115
11	Լուու-Մեղիքեան կոմս Միքայէլի ժառ.	957
12	Ջուրալով Նիկողայ.	916

1) Կոպէկները չեմ նշանակում:

	ըստ Վրացի կողմից.
13 Թամամչեան Վասիլի	893
14 Վեցել Ֆրիդրիխ	866
15 Թամամչեան Գեորգ	846
16 Հայոց Ներսիս. Հոգ. Ազգ. Գպր.	836
17 Քարթլեով Գեորգի	812
18 Վրաց իշխանուհի Եկատ. Իրակլի	773
19 Վրաց իշխանուհի Եղիսաբ. Իրակլի	773
20 Զեցեր Ֆրիդրիխ	730
21 Էմինեան Յովհաննէս	724
22 Լալայեան Կարապետ-բէկ	707
23 Բուչկիւ Ալեքսանդր	703
24 Թամամչեան Գրիգոր	799
25 Մարքարեան Յովհաննէս	697
26 Խարաղեան Արտեմի ժառ.	692
27 Խոսրովեան Կատարինէ	681
28 Գործմանսիւ Նիկողայ	669
29 Աղաբաբեան Յովակիմ	650
30 Փրիդոնեան Ալեքս.	618
31 Զուբալով Ալեքսանդր	573
32 Մարտիրոսեան Ռոստոմ	535
33 Խալաթեան Իսահակ	521
34 Խալաթեան Սարգիս	521
35 Անանեան Յովսէփի ժառ.	519
36 Բաբանասեան Ալեքսանդր	511
37 Էրիստովա, իշխանուհի Կատարինէ	498
38 Թալիրեան Յովհաննէս	498
39 Ռոտինեան Եագոր	471
40 Ղարիբեան Գալուստ	468
41 Տէր-Նիկողոսեան Գաւիթ	463
42 Զանճուղաղեան Ալեքսէյի ժառ.	456
43 Անտոնեան Սուրմոն	434
44 Զուբալով Լևոն	410
45 Քիւչարեանց Գրիգոր բժիշկ	390
46 Ալաղեան Ալեքսանդր	377
47 Ղորղանեան Գրիգոր	376
48 Մելիքեան Ստեփան	376
49 Խոջամինասեան Սոֆիա	375
50 Ալաղեան Արտեմ	368
51 Միրիմանեան Գաւիթի ժառ.	365

	րուբլի կապ.
52 Սաամերովա Իւլիա	364
53 Ռէլտեր վարաբա	360
54 Ղորղանեան Աննա	357
55 Բաղեանդուրեան Գրիգոր	351
56 Յեջուրեան Յեջուր	344
57 Յակոբեան Սաղոր	344
58 Ամիրեան Գրիգոր	342
59 Էֆենդեան Նունէ	337
60 Փիթոյեան Իսահակ	331
61 Արամաբլիսեան Ալեքսանդր	329
62 Կովկ. Ռնկեր. դեղերի ապր. առևտրի	319
63 Փիթոյեան Իսալ	318
64 Յունաց կկեղեցին	318
65 Ռոտինեան Մարկիանոս բժիշկ	316
66 Կորթոնսկալա Աննա	313
67 Միրզոյեան Իւան. Չոհրաբ	308
68 Մադեր Աղոլթի ժառանգ	305
69 Թամամչեան վարաբա	302
70 Թաթուսեան Յովհաննէս	302
71 Մգիւանի Ասլան	301
72 Տէր-Առաքուրեան Գէորգ	300
73 Ակցըրիզ Բոլխոյաւ	297
74 Մէլեր Իօհան	297

Գումարն է 52.201 ռ. 16 կ.

Որպէս տեսնում է ընթերցողը, քաղաքումս անատէր տուգերի երկու երրորդը հաչեր են: Վերը առաջ բերած թւերից ճիշտ կարակացութիւններ դուրս բերելը հեշտացնելու համար, պէտք է իմանալ թէ տունը ինչպէս է գնահատուում և հարկի ենթարկուում: Ահա օրինակ: Մի տուն բերում է տարեկան եկամուտ 1000 րուբլի: Իմանալու համար թէ ինչ արժէ այդ տունը, գումարում են նորա տասը տարւոյ եկամուտը և ստանում են ուրեմն 10.000 րուբլի: Այս գումարի 25% -ը (2.500 ռ.) հարկի չեն ենթարկում, ուրեմն կը մնայ 8.000 րուբլի, որից ամեն մի 1000 րուբլու համար վերցնում են անահարկ մօտ 8 րուբլի:

Ի հարկէ, չը պէտք է կարծել, որ Թիֆլիսի բոլոր կապիտալիստները այդ ցուցակում լինեն, որովհետև կան կապիտալիստներ, որոնք մեծ կալւածատէրեր չեն. բայց Թիֆլիս ճանաչողը չի կարող չը վկայել, որ այդ ցուցակում չըլլած անուաններ մէջ են Թիֆլիսի ոչ միայն կալւածատէրերը, այլ և առհասարակ զրամատէրերը: Դա բնատրոջ է, որովհետև ցոյց է

տալիս Թիֆլիսի զրամատէրերի հակումը՝ Թիֆլիսի մէջ տներ առնել, կամ տներ շինել, մի խօսքով Թիֆլիսում իսկ կալածատէր դառնալ:

Առ այժմ աւելի հեռուն չեմ գնում այս խաղարկութեան գործում. Բաւականանում եմ միայն թուղիկ ակնարկներով, հենց օրինակ այն պատճառով, որ ամեն մէկի վճարած հարկը չի վերարկուում միայն կալածքին, քանի որ քաղաքային հարկ վճարում են ոչ միայն սնատէրերը, այլ և առհասարակ բոլոր առևտրական գործերի տէր մարդիկ:

Թիֆլիսը զրականապէս անուն է ստեղծում, որպէս երաժշտասէր և գեղարւեստասէր քաղաք: Գլխումս չեմ ասում՝ երաժշտական և գեղարւեստական քաղաք, որովհետև դա կեղծ կը լինէր: Բայց որպէս սիրող թատրոնի և երաժշտութեան և ոչ անպատճառ վաստի, այլ մանաւանդ լաւի նա կարող է իւր բանգը պահանջել թատրոնասէր և երաժշտասէր քաղաքների շարքում: Գուցէ որովհետև դորա վերաջ աւելանում է Կովկասի անունի հետ կապւած մի ինչ որ կախարդական հրապուրանք, բայց սա իրողութիւն է, որ եւրոպական հռչակները անլապազ չեն տեսնում մեզ ևս այցելել: Սոֆի Մենտեր, Պոլլաբեր, Ռալդենսուէր, Պախման, Նախպովա, Ռոտտի և դեռ ուրիշներ, որոնց ես չեմ լիշատակում, մէկը միւսի լետից այցելեցին մեր երկիրը և ամենքն էլ զուրս դնացին գոհ, շատ գոհ Թիֆլիզիցոյ և Բարուեցոյ առատածեռութիւնից: Ի հարկէ չը պէտք է չափազանցնել և կարծել թէ բոլոր հռչակները հենց շտապում են մեզ մօտ գալ: Դա կը լինէր սխալ և շատ սխալ: Ընդհակառակը, դեռ շատ և շատ շատերը դեռ երկար կը մտածեն, մինչև որ ուղեցոյց կը կազմեն մեր երկիրը գալու համար: Բայց և այնպէս մի փոքրիկ հոսանք արեւ ամենապիւստեղծել է և հենց այդ հոսանքն է, որ մեզ մօտ է բերել և այն փոքրիկ Ռաուլ Կոչաւսիուն, որը այս հոկտեմբեր ամսին արեւքան զարձակութիւններ պատճառեց քաղաքիս մեծ ու պատիկին: Նս նորան լսեցի միայն մի անգամ, հոկտեմբերի 31-ին, ուր նա, այլ փոքրիկ վեց տարեկան պիանիստը Նադեյ Աեբերից, Շոպենից, Ծոսսից, Գուենտից այլ և այլ կատարներ, որպէս նաև իւր սեպհական շարադրած մաղուրդաններ: Բնական է այն հետաքրքրութիւնը, որով մարդ աւաջին անգամ սկսում է լսել մի այդքան փոքրիկ երեխաւին, մի մեծ դահլիճում, ներկայութեամբ հարիւրաւոր անձերի: Գուրս է գալիս երեխան, ուղեկցութեամբ իւր հօր, և նստում կոնցերտական մեծ դահլիճում: Բայց, այնպէս վերապէս ունենալով հօրը իւր կողքին նստած, որը իւր սրտուն ոչ—մի ուրիշ օգնութիւն չի անում, բայց այն, որ պեղալն է շարժում և նստաները տեղը դնելու և վերցնելու հոգան է քաջում: Մեր փոքրիկ Ռաուլը սկսեց անել Աեբերից մի բաւականին երկար և զժար կոնցերտական կտոր. մեծ չաջողութեամբ և համեմատաբար մեծ ուժով, որից վտառ կարծեցի թէ պէտք է մի փոքր հանդուստանալ: Բայց մեծ էր

ամենքի զարմանքը, երբ տեսանք, որ, ժողովրդի ծափահարութիւններին չնորհակալութիւններ չազանելու համար տեղից վերկենալուց և զլուխ առլուց վեա, նա կրկին նստեց իւր տեղը և շարունակ խաղաց մինչ կոնցերաի առաջին բաժանմունքի բոլոր կտորները վերջացնելը: Վերերի կոնցերաչտիւկից չեսող նա խաղաց Գունօ-ից, բայց առանց սպաւորութիւն թողնելու: Ներչնչանքը կրկին եկաւ երբ երկրորդ բաժանմունքում սկսեց ածել Նոպենից, որին չէր կարելի չը լսել առանց զմալլելու:

Ճամանակամիջոցի ժամանակ և կոնցերտից չեսող բնականաբար բարձրութիւն երեխաներ և հասակաւորներ հետաքրքրեցին առանձին տեսնել փոքրիկ պիանիստին: Հետաքրքրութիւնը ինձ ևս մղեց զէպի առանձնատնակը, ուր ես տեսաչ փոքրիկ Ռաուլին զբաղւած իւր տաճկական երկու Ֆեականերով, որոնց հետ նա խաղում էր: Սեղանի վերայ դրած էին նաև երկու մատիտ:

— Այս Ֆեակաները երևի պարզներ են:

— Ոչ, պատասխանեց նորա հայրը, այդ ինքն է գնել, բայց այս մատիտները ես եմ նորա համար գնել. նա նոցանով իւր շարադրութիւններն է գրում:

— Մտադիր էք երկար մնալ այտտեղ:

— Ոչ, մի կոնցերտ էլ կը տանք չաակապէս երեխաների համար և ապա կ'ուղևորուենք Ամերիկա կոնցերտներ տալու, իմպրեսարիօ՛ի հրաւերքով: Ռաուլին հրաւիրել են մի ամիս Ամերիկա կոնցերտներ տալու 150.000 Փրանկ վարձատրութեամբ:

— Եւ չէք վախենում, որ կարող է նա չագնել:

— Ոչ. Ռաուլի չըջապատչաները կը վերջանան զեկտեմբերին և ալտուհետեւ նա կ'երթայ Պարիզ, ուր Սեն-Սանս-ը նրան դասեր կը տա:

— Կարծեմ Սեն-Սանսը մասնաւոր դասեր չի տալիս:

— Բոլորովին ճիշտ է, Սեն-Սանսը սչոքին չանձն չի առնում մասնաւոր դասեր տալ, բայց, որպէս մեծ բացառութիւն, Ռաուլին խոստացել է դասեր տալու առանց վարձատրութեան:

Ռաուլի հայր սրբ. Կոչալսկի որը նմանապէս լաւ պիանիստ է, բայց ոչ որպէս մասնագէտ, հաւատացնում էր ինձ, որ իւր սրբին ընդունակ է պարտաչ կոնցերտի ծրագրի քսանպատիկը խաղալ առանց հոգնելու:

— Բայց հետաքրքրական է իմանալ, թէ որքան հասկանում է նա իւր խաղացածը:

— Ռաուլը խաղում է հասկանալով: Եւ նա ինքն է ընտրում խաղալու կտորները. Ալբոսը հենց որ մասները դրեց կրաւիչների վերայ, նա իսկուհն սասայ՝ հայրիկ, գաշնամուրը խանդարւած է: Գորանից է անշուշտ, որտեղ տեղ Ձեզ դուր չի եկել: Եւ գրուէք, հենց որ տեսաւ թէ գաշնամուրը խանդարւած է, Ռաուլը զիմեց հանդիսականներից մէկին, որ մօտն էր կանդնած, և բարկացած սասայ՝ Այն, դուք զիտմամբ գաշնամուրը վատ էք սարքել, որ ես վատ խաղամ, այն զիտեմ...:

—Բայց բաւական չէր լինիլ, եթէ միայն մի երկու կտոր ածէր ու վերջացնէր:

—Նայած թէ ինչպէս. Ռատուը ոչ միայն լաւ է ածում որպէս երեսխալ, այլ շատերը գտնում են որ նորան արժէ լսել առհասարակ:

Հայրը սթամնեց նաև, որ Ռատուը ալժմ արդէն 240.000 բուրլի փող ունի բանկում և որ Ամերիկա դուցէ առաւօժ չը գնալին, եթէ պայմանը ինքը, հայրը ստորագրած չը լինէր այն ժամանակ, երբ դեռ ևս միայն 70.000 բուրլի ունէր Ռատուը: Հօր ասելով, Ռատուը սկսել է ածել երկու տարեկան լրացած, բայց միայն լսողութեամբ: Չորս տարին լրացած, նա արդէն 10 ամիս դաս էր առել, երբ նա տւեց իւր առաջին կոնցերտը, որ շատ հաւանեց վարչաւարի հասարակութիւնը: Գործնից զետեմ արդէն պարտել է ամբողջ Ներոպան և անցեալ տարի Աշխարհահանգէսի ժամանակ, նա տւեց իւր մեծ կոնցերտը Պարիզում, Տրոկսպերօի գահլիճում: Պատմեց նաև, որ նորահետ է միշտ իւր երաժշտական դաստիարակը, վարչաւարից և որ նա Ռատուին պիտի ուղեկցի ամեն ուրեք, նոյն խկերք Պարիզում Սեն-Սանսի մօտ գասեր կ'առնի:

Հետաքրքրական է մի հօր գրութիւն, որը աղքատ հանճարեղ փոքրիկ որդի ունի:

—Ես իրաւագէտ եմ, ասաց նա, և փաստաբան եմ վարչաւարում. բայց ալժմ ևս ստիպւած եմ թողնել փաստաբանութիւնը. Այգ գրութիւնը ինձ համար ծանր է. ևս չեմ կարող առանց պարապմունքի մնալ: Ես մտադիր եմ մի ամսագիր հրատարակել, ինքս մասնագէտ եմ սոցիալական գիտութիւններին:

Հօր կամքով փոքրիկ Ռատուը ինձ մօտ մի լիշտակ թողեց, նւիրելով ինձ իւր մեծադիր լուսանկարը և իւր շարագրութիւնները, իւր անունը գրելով նոցա վերայ: Որքան վարժէ ածում, այնքան վարժ չի գրում Ռատուը: Գրութիւնը նոր գրել սովորած երեխայի գրութիւն է, բայց և այնպէս խղմղած չէ, այլ որոշակի գրւած:

Հետաքրքրական էր երեխայի տեսքը և արտայայտութիւնը: Գլուխը ինտելիգենտ երեխայի գլուխ է, լաւ զարգացած և դուրս ընկած գանգով ու ճակատով և լուրջ հողեացքով: Շարժւածքը շատ ազատ: Փափլիկ դուրեկան երեսին համապատասխանում են մարմինը առհասարակ և նոյնքան փափլիկ և լաւ զարգացած ձեռքերը և բազուկները: Իւր փոքրիկ քորբէ, որ չորս տարեկան է, ծնողների ասելով, նմանապէս լաւ լսողութիւն ունի:

Վերջացնեմ ասելով որ Ռատուը ունի արդէն շատ չքանչաններ որ նա կրում է իւր երեխայական պարզ հագուստի վերայ: Նոցա մէջ մանաւանդ աչքի է ընկնում Պարսից շահի տւած աստղանշանը:

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Տ. ՅՈՎ. ՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Մտկա. 10 հոկտեմբերի

Ռուս Հասարակական և մտաւոր կեանքի հոսանքները և երկ-
ւոյթները լմբռնելու համար, այդ կեանքը ղիտողը անխուսափելի
կերպով հանդիպում է այն հիմնաքարերին, որոնք նոր կերպարանք
ուին Ռուսաստանին, նոր զարեշրջան կազմեցին նորա պատմութեան
մէջ: Հասկանալի է, որ մեր խօսքը այն վերանորոգմունքների մասին
է, որ կատարեցին հանգուցեալ Աղէքսանդր II միջոցով: Թէպէտ
արդէն 25 տարի է լրանում, երբ այդ առաջին և վերին աստիճանի
զգոյշ փորձերը եղան՝ պատուաստել եւրոպական հաստատութիւնները
ուսու հողի վերայ, բաց մինչև այժմն էլ դոքա օրաց ինդիր լինելուց չեն
զադարել և չեն կորցրել իրանց թարմութիւնը: Ուրեմն սպասելի է,
որ ընթերցողը համբերութեամբ զուցէ և հետաքրքրութեամբ վե-
րաբերի, եթէ մենք սանք այդ վերանորոգումների կարճ նկարագիրը:

Անցեալ թագաւորութեան բազմաթիւ րեֆորմների թւում
դատաստանի ու տեղային վարչութեան րեֆորմները, ճորտերի
ազատութիւնից չետոյ, առաջին տեղն են բռնում: Աղէքսանդր II-ը,
1861 թւի փետրւարի 19-ի բարձրագոյն հրովարտակով ազատու-
թիւն տալով 20 միլլիոն ճորտերի, ստեղծեց նոր Ռուսաստանը: Պէտք
էր այդ նորաստեղծ միակերպ զանգւածին նոր ոգի ներշնչել, պէտք
էր արմատապէս վերանորոգել սարկատիրական սկզբունքի վերայ հիմն-
ւած չէնքը: Ձեր կարելի անփոփոխ թողնել նախարեֆորմական Ռու-
սաստանի (дореформенная Русь) հիմնարկութիւնները, որոնք սերտ
կապւած էին նորան, խմբուած էին սարկատիրական ոգով: Ակուեց

րեփորմների շրջանը, սկսեց Ռուսաստանի նոր կեանքը: 1863 թւին համարեա բոլորովին վերացեց մարմնական պատիժը և համալսարանները ստացան նոր կանոնադրութիւն, որ զործադրուեմ էր մինչև 1884 թւի նորագոյն կանոնադրութեան հրատարակելը: 1864 թւին ռուս ժողովուրդը ստացաւ համապատասխան տեղային ինքնավարութիւն, զեմսովո (յունւարի 1-ին), հրատարակեց «Ալեքսանդր II-ի դատաստանական օրէնագիրքը» — Судебные уставы (նոյեմբերի 20-ին), որ աւետում էր ժողովրդին «արագ, արդար, ողորմած և բոլորի համար հաւասար դատաստան»: 1865-ին հրատարակեց նոր ցենզուրական կանոնադրութիւնը, որ մամուլին բաւական արտօնութիւններ տուեց: 1870-ին քաղաքները ստացան ներքին ինքնավարութիւն նոր հիմունքների վերայ: 1874-ի յունւարի 1-ին զինւորական ծառայութիւնը պարտադիր դառաւ բոլոր դասակարգերի համար՝ ծագման վերայ հիմնուած արտօնութիւնները փոխարինելով ուսման արտօնութիւններով: 1878-ին բացեցին կանանց բարձրագոյն կուրսերը:

Րեփորմների ու նորամուծութիւնների այդ երկար շարքում առաջին տեղը բռնում են նոր դատաստանը և զեմսովոն, որ թարգմանելու համար դժւար է բոլորովին համապատասխան բառ գտնել հայերէնում: Կա, ընդհանուր առմամբ, տեղական ինքնավարութիւն էնչանակում: Առանց փոքր ի շատ է որոշ զաղափար ունենալու 1864 թւի այդ ռեփորմների վերայ, անկարելի է հասկանալ ոչ միայն անցեալ և այս տարւայ գլխաւոր օրէնքները, որոնց մասին ես վերելք չիշեցի, այլ և Ռուսաստանի ներքին կեանքը ընդհանրապէս: Այդ պատճառով ես անհրաժեշտ եմ համարում, նախ քան նոր փոփոխութիւնների մասին խօսելը, համառօտ կերպով ծանօթութիւն տալ այդ ռեփորմների մասին:

Ղառաստանական վերանորոգութեան հետ «Մարտ»-ի ընթերցողները կարող են մանրամասն ծանօթանալ, կարդալով «Մուրճ»-ի 1889 թւի № 1 և № 3 համարներում տպւած պ. Կ. Սաղուբեանի «Ղառաստանական վերանորոգութիւն» վերնագրով յօդւածը: Այդ վերանորոգութեան գլխաւոր նորամուծութիւններն էին. — հաւասարութիւն օրէնքի առաջ, դատաստանական և վարչական իշխանութիւնների բաժանուածութիւնը, կամ ուրիշ խօսքով՝ դատարանի ինքնուրոյնութիւնը, դատաստանի անկախութիւնը կամ դատաւորների ան-

փոփոխութիւնը — несменяемость судей (դատաւորին պաշտօնանկ կարելի է անել միայն քրէական դատաստանի ենթարկելուց ու մեղադրող դատավճիռ կայանալուց յետոյ), դռնբաց, հրապարակական և հակաճառական — состязательный — դատավարութիւն, առաջւայ ասփական դատավարութե տեղ, երդեալ և հաշտարար դատաւորների ինստիտուտ (судь присяжных и мировой институт):

Ինչ է երդեալ դատաւորների ինստիտուտը կամ հաստատութիւնը:

Երդեալ դատաւորները մասնակցում են դատաստանին միայն քրէական գործեր քննելիս, նրանք վճռում են միայն մեղադրելի մեղաւորութիւնը կամ անմեղութիւնը, եթէ երդեալ դատաւորները ձայների մեծամասնութեամբ վճռել են թէ մեղադրեալը մեղաւոր է այս կամ այն յանցանքում, պետական դատարանը կը որոշի օրէնքի համաձայն պատժի աստիճանը: Երդեալ դատաւորները մասնակցում են նահանգական դատարանի (окружный суд) նիստերին այն գործերի քննութեան ժամանակ, որոնք դատապարտեալին զրկում են կոչման իրաւունքներից կամ սահմանափակում են այդ իրաւունքները, և դատաստանական պալատի նիստերին՝ մամուլին ու մի քանի պաշտօնական անձնաւորութիւնների ծառայութեան վերաբերեալ յանցանքները քննելիս: (1889 թւի յուլիսի 3-ի օրէնքը երդեալ դատաւորների իրաւասութեան շրջանը սահմանափակեց՝ հանելով նորա իրաւասութիւնից մի շարք քրէական գործեր, որ այժմ զանազան դասակարգերի ներկայացուցիչների մասնակցութեամբ են վճռուում): Երդեալ դատաւորները ընտրում են տեղական բնակիչների թւից՝ առանց դասակարգի խտրութեան: Գաւառական զեմսկից ժողովը (уездное земское собрание), որ կազմում է բոլոր դասակարգերի ներկայացուցիչներից, ընտրում է յանձնաժողովներ, որոնք կազմում են երդեալ դատաւորների ընդհանուր և հերթական ցուցակներ: Ընդհանուր ցուցակի մէջ մտցնում են բոլոր տեղացին, ռուսահայտակ, 25—70 տարեկան և օրէնքով որոշուած պաշտօն կամ հասարակական դիրք և կամ թէ ստացուածք, եկամուտ ունեցող բնակիչները՝ եթէ ֆիզիքական արատ չ'ունին և բարոյապէս անբիծ են: Այդ ընդհանուր ցուցակից յանձնաժողովները ընտրում են օրէնքով որոշուած թւով անուններ և կազմում են առաջիկայ տարւայ համար հերթական

ցուցակ, նոյնպէս և լրացուցիչ ցուցակ (запасный список) Յետոյ այդ ցուցակները բաժանում են չորս-չորս հաւասար մասի (քառամեակներին) և յայտնում են ցուցակ ընկած անձերին թէ որ ամիսներին նոքա պէտք է պատրաստ լինեն, դատարանից հրաւեր ստանալուն պէս՝ զալ իրանց պարտականութիւնները կատարելու համար: Հերթական ցուցակները ուղարկում են դատարանը և յայտարարում են տեղային պաշտօնական լրագրի մէջ: Դատարանի ամեն մի նստաշրջանին (երկու շաբաթ) վիճակով ընտրւում են հերթական ցուցակի քառամեակից 30 հոգի, որ անհրաժեշտ դէպքերում փոխարինեն ասաջիններից բացակայ եղողներին: Այդ 30 հոգին նստաշրջանի ընթացքում պէտք է այցելեն ամեն նիստ, որի սկզբում վիճակ է գցւում և այդ 30 հոգուց ընտրւում են 12 հոգի քննող գործը վճռելու համար, այնպէս որ մեղադրեալը միայն նստի սկզբում է իմանում թէ ումնից է կախւած իւր վիճակի որոշումը և ուրեմն մինչև անգամ կաշառելու փորձ էլ չի կարող անել: Գործի քննութեան սկզբում 12 ընտրեալ դատաւորները երգւում են, յետոյ դատարանի նախագահը բացատրում է երգւեալներին նրանց պարտականութիւններն ու իրաւունքները, յիշեցնելով նրանց կոչման վեմութիւնը: Քննութեան ու կողմերի հակաձառութեան վերջանալուց յետոյ, երգւեալները հեռանում են առանձին սենեակ, ուր ոչ մի ուրիշ մարդ իրաւունք չունի մտնելու, խորհրդակցում են և վճիռ են կայացնում թէ արդեօք մեղաւոր է թէ անմեղ մեղադրեալը:

Երգւեալ դատաւորները ղեկավարւում են միայն իրանց խղճմբանքով և այդպիսով մեղմացնում են չոր օրէնքի խստութիւնը, գործնական կերպով իրագործելով օրէնքի ու բարոյական սկզբունքների համերաշխութիւնը, որի բացակայութիւնը շատ դէպքերում՝ այսինքն օրէնսդրութեան յօդւածների ու բարոյական պահանջների ներհակութիւնը՝ այնքան ցաւ է պատճառում մարդասէր իրաւաբաններին, որոնք զլուխ են ջարդում այդ հարցը զիտնականօրէն վճռելու համար:

Հաշտարար դատաւորները չէին նշանակւում ինչպէս Աովկասում, այլ ընտրւում էին (մինչև 1889 յուլիսի 12-ի օրէնքը): Հաշտարար դատաւոր ընտրւելու համար պէտք էր տեղացի լինել, 25 տարեկանից փոքր չը լինել, ունենալ որոշ նիւթական, բարոյական և

ուսման ցենզ (գոնէ միջնակարգ ուսումնարանի վկայական): Հաշտարար դատաւորները ընտրուած էին երեք տարով: Նրանց ընտրուած էին ոչ թէ տեղացին հողատէրերը (ինչպէս սխալմամբ յայտնուած է իւր յօդածուած պ. 4. Եաղուբեանը, № 3 եր. 496), այլ դաւառական զեմսկից ժողովները, ուրեմն բոլոր գասակարգերի ներկայացուցիչները: Մայրաքաղաքներու (Պետերբուրգում ու Սոսկւայում) ընտրուած թիւերը կատարուած են քաղաքացին խորհրդարանները (Дума): Ընտրուած էին երկու տեսակ հաշտարար դատաւորներ՝ մասնաշրջանային (участковые) և պատուաւոր (почетный):

Ամէն մի գաւառ, իւր մէջը գտնուած քաղաքներով, կազմուած էր մի հաշտարարական շրջան (округъ), որ բաժանուած էր մի քանի հաշտարարական մասնաշրջանների (участокъ): Մասնաշրջանային դատաւորները դատուած էին իրանց մասերում և ստանում էին ուժիկ զեմսկից (մայրաքաղաքներում՝ քաղաքային) զուամարներից: Պատուաւոր հաշտարար դատաւորները ուժիկ չէին ստանում: Նրանք հարկաւոր դէպքերում փոխարինուած էին մասնաշրջանային դատաւորներին: Բացի իրանից հաշտարարական շրջանում (округъ) եղած ժամանակ պարտաւոր էին դատել հաշտարար դատաւորների իրաւասութեան ենթակայ բոլոր գործերը այն դէպքերում, երբ երկու վիճող կողմերը պիմէին նոցա միջնորդութեանը, որից չետոյ նրանք (կողմերը) չէին կարող չ'ընդունել պատուաւոր դատաւորի վճիռը:

Նրջանի պատուաւոր և մասնաշրջանային դատաւորները հաւաքելով՝ կազմում էին հաշտարար դատաւորների ժողով (сѣздъ мировыхъ судоѣ), որ բարձրագոյն հաշտարարական ինստանցիան էր: Հաշտարար դատաւորների ժողովները հաւաքուած էին որոշեալ ժամանակամիջոցներում հաշտարարական գատաքննութեան ենթակայ գործերին վերջնական վճիռ տալու համար և իբրև վճռաջինջ ատեան՝ հաշտարար դատաւորների վերջնական վճիռների վերաբերմամբ:

Անցնենք զեմսովօին: Զեմսովօ բառը ծագում է земля—հող բառից: Հողը առհասարակ ուստաց կեանքում շատ մեծ վեր է կատարում: Ա. Վասիլչիկովը ¹⁾, որի ձեռնհասութեան վերայ կարելի է

¹⁾ Кн. А. Васильчиковъ.—О самоуправленіи. Сравнительный обзоръ русскихъ и иностранныхъ земельныхъ и общественныхъ учреждений.

վտառ չ լինել, կարծում է, թէ ուսաց կեանքը տարբերում է ժամանակակից ուրիշ եւրոպական ազգերի կեանքից զլիսաւորապէս նորանով, որ ուսաց մէջ հողային սկզբունքը գերակշռում է անձնական սկզբունքին, որ ուսս ժողովուրդը հաւասարութիւնը հասկանում է ոչ թէ անձնական իրաւունքների ու պարտականութիւնների մէջ, այլ հողային բաժինների (НАДѢЛЬ) ու հողային տուրքերի հաւասարութեան մէջ (ЗЕМСКОЕ УПРАВЛЕНИЕ): Ժողովուրդը և հողը կարծես իրարից անբաժան գաղափարներ են համարւում: «...Մեր պատմական կեանքի ամենանախնական ժամանակներից սկսած, Ռուսաստանում անձնական տարրը ստորապրւում է հողային տարրին, և ուսը ոչ անհատապէս իբրև քաղաքացի, ոչ էլ ընդհանրապէս իբրև ժողովուրդ մինչև անգամ չի էլ յիշւում պատմագրութիւնների մէջ...» («...զեմլեա, զեմսովո, զեմսկից մարդիկ խօսքերը գործ են ածւում ուրիշ ազգերի հայրենիք ու ժողովուրդ գաղափարների համապատասխանող գաղափարը որոշելու համար... Այդ՝ անձնական տարրի բացակայութիւնն ու հողային տարրի գերակշռութիւնը ուսաց հասարակական կեանքի զլիսաւոր երևոյթն է կազմում, որ ձևատագրական ազդեցութիւն է ունեցել նորա զարգացման վերայ... Մարդկանց սկզբում վերագրում էին հողին, յետոյ ամրացնում էին նորա վերայ (ճորտ էին դարձնում): Մարդ իւր հասարակական նշանակութիւնը ստանում էր այն հողից, որի վերայ բնակւում էր...» Ձեմսովոն նշանակում է տեղային իշխանութիւնների ու հաստատութիւնների ներքին կառավարութեան կազմակերպութիւն, որ ուրիշ տէրութիւններում անւանուում է selfgovernment, ständische Verfassung, տարբերելով նրանցից նորանով, որ ծագում է ուրիշ գաղափարից, — ներքին կառավարութեան մէջ մասնակցողները համարւում են ոչ թէ ժողովրդի, այլ հողի ներկայացուցիչներ:

Ձեմսովոն ուրիմն տեղային ինքնավարութեան ուսական տիպն է: Տեղային ինքնավարութիւնը կոչանում է նորանում, որ տեղային գործերն ու պաշտօնները վարում ու կատարում են տեղացի բնակիչները: Մինչև 1864 յունւարի 1-ի «զեմսկից հաստատութիւնների կանոնադրութեան» գործադրելը, Ռուսաստանի ներքին կառավարութեան մէջ տիրապետում էր չինովնիկական, բիւրօկրատական սկզբունքը. վարչութիւնը համարեա ամբողջապէս գտնւում

էր կատարութիւնից նշանակւած ու նորա առաջ միայն պատասխանատու աստիճանաւորների ձեռքում: 1864-ի յունւարի 1-ի օրէնքը առաւ աստիճանաւորների ձեռքից այն բոլոր գործերի վարչութիւնը, որ վերաբերում էին մասնաւոր-տեղային և ոչ ընդհանուր—պետական շահերին, և յանձնեց տեղային բնակիչներին՝ ի նկատի ունենալով, ինչպէս առաժ է կանոնադրութեան բացատրութեան մէջ, որ եւ ոք չի կարող այնքան եռանդով ու հոգատարութեամբ վարել մի տնտեսական գործ, որքան այն մարդը, որին պատկանում է այդ գործը, ոչոքի համար այնքան զգալի չեն լինում վատ կարգադրութիւնների հետեանքները և ոչ ոք այն աստիճան նիւթապէս չի վնասում այդպիսի կարգադրութիւններից, որքան ինքը գործի տէրը»:

Ձեմսավօի իրաւատութեան շրջանը հետեւեալն է.—զեմսակից տուրքեր, ժողովրդական տարրական կրթութիւն, առողջապահութիւն և բժշկութիւն, բանտեր (հասարակական ու զեմսակից իշխանութիւնների, հաշտարար դատաւորների ու նրանց ժողովներից դատապարտած յանցաւորների համար), տեղային բարեկեցութեան և բարեկարգութեան բոլոր ծիւղերը,—հաղորդակցութեան ճանապարհներ, հասարակական ինսամատարութիւն, հասարակական շտեմարաններ, տեղային առևտուր ու արդիւնագործութիւն և այլն:

Կարևոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին զեմսավօի նախկին կազմակերպութեան հետ, որ գոյութիւն ունէր մինչ 1890 թ. յունիսի 12-ը¹⁾: Ձեմսակից ժողովները կազմւում էին երեք տեսակ ներկայացուցիչներից՝ մասնաւոր հողատէրերի կողմից (դրանց հետ հաշւում են նոյնպէս և քաղաքներից դուրս եղած ամեն տեսակ կապիտալիստները), քաղաքացիների կողմից և գիւղական հասարակութիւնների կողմից: Քաղաքացիների ներկայացուցիչները աննշան փոքրամասնութիւն են կազմում: Ներկայացուցիչները ընտրւում են հողատէրերի, քաղաքացիների ու գիւղական հասարակութիւնների ջոկ—ջոկ հաւաքուող ընտրողական ժողովներում (СѢВЗДѢ): Քաղաքացիների ընտրողական իրաւունքը պայմանաւորւած է որոշեալ նիւթական ցենզով. այդ ցենզին համապատասխանող բոլոր քաղաքացիները

¹⁾ Яковенко. Сѣверный Вѣстникъ 1890 г. № 1 и № 3 „Наше земское представительство“.

Հաւաքում են (ամեն մի գաւառում աւանձին) ու ընտրում են իրանց կողմից ներկայացուցիչներ օրէնքով որոշւած թւով: Հողատէրերի ընտրողական ժողովներին անմիջապէս մասնակցելու իրաւունք ունեն միայն խոշոր հողատէրերը, (200—350 դեսեատին ունեցողները. հիւսիսում այդ ցենզը աւելի բարձր է, որովհետեւ հողը այնտեղ աւելի էժանէ. մանր հողատէրերը, որոնք ցենզի minimum-ի $\frac{1}{20}$ -ից պակաս ունեն, իրաւունք չունեն մասնակցելու ընտրութիւններին, իսկ $\frac{1}{20}$ -ը կամ աւելի ունեցողները Հաւաքում են և, իրանց հողերի քանակութիւնը գումարելով, կազմում են ամբողջ ցենզեր ու դորա համեմատ թւով իրանցից ներկայացուցիչներ են ընտրում և ուղարկում մասնաւոր հողատէրերի ընտրողական ժողովներին, ուր խոշոր ու մանր հողատէրերի այդ ներկայացուցիչները ընտրում են ներկայացուցիչներ մասնաւոր հողատէրերի կողմից: Գիւղական ընտրողական ժողովները կազմւում են վոլոստանոյ ¹⁾ ժողովներում (ВОЛОСТНОЙ СХОДЪ) ընտրւած անձերից: Դրանց թիւը պէտք է լինի ոչ աւելի քան օրէնքով վոլոստանոյ ժողովներում մասնակցելու իրաւունք ունեցող գիւղացիների քանակութեան $\frac{1}{3}$ մասը և ոչ պակաս քան մի մի ներկայացուցիչ ամեն մի գիւղական հասարակութիւնից: Այդ ընտրւածները ժողովում են ու ընտրում ներկայացուցիչներ գաւառի գիւղական հասարակութիւնների կողմից: Գիւղական հասարակութիւնների ընտրողական ժողովը կարող է ներկայացուցիչ ընտրել և ոչ-գիւղացիներ: Այն գիւղացիները, որոնք գիւղական հասարակութեանը չեն պատկանում, մասնակցում են հողատէրերի ընտրութիւններին իբրև մասնաւոր հողատէրեր, եթէ ի հարկէ ցենզին համապատասխանող հող ունին:

Հողատէրերի, քաղաքացիների ու գիւղական հասարակութիւնների ընտրողական ժողովներում ընտրւած ներկայացուցիչները կազմում են գաւառական զեմսկից ժողով (уездное земское собрание) և կոչւում են զեմսկից ձաջնաւորներ (гласные): Նրանք ժողովում են

¹⁾ վոլոստը (ВОЛОСТЬ) մի միութիւն է, որ կազմւում է մի քանի գիւղերից: վոլոստի տեղալին գործերը կառավարում և վարում են վոլոստանոյ ժողովը, վոլոստանոյ դատարանը և վոլոստանոյ ամուսնւորը (ВОЛОСТНОЙ СТАРШИНА).

որոշեալ ժամանակամիջոցում նստաշրջանի: Քաւառական զեմակից ժողովը ընտրում է զաւառական զեմակից վարչութիւն, տեղացին վարչութեան համար զանազան անձնաւորութիւններ և վերջապէս ձայնաւորներ նահանգական զեմակից ժողովի համար: Քաւառական զեմակից վարչութիւնը, որ կազմւում է ամենաքիչը 3 ու ամենաշատը 6 անդամից և ունի մի նախագահ, համարւում է գործադիր օրգան, գործադրում է զաւառական ժողովի վճիռները: Բացի զրանից, հարցերի մեծ մասը առաջարկւում է զաւառական ժողովին վարչութիւնից և վճուում է վարչութեան մէջ: Նահանգի զանազան զաւառական զեմակից ժողովներից ընտրւած ձայնաւորները, ժողովելով նահանգական քաղաքում նստաշրջանի, կազմում են նահանգական զեմակից ժողով (губернское земское собрание), որ իւր միջից ընտրում է նահանգական զեմակից վարչութիւն (губернская земская управа) մի նախագահով:

Այդպիսով զեմակից միութիւնները զաւառական և նահանգական են: Նահանգների զեմամտները իրար հետ կապ չ'ունին: Քիւղական հասարակութիւնները և վոլոստների զեմամտի մասը չ'են կազմում: Նրանց մէջի հաստատութիւններն ու պաշտօնները համարւում են ոչ թէ զեմակից, այլ հասարակական հաստատութիւններ ու պաշտօններ՝ քաղաքացին հաստատութիւնների ու պաշտօնների նման: Քիւղական հասարակութիւններն ու վոլոստները, մինչև 1889-ի յուլիսի 12-ի օրէնքը, ենթարկւում էին «Քիւղական գործերի ատեանների» (присутвіе по крестьянскимъ дѣламъ) զեմակից նաչալնիկ կոչւող նոր պաշտօնեաների իշխանութեանը:

Տեղացին ինքնավարութիւն, զեմամտ, ունեն Եւրոպական Ռուսաստանի միայն 34 ներքին նահանգները:

1889-ի յուլիսի 12-ի օրէնքը ոչնչացրեց ընտրողական հաշտարար դատաւորների ինստիտուտը, ստեղծեց զեմակից նաչալնիկներ, որոնք՝ նշանակւում են և ռոճիկ ստանում կառավարութիւնից, զիւղացիների համար իսկական նաչալնիկ են, իսկ միւս դատաւարների համար միայն դատաւորներ: Բայց այդ և ուրիշ նորամուծութիւնների ու կազմակերպութեան մէջ մտցրած փոփոխութիւնների ու զեմամտի՝ քսանհինգ ամեայ գործունէութեան մասին միւս անգամ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻՑ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՔԵՐԸ 1870-ԻՑ ԳԵՍ

«Հաշւալին պալատը» այս օրերս ունեցաւ մի փառաւոր նիստ, ուր ընդհանուր պրոկուրոր Բընօ մի ճառ կարդաց, ընտրելով իւր թեման «Ֆրանսիայի պետական ծախքերի զարգացումը 1870 թւականից սկսած մինչ այս վերջին 1890 թւականը: Առանց քննադատութեան մէջ ընկնելու, նա գլխաւորապէս ներկայացրեց մի ստատիստիքական աշխատանք, աշխատելով յոչց տալ Ֆրանսիական հանրական ընթացքը և որոշել նոցանից գլխաւորների փոփոխութիւնների պատճառները:

Ֆրանսիական պետական ծախքերը 1891 թւականի համար սրուած են կամ 3 միլիարդ 247 միլիօն (այսինքն 3247 միլիօն) Ֆրանկի և կամ 3 միլիարդ 182 միլիօն Ֆրանկի, նայած թէ դոցանից սրը կը հաստատէ պարլամենտը ընդունելով առաջինը, որպէս հիմք:

1869 թւականին պետական ծախքն էր	1,847:000 Ֆրանկ,
1891 թւականին ծախքը կը լինի	3,247:000 Ֆրանկ

Նշանակում է որ 1869-ից մինչ 1891 թ.ը պետական ծախքերը աւելացել են 1 միլիարդ 400 միլիօն Ֆրանկով:

Այդ դանազանութիւնը ահադին է, և խնդիրը տրանսումն է, թէ ինչ պատճառներից է չառաջացել այդ: Պատճառների մէջ կան երկուսը, որոնք հանրածանօթ են. մի կողմից անփութալ Ֆրանսիական բիւջետը կրում է 1870 թւականի ծանրութիւնը և պատիժը, իսկ միւս կողմից նա աճել է հաղորդակցութեան ճանապարհների նորոգումների և լրացնելու ծախքերի պատճառով:

1870 թւականի պատերազմը ունեցաւ «ուղղակի և անմիջական» հետեանք այն, որ Ֆրանսիային սուժել տւեց 7 միլիարդ 200 միլիօն Ֆրանկ: Այդ զարհուրելի գումարից 5 միլիարդը տրւեց Գերմանիային, որ վերջինս իւր զօրքերը դուրս բերէ Ֆրանսիայի հողի վրայից. 251 միլիօն Ֆրանկ տրւեց նոյնպէս Գերմանիային որպէս պատերազմական սուղանք, 138 միլիօն Ֆրանկ վերադարձւեց Ֆրանսիայի նահանգներին այն ծախքերի համար, որ նոքա արել էին նաղալին (ֆրանսիական) պահպանման զօրքի հա-

մար. 1 միլիարդ 673 միլիոն ֆրանկ մսխւեց զինւորական պարագաները վերանորոգելու և պաշարեղէնի համար: Իսկ ալ չնոյն գործը, ալն է զինւորական պարագաների վերանորոգելը և պաշարեղէնը (վառօղ, գնդակ, թնդանօթ, հրացան և ալն) պահանջել է ալ ժամանակահատից դէս նորանոր և ոչ պակաս խոշոր զոհարելութիւններ. 1878 թւականից դէս, երբ փակեց լիբլիգացիայի հաշիւը, մինչ 1889 թւականը ալ գործի վերաջարած ծախքը անցել է 2 միլիարդից, և պատերազմական միլիտարութիւնը 1889-ից դէս նոր պահանջներ արել. 700 միլիոն ֆրանկի, որը գնալով անշուշտ անելանալու է:

Պատերազմական միլիտարութիւնը, տեսնելով, որ ալ առարկայի համար ստուած ծախքերը ոչ թէ ժամանակաւոր են, ալ մշտական են, վերջապէս վճռեց ալ ծախքերի համար ալ ևս չը դիմել փոխառութիւնների. Այժմ եկել են ալն եզրակացութեան, որ պատերազմական պարագաները միշտ պէտք է կատարելագործուեն և փոփոխուեն, եթէ ուրում են որ միշտ կանգնած լինեն ազգային պաշտպանութեան պահանջների բարձրութեան վերայ: Այնպէս որ ալն, ինչ մինչ այժմ համարում էր իբր «արտաքոյ կարգի» ծախքեր, այժմ արդէն սկսել են համարել որպէս մշտական: Եւ իբր պատերազմական բիւջետում 1891 թւականի համար, մինչ այժմեալ «արտաքոյ կարգի» ծախքերը մտցուած են «սովորական» ծախքերի մէջ:

Պատերազմական ծախքերից լեսոյ պէտք է վիշել ալն ծախքերը, որ արւած են հաղորդակցութեան ճանապարհների կատարելագործելու համար: Այդ գործի համար 1870 թւականից դէս մինչ 1891 թւականի վերջը մըսխւած կը լինի 7 միլիարդ 686 միլիոն ֆրանկ: Այդքան դումար են պահանջել նորագումը և լրացումն ճանապարհների, նաւարկելի գետերը և ջրանցքների, երկաթուղիները և նաւահանգիստները: Մինչ սոյն 1890 թւականի դեկտեմբերի վերջը ալ բաների վերայ մսխւած կը լինի 5 միլիարդ 539 միլիոն ֆրանկ: Ռընօ ալ խնդրի վերայ մի հարց է դնում՝ չենք ոգևորուել, չենք շտապել արդեօք ալ ծախքերը անելիս: Շատ կարելի է, ստաց նա, բոլց և ալնպէս չի կարելի չընդունել, որ գործը անհրաժեշտ էր, անչեւաձգելի և որ ստացած հետևանքները կարևոր են և մեծ: Հանրապետութիւնը ճրագրել էր դեռ աւելի էլ մեծ աշխատանքներ, բայց սնտեսական տաղնապի գիմաց ստիպեց չափաւորել իւր ծախքերը, ապացոյց տալով, որ հանրապետական կառավարութիւնը ոչ միայն մեծ ճրագիրներ գիտէ կազմել, ալ և չափաւորուել, երբ հարկն էր:

Ծախքերի ալ երկու շօղածները չիշելուց լես, Ռընօ անցաւ բիւջետի աւելի մանր շօղածներին: Ընդհանուր առմամբ, դաքա են՝ բացի հանրապետական շինութիւններից՝ քաղաքացիական ծառայութիւնները առհասարակ: Ռընօ ապացոյցներ բերեց, որ, չը նաչած բիւջետի տարեցտարի մեծանալուն, միլիտարական շատ բաժիններ ծախքերի կողմից մնացել են նոյնը, ինչ ստաջ և կամ շատ քիչ փոփոխութիւններ են կրել: Օրինակ՝

հարկեր ժողովելու ծախքերը քիչ են աւելացել և այդ աւելացումներն էլ եղած են չօգուտ մանր և ոչ բարձր պաշտօնեաների: Մեծ ուժիկները, ընդհակառակը, դեռ նւազել էլ են:

Ծախքերի կողմից աճումն ցոյց են տւել ղինւորական և քաղաքացիական պենսիաները և հասարակաց կրթութիւնը: Ռընօ'ի մանրակրկիտ ուսումնասիրութիւնից զուրս է գալիս, որ այս վերջին քսան տարում ծախուել է Ֆրանսիայում կրթական գործի վերաջ մօտ 2 միլիարդ ֆրանկ: Իսկ ինչ վերաբերում է պենսիաներին, զուքա հասնում են 218 միլիօն ֆրանկ: Ծառայութիւնից վտ քաշածները և պենսիա ստացողները թիւը անցնում է 240.000-ը:

Ծախքերի աճումը քննելուց չեա, Ռընօ անցաւ այս խնդրին, թէ որքան է հարստացել երկիրը, այդքան ծախքեր անելով: Բայց դա մի առարկայ է, որը արժէր որ առանձին կերպով քննել և ահա ինչու ճառախօսը այդ մասին միայն թուուցիկ ակնարկ գցեց երկրի հարստութիւնների աճման, վիշելով պր. դը Ֆովիլ ստատիստիկոսի գեղեցիկ աշխատանքը՝ L'évaluation de la fortune et des revenus de la France (Ֆրանսիայի հարստութեան և եկամուտների զննահատումը), պ. Ռընօ եզրակացրեց հետևելով. «Ինձ թւում է թէ հաստատ է, որ Հանրապետութեան կառավարութիւնը ինչ որ մտիւել է այս քսան տարիներում երկիրը թշնամիներից ազատելու, իւր կրճատւած սահմանները պաշտպանելու, իւր անդրժովպին երկիրները ապահովելու, իւր հազորդակցութեան ճանապարհները բարելաւելու, իւր սրտս-հեռադրական ծառայութեան և նույնպէս ազգի մտաւորական մակերեւոյթը բարձրացնելու համար,—այդ բոլորը ոչ մասնաւորներին միասեց և ոչ չեղօքացրեց երկրագործութիւնը և գործարանական արդիւնարեքութիւնը: Չը նազած ծախքերի աճման—Ֆրանսիան չ'աղքատացաւ»:

Temps լրագիրը, Ռընօի ճառից այս կտորները առաջ բերելով, հարկ է համարում աւելացնել իւր կողմից մի բան, որ լուութեան էր տւել ճառախօսը, բայց մի բան, որ շատ կարեւոր է: Այդ լրագիրը, որի ասածի ճշմարտութեան վերաջ կարող ենք վստահ լինել, հարկ է համարում աւելացնել, որ այն 1 միլիարդ 400 միլիօն ֆրանկը, որ 1870 թւականից դէս աւելացել է ֆրանսիական բիւջէտի վերաջ, ծածկւում է ոչ թէ նոր հարկերով, ինչպէս շատերը կարող են կարծել, ընդհակառակը, ֆրանսիական կառավարութիւնը հնարք է գտել դեռ հարկերի տաքսան իջեցնել 300 միլիօն ֆրանկով: Ապա ինչով է ծածկւում նա այդ աւելացած սարսափելի ծախքերը? պատասխան՝ նորանով որ միւնտոն հարկը այժմ շատ աւելի է տալիս, քան տալիս էր քսան տարի առաջ:

Լրագրի տւած այդ տեղեկութիւնը պէտք է պարզել: Դիցուք Ֆրանսիայում կալ մի հարկ՝ droit de timbre, որի համաձայն ամեն մի հաշիւ, որ մէկը տալիս է միւսին, պէտք է տէրուեալսան մարկա ունենալ՝ 5—10—20

սանտիմ: և այլն, նաչած թէ ինչքան դումարի հաշիւ է: Արդ, այժմ այդ նոյն տարբը ապիս է պետութեան մինչ 700 միլիօն ֆրանկ եկամուտ, մինչդեռ առաջ նա տալիս էր զլիցուք միայն 500 կամ միայն 300 միլիօն: Հարկը չաւելացաւ, այլ նոյնն է, բայց եկամուտը աւելացաւ, չնորհիւ առևտրի մեծանալուն: Իսկ առևտուրը մեծացաւ, որովհետև շինեցին նոր երկաթուղիներ, նոր ջրանցքներ, նորոգեցին նաւահանգիստներ, այսինքն չնորհիւ արւած ծախքերին: Ուրմն ծախքը սպառիս տասն ինքնաբերարար ծածկեց:

Թէ ֆրանսիական լրտղրի և թէ մեր տասնը անպալման կերպով չի վերաբերում լուրջ հարկերին, որովհետև կան նաև հարկեր, որոնք աւելացրած են. բայց ընդհանուր առմամբ դա ճիշդ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողները յիշում կը լինեն մեր անցեալ անգամայ («Մուրճ» № 9) յօդաճից, որ, մեր կարծիքով, ներկայ քաղաքական և կուլտուրական աշխարհը երեք գրուպպաների է սկսում բաժանուել: Դոցանից մի գրուպպա կազմում են Ամերիկական տերութիւնները, միւսը Ռուսիան իւր եւրոպական և ասիական երկիրներով և երրորդ՝ Միջին և Արեւմտեան Եւրոպան: Մեր ընթերցողները երևի յիշում կը լինեն, թէ ինչ քաղաքական մեծ Փակտոր համարեցինք այս հանգամանքը, որ Ամերիկան աշխատում է ոչ միայն քաղաքականապէս, այլ և առևտրական կողմից, եթէ հնար է՝ միանգամայն անջատել Եւրոպայից, Այդ ձգտումների վերջնագոյն արդիւնքն է Մակ Կինլէյի մաքսային օրինագիծը, որով անչափ դժւարանում է եւրոպական երկիրներէ յարաբերութիւնը Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների հետ:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների բռնած զիրքը անկարելի է, որ ոչ մի հետևանք չը յառաջացնէ Եւրոպայի տերութիւնների յարաբերութիւնների մէջ և չը դրդէ նոցա դէպի ինքնապաշտպանութիւն: Արդ, արդէն այժմ սկսում են արծարծել զերմանական և Աւստրիական թերթերում այս միտքը, որ Ղերմանիան մի կողմից, Աւստրիա-Ունգարիան միւս կողմից պէտք է ոչ միայն արտաքին քաղաքականութեան համար միացած լինեն, որպէս և են նոքա այս րոպէին, այլ որ նոքա պէտք է նաև տնտեսապէս միանան, կազմելով մի մաքսային դաշնակցութիւն: Եթէ այդ արդէն արծարծւած միտքը իրագործւի, զերմանական-աւստրիական-ունգարական մաքսային դաշնակցութիւնը կը կազմի մի այնպիսի ահագին տնտեսական ոյժ, որ նորա շահերի առջև իսկապէս ստիպւած կը լինեն խոնարհուել զբացի աւելի մանր տերութիւնները և կամ ուղղակի ստիպւած

կը լինեն մանել նոյն դաշնակցութեան սիստեմի մէջ: Թէ որքան մեծ ձնում կարող կը լինեն նոքա դործ դնել Ֆրանսիայի և Անգլիայի վերայ, այդ դեռ ևս դժար է գուշակել, բայց չի կարելի հերքել, որ քա այն ձևերից մէկն է, որով կարելի է իրականացնել ամբողջ միջին և արևմտեան Եւրոպայի մաքսային միութիւնը, որը դեռ քանի տարի առաջ կատարեալ ուտուպիա էր համարուած:

Միջին Եւրոպայի մաքսային դաշնակցութեան զաղափարը թէև դեռ հեռու է համարուում իրագործելուց, բայց դորա համար մի քանի դրական յոյսեր կան: Գոցանից մէկը պէտք է համարել այս իրողութիւնը, որ Կայսր Ալիհիւմ II-ի և Ֆրանց-Յովսէփի վերջին տեսակցութեան ժամանակ, գերմանական Սիլեզիայի Աոհնատոկ քաղաքում, Աւստրիա-ունգարական Կայսրը միանգամայն հակամէտ է ցոյց է տւել իրան այդ երկու կայսերութիւնները մաքսային միութիւնով միացած տեսնել:

Մի այլ իրողութիւն հետեւեայն է: Վերջերքումս Վիեննայում գումարուած էր միջազգային գիւղատնտեսական և անտառաբուծական կոնգրէս, որի կազմուած մասնաժողովներից մէկի պարտականութիւնն է միջին-եւրոպական մաքսային դաշնակցութեան խնդիրը մշակել: Այժմ այդ մասնաժողովի մէջ արծարծւել է այս միտքը, որ մասնաժողովին պէտք է հրաւիրեն նաև մի քանի ուրիշ տէրութիւնների ներկայացուցիչներ, որոնք և կ'աշխատեն կազմել մի ընկերութիւն, որի նպատակը կը լինի միջին Եւրոպայի միջազգային մաքսային դաշնակցութիւնը գլուխ բերել:

Այս մաքսային դաշնակցութիւնը ի հարկէ դեռ միայն ապագայի դործ է. բայց չը նայած դորան, նա հետաքրքրական է և կարևոր այժմեայ քաղաքական դրութիւնը որոշելու համար: Խնդիրը արծարծուած է և համակրութեամբ է ընդունուում Գերմանիայում և Աւստրիայում. երկուսի էլ կառավարութիւնները կը ցանկային դործը գլուխ բերել, առանց որ դորանով այդ տէրութիւններից մէկը իւր քաղաքական անկախութիւնը միւսին զոհել կամենար: Յոյց չի տալիս այդ արդեօք, որ Ռիսմարկի գլուխ բերած գերմանական-աւստրա-ունգարական քաղաքական դաշնակցութիւնը շատ ամուր հիմքերի վերայ է դրւած և որ այժմեայ հանգամանքներում չը պէտք է երևակայել անգամ, թէ նա կարող է խախտւել: Այժմ, որպէս տեսնում

են մեր ընթերցողները, նաև Բիսմարկի հեռացնելուց յետոյ, երկու կողմի կառավարութիւնները ոչ միայն չեն մտածում խախտել այդ քաղաքական դաշնակցութիւնը, այլ անգամ ամրապնդել նորան մաքսային միութիւնով, թէ՛և այդ մաքսային միութեան առաջարկը առ այժմ կարող է միայն հասցնել առևտրական դաշնակցութեան իրար համար ամենաձեռնաու պայմաններով:

Ինչ է առևտրական դաշնակցութիւն: Կա մի պայմանագիր է երկու տերութիւնների մէջ, որի համաձայն երբ պայմանաւորած երկիրներից մէկից ապրանք է անցկացնում միս պայմանաւորած երկրի սահմանը, ապրանքի մաքս (պոլլինա) վճարում է ոչ թէ այն երկրի ընդհանուր մաքսային տարիֆի համաձայն, այլ պայմանագրի համաձայն: Իսկ պայմանագրի մէջ բնական է որ աւելի փոքր մաքս է նշանակւած: Այդպիսով, այն երկիրը որ զիցուք Ֆրանսիայի հետ առանձին առևտրական դաշնակցութիւն չունի, նա Ֆրանսիա ապրանք անցկացնելիս՝ վճարում է Ֆրանսիական ընդհանուր տարիֆում նշանակւած բարձր մաքսը, իսկ որ երկիրը որ ունի առևտրական դաշնակցութիւն, Ֆրանսիա ապրանք անցկացնելիս՝ վճարում է միայն պայմանաւորած մաքսը, որ միշտ ընդհանուր տարիֆում նշանակւածից աւելի պակաս է լինում:

Այդ է նշանակում միջազգային առևտրական դաշնակցութիւն, մինչդեռ մաքսային միութիւն երկու երկիրների մէջ նշանակում է այն, որ այդ երկու երկիրների միջև կարելի է ապրանք անցկացնել առանց մաքսի:

Արդ, մեր ասելը այն է, որ Գերմանիայի և Աւստրիա-Սեւաբրիայի մէջ մաքսային միութեան զաղափարը արծարծւած է, բայց որ այդ զաղափարի իրագործումը առ այժմ դժւարին լինելով, կամենում են մի առևտրական դաշնակցութիւն կապել, որը բաւականին կը մօտենայ մաքսային միութեան իւր շատ փոքրիկ մաքսերով:

Առևտրական դաշնակցութիւններ սակայն ոչ միայն նոր չեն Ներդրւում, այլ առ այժմ կարծես իրանց դարը անցել են: Նոցա օրինակը աւեց Ֆրանսիան, 60-ական թւականների սկզբում, որը բաւականին կը մօտենայ մաքսային միութեան իւր շատ փոքրիկ մաքսերով:

Այնպէս որ գրեթէ բոլոր եւրոպական պետութիւնները իրար հետ կապւած են առևտրական դաշնակցութիւններով: Ժամանակը լրանալուց առաջ, նոքա միշտ նորոգում էին: Բայց այժմ հասել է մի ժամանակ, երբ առևտրական դաշնակցութիւնները մեծ կրիզիսի են ենթարկում: Եւ ահա թէ ինչու: Պրանսիան արդէն յայտարարել է, որ, երբ 1892 թւականին կը լրանայ պայմանաժամը, այլ ևս առաջուց ոչ ոքի հետ չի կամենում նորոգել իւր առևտրական դաշնակցութիւնները, այլ կամենում է նորից լիակատար ազատութիւն ձեռք բերել և վարել իւրաքանչիւր երկրի հետ, որպէս ինքը յարմար կը դատի: Պէտք է ասած, որ Պրանսիայի այդ կերպ փոխելը, այսինքն նորա բռնած դիրքը միջազգային առևտրական դաշնակցութեան խնդրում— ահազին աղմուկ է գցել ամբողջ Եւրոպայում և, համարձակ կարելի ասել, որ քաղաքական խնդիրներից դա այս բոլորին ամենակարևորն է:

Մեզ հարկաւոր է այդ խնդրի հետ ի մտոյ ծանօթանալ, որովհետև, առանց այդ ծանօթութեան, մեր ընթերցողները կարող են քաղաքական այժմ կատարուող եղելութիւններից շատերը ամենևին չը հասկանալ: Սա մի զուտ առևտրական խնդիր չէ, այլ առևտրականից աւելի՛ նա քաղաքական խնդիր է: Այդ կը տեսնեն մեր ընթերցողները իրանք, երբ բանի էութիւնը պարզաբանած կը լինենք:

Մենք արդէն ասացինք, թէ ինչ է նշանակում առևտրական դաշն: Դա մի պայման է, որով երկու տէրութիւններ իրար զիջումներ են անում մաքսերի մէջ: Բայց մինչ այժմ իշխող առևտրական միջազգային դաշինքների մէջ միշտ մտցնում էր հետևեալ յուրաժը՝ եթէ մեզնից մէկն ու մէկը, ուրիշ պետութեան հետ առևտրական դաշն կապելիս, նոյն արդիւնքների (ասորանքների) համար աւելի փոքր մաքս նշանակելու համաձայնի, այն ժամանակ մեզնից երկրորդը իրաւունք պէտք է ունենայ նոյն զիջումից օգտուելու: Խօսենք օրինակով: Բիցուք Պրանսիայի հետ դաշն կապելիս, Վերմանիան պարտաւորել է վերցնել Փրանսիական հասարակ զինիներից մաքս մի շիշի համար մի բութի: Բայց նոյն Վերմանիան, մի քանի ժամանակից յետոյ Յունաստանի հետ դաշն է կապում, պարտաւորելով վերցնել յունական հասարակ զինիներից մի շիշի համար միայն 50 կոպէկ: Այդ զիջումը Յունաստանին՝ պարտաւորացնում էր Վերմանիային

Ֆրանսիական զինիների համար որոշւած մի բուբլու մաքսը իջնցնել նմանապէս 50 կոպէկի:

Այդ տեսակ յօդւածը մի առևտրական դաշինքի մէջ կոչուած է՝ ամենախրախուսուած ազգի պայման (la clause de la nation la plus favorisée): Եւ հենց այդ յօդւածն է, որով նորագոյն առևտրական միջազգային դաշինքները մեծապէս տարբերուած են հին ժամանակներում գոյութիւն ունեցած առևտրական դաշինքներից: Առևտրական դաշինքներ կապելը, որպէս ասացինք, եւրոպական միջազգային կեանքի մէջ սովորական կարգ դառաւ Նապոլէօն III-ի ժամանակ, բայց միայն 1860 թւականից դէս: Այդ նորամուծութեանը մեծապէս պարտական է այժմեայ եւրոպան իւր միջազգային առևտուրի ծաւալումով: Նա շատ մեծ զարկ տւեց միջազգային առևտրին, որովհետև դորա շնորհիւ մաքսերը ամենայն օր, ամեն ամիս կամ ամեն տարի չէին փոփոխուած քմահաճ կերպով, որ շատ քնասում է առևտրին, սորա վիճակը միշտ և անասնկալ փոփոխութիւնների ենթարկելով:

Առևտրական դաշինքների դարը, մեզնից մի քսան տարի առաջ այնքան երկարատև էր համարուած, որ Ֆրանս-գերմանական ահեղ պատերազմի ժամանակ, 1870-71-ին, երբ Ֆրանկֆուրտում խաղաղութեան դաշնը ստորագրուեց, Բիսմարկը հարկ էր համարել այդ դաշնի մէջ մտցնել 11-երորդ յօդւածը, որով թէ Ֆրանսիան և թէ Գերմանիան պարտաւորուած են, իրանց փոխադարձ միջազգային առևտուրի մէջ, իրար հետ վարել ամենախրախուսուած ազգի պայմանի համաձայն, եթէ միայն այդ ամենախրախուսուածը կը լինեն՝ Աւստրիան, Անգլիան, Բելգիան և Ռուսիան: Ուրեմն ինչ մաքսային զիջումներ որ անելու լինէր Ֆրանսիան Անգլիային, Ռուսիային և այլն, նոյն զիջումները Ֆրանսիան պարտաւոր էր անել և Գերմանիային: Նոյնպէս պէտք է վարէր և Գերմանիան Ֆրանսիայի հետ, եթէ միայն Գերմանիան որ և է մաքսային զիջումներ անէր յիշւած երկիրներից մէկին կամ միւսին:

Ձի կարելի չը նկատել, որ Բիսմարկը, մտցնելով մի այդպիսի յօդւած խաղաղութեան դաշնի մէջ, կարծում էր, որ Ֆրանսիան տուժիշտ ստիպւած է առևտրական դաշինքներով կապուած լինել յիշուած տէրութիւնների հետ և որ ուրեմն Գերմանիան միշտ ապահով-

ած կը լինի, որ ինքը կ'օգտուի այն բոլոր զիջողութիւններէց, որ Պրանսիան կ'անէ միւս տէրութիւններին: Ինքը Բիսմարկը կապելով Պրանսիայի ձեռքերը, Վերմանիայում, 70-ական թւականների վերջից սկսած, սկսեց հետևել հովանաւորող քաղաքականութեան, այսինքն բարձր մաքսեր նշանակեց օտար ապրանքների համար: Պրանսիայի շահերը սակայն պահանջում էին առևտրական դաշինքներով կապել միւս տէրութիւնների հետ, այնպէս որ Պրանկֆուրտի խաղաղութեան դաշինի 11-երորդ յօդաւածի զօրութեամբ, ստիպւած էր նաև Վերմանիային թող տալ, որ սա օգտուի այն բոլոր զիջողութիւններից, որ Պրանսիան անում էր Անգլիային, Ռեզիային և այլն: Եւ որովհետև Վերմանիան առևտրական դաշինքներ չէր կապում ոչ ոքի հետ, այդ պատճառով և Պրանսիան չէր կարող օգտուել մաքսային զիջումներից Վերմանիայի կողմից:

Վրութիւնների այդ անհաւասարութեան ձնշումը մեծապէս ազդում էր Պրանսիայի վերայ, որը ոչինչ չէր կարող անել այդ բանի դէմ, քանի որ Պրանկֆուրտի խաղաղութեան դաշինի 11-երորդ յօդաւածը քանդելու համար՝ հարկաւոր էր պատրաստ լինել պատերազմ յայտնելու:

Այդ հանգամանքների մէջ Պրանսիայում, 80 թւականների մասնաւանդ վերջին տարիներում սկսեց կազմել մի կուսակցութիւն, որի նպատակն էր ազատել Պրանսիան առևտրական դաշինքների կապանքներից, քանի որ մասնաւանդ այդ բոլորի օգուտը հասնում է իւր առած Վերմանիային, առանց սորանից համապատասխան օգուտները ստանալու: Այդ կուսակցութեան պարագլուխն էր և է Մելին, որը այդ հակադաշնադրական շարժման կատաղի հոսանքներ տւեց այն աստիճան, որ նորա կուսակցութեան դիմաց ստիպւած եղան լուել նոյն իսկ քաղաքական մինչ այժմ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները. և արտաքին առևտրական քաղաքականութիւնը դառաւ պարլամենտի ամենամեծ ներքին խնդիրը: Այս տարի այդ շարժումը հասաւ իւր ոյժի գագաթնակէտին, այնպէս որ նորա ոյժի առջև կառավարութիւնը ստիպեց յայտարարել, որ Պրանսիան այլ ևս ոչ մի տէրութեան հետ խօսք չի տալիս կապել առևտրական դաշնակցութիւնով կամ նորոգել արդէն եղած դաշինքները, որոնց ամենի պայմանաժամը լրանում է 1892 թւականին:

Մենք կարող ենք համարձակ ասել, որ Ֆրանսիան մի այդպիսի համարձակ քայլով իրապէս ապացուցեց իւր դիրքի կատարեալ անկախութիւնը և այն, որ նա իսկապէս իրան զօրեղ է զգում, թէպէտ և այժմից դեռ դժուար է գուշակել թէ նա օգուտ թէ վնաս պիտի ստանայ իւր արած այդ վստահ քայլից:

Փոխանակ առևտրական դաշինքների, Ֆրանսիական կառավարութիւնը այժմ մշակել է մի տարիք, որ և այն իսկ հոկտեմբեր ամսին առաջարկեց պարլամենտին: Այդ տարիքը երկու տեսակ մաքսեր է նշանակում ամեն մի ապրանքի համար՝ մէկը բարձր, միւսը՝ ցածր: Այլ իւր հետ բարեկամաբար կը վարւի, Ֆրանսիան մտադիր է նորա նկատմամբ տարիքի մէջ նշանակած ցածր մաքսը գործադրել, իսկ ով թշնամական դիրք էր բռնի — նորան կ'ենթարկի բարձր մաքսի:

Ֆրանսիական այդ նոր տարիքը այս տարւոյ հոկտեմբեր ամսի մեծ քաղաքական խնդիրներիցն էր և նա դեռ կը շարունակի մեծ խնդիր մնալ նաև այսուհետև: Բայց մի հանգամանք, որը տալիս է այդ իրողութեան սուր քաղաքական կերպարանք, այդ հետևեալն է: Մենք ասացինք, որ Գերմանիան իւր քաղաքական բարեկամութիւնը Աւստրիա-Ունգարիայի հետ ուզում է ամրապնդել եթէ կարելի է՝ մաքսային միութիւնով և կամ յամենայն դէպս՝ առևտրական դաշնակցութիւնով, ուր Գերմանիան տրամադրութիւն ունի շատ չնչին մաքսեր նշանակել աւստրիա-ունգարական ապրանքների համար, որպէս և Աւստրիա-Ունգարիան՝ գերմանական ապրանքների համար: Բայց Ֆրանկֆուրտի խաղաղութեան դաշնի 11-երորդ յօդուածի զօրութեամբ, այն բոլոր մաքսային զիջումները, որ կ'անէ Գերմանիան Աւստրիա-Ունգարիային, Գերմանիան ստիպւած է անել և Ֆրանսիային: Եւ Գերմանիայի համար ցաւը սա է, որ ինքը այն ժամանակն է ուզում մի այդպիսի բան գլուխ բերել Աւստրիա-Ունգարիայի հետ, երբ Ֆրանսիան, հենց դուցէ զլիաւորապէս Գերմանիայի ջգրու, վճուել է վերջ տալ առևտրական դաշինքներին: Խնդիր է բարձրացրած նաև այս բանի մասին, որ եթէ մինչև անգամ Գերմանիայի ու Աւստրիա-Ունգարիայի մէջ կայանալու լինի մաքսային միութիւն, ուրեմն որ եթէ նոքա փոխադարձաբար իրարից մաքս չը վերցնեն, արդեօք Գերմանիան Ֆրանկֆուրտի խաղաղութեան դաշնի 11-երորդ յօդուածի զօրութեամբ պարտաւոր չի լինիլ որ նաև Ֆրան-

սիական ապրանքները ազատ, անմաքս մուտք գործեն Գերմանիա, մինչդեռ վերջինս՝ Գերմանիան՝ Ֆրանսիական նոր տարիքի համաձայն, ստիպւած կը լինի Ֆրանսիային մաքս տալ:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Գերմանիայի և Ֆրանսիայի քաղաքական հակառակութիւնը այս րոպէին մեծ խոչընդոտ է հանդիսանում Գերմանիայի ու Աւստրիա-Սլոնգարիայի առևտրական բարեկամութեան, զուցէ և միութեան, որը մեծ եռանդով այդ երկու տէրութիւնները կամենում են զուլս բերել: Հետաքրքրականը այստեղ այն է, որ Ֆրանկֆուրտի խաղաղութեան դաշնի 11-երրորդ յօդածը Բիսմարկը մտցրեց աւելի Ֆրանսիային կաշկանդելու համար, բայց հիմա դուրս է գալիս, որ նոյն այդ յօդածի պատճառով Ֆրանսիան իրան բոլորովին ազատ է կացուցել առևտրական կապանքներից, մինչդեռ այդ յօդածն է հենց, որ խոչընդոտ է լինում Գերմանիային՝ Աւստրիա-Սլոնգարիայի հետ առևտրական կերպով կապւել կամ միանալ:

Ներկայ յօդածի մէջ չիշատակւած դէպքերից դուրս, կարևոր ենք համարում չիշատակել այստեղ նոր տոմարով հոկտեմբերի 8-ին իտալական առաջին մինիստր Կրիսպիի քաղաքական ճառը Յլորենցում: Այստեղ Կրիսպին ջանաց իւր ամբողջ ոյժով յարձակւել իտալական իրրեղենախա կուսակցութեան վերայ, որի նպատակն է, ինչպէս լայանի է, Աւստրիայից յետ լսել Տրիեստի և Տրիենտի երկիրները, ուր ազգաբնակչութիւնը իտալական է: Գուցէ Կրեսպին և իրաւունք ունէր զայրանալու, որ այս րոպէին յուզում են այդ խնդիրը, բայց Կրիսպիից սպասում էին զլիաւորապէս ուրիշ բան, այն է, թէ որքան վճուած է Իտալիան մնալ ապադաշում եռապետական զաշնակցութեան մէջ: Կրիսպիի ճառի մէջ կային բարեկամական խօսքեր Ֆրանսիայի հասցէին, բայց այդ խօսքերը իրանց նպատակին չը հասան, որովհետև Ֆրանսիական թերթերը միայն իրենիացով պատասխանեցին Կրիսպիին, որի այդ քաղցր վարմունքի մէջ, խորամանկութիւնից դուրս, հրաժարեցին մի ուրիշ բան տեսնել:

Նոր տոմարով հոկտեմբերի 26-ին լրացաւ գերմանական Ֆելդմարշալ կոմս Մոլսկէի Տննդեան 90-երրորդ տարեդարձը: Տնին մաս-

Նակից էր, կարելի է ասել՝ ամբողջ գերմանական ազգը, սկսած կայսրից, որը չոբելեարին իշխանական պատիւներ տւեց: Մոլոկէն համարում է դարուս ամենանշանաւոր սագմագէտը: Վիլհելմ I ու իշխան Ռիսմարկի հետ Մոլոկէն կազմում է այն երրորդութիւնը, որ ստեղծեց այժմեայ միացած Գերմանիան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ բացւած լինելով, ներկայ համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին տպագրւած պատրաստ ԾՐԱՐՆԵՐ՝ մէջը դրած բաժանորդագրական թերթիկներով: Խնդրում ենք բաժանորդ գրել որքան կարելի է վաղ: Խնդրում ենք նաև մեր ալժմեալ բաժանորդներին մեր կողմից ուղարկած աւելորդ ծրարները բաժանել ծանօթներին, մէջը:

«Մուրճ»-ի բաժանորդներից նորա, որոնք ներկայ 1890 թւականի բաժանորդագիրը դեռևս կամ բոլորովին և կամ լիովին չեն վճարել, խնդրում են այդ ապառիկները շուտով հասցնել խմբագրութեան:

ՔԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ անհրաժեշտութիւնը մեր երկրում ամենադրական կերպով ասպացուցւած պէտք է համարել: Խնդրի պարզելուն և զիւզական վարկի հաստատութիւնների հետ ծանօթացնելու համար «Մուրճ»-ը արդէն, որպէս չալտնի է մեր ընթերցողներին, մի երկու մեծ լուսամտեր նւիրեց անցեալ տարի:

Այժմ ուրախութեամբ կարող ենք չալտարարել, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի մեր կողմերի մեծ զիւզերում զիւզական փոխատու գանձարանների հիմնելու: Գորա համար ներքին գործերի մինիստրութիւնը զիմել է թիֆլիսի ճահանգի գապետին նորա կարծիքը խնդրելով, թէ թիֆլիսի ճահանգի որ զիւզերում կարելի է և որ զիւզերն են չարմար, որ այն տեղերում փոխատու գանձարաններ հիմնեն:

Այս իրողութեան զիմաց ունենք մինք ևս պարտք կատարելու թէ ոչ: Այո, ունենք: Եւ այդ պարտքը կատարած կը լինենք, եթէ, տեղական հանգամանքները ի նկատի առնելով, առաջարկենք մեղանում հաստատել վարկի հիմնարկութիւններից աչն, որ, իւր կազմակերպութիւնով և նպատակով, աւելի չարմար է մեր տեղական զիւզական պահանջներին համապատասխանելու համար և, միւս կողմից, աշխատանք, որ նմանօրինակ զիւզական բանկեր հիմնեն ոչ միայն թիֆլիսի, այլ և միւս նահանգներում:

ՊՐ. ԴԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ ՅՕԳԻԱԾԸ՝ «Մուրճ»-ի էջերում, պարտք ենք համարում չպահել, որ ազգությամբ ոչինչ կապ չունի «Մուրճ»-ի խմբագրություն հետ, հետևապես սպում է առանց փոփոխությունների մեր կողմից: Հիւրընկալելով պ. Աղապեանցի գրածը, մենք կամեցիլ ենք բազմաշխատ հեղինակին տեղ առաջ արտապատելու մի խնդրի նկատմամբ, որի մասին մեր կարծիքը չպահել է «Մուրճ»-ի ընթացողներին: Հետևապես մնացած բոլոր կետերի նկատմամբ պատասխանատու թողնում ենք հեղինակի վերաբերյալ: Յողաժի վերջը կը տպւի չաջորդ 12-րդ №-ում:

ՅՈՒՅԵԼԵԱՆ, Հոկտեմբերի 24-ին ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ, Մոսկվայում, տօնեց սոյն տարւայ մալիսի 10-ին լրացած իւր 75 ամեայ գոյութեան տարեդարձը: Ազգ ուսումնասիրանը Ռուսահայոց մտաւոր զարգացման պատմութեան մէջ աչնքան մեծ տեղ է բռնում, որ արժէր նորա գործունէութիւնը և տւած արդիւնքները դուրս բերել մի ուսումնասիրական-քննադատական շօղաժի մէջ: Մի ազգ տեսակ շօղաժ «Մուրճ»-ի կողմից ուրախութեամբ կը հիւրընկալէր:

ՊՐՈՅԵՍՈՐ Գ. ԶՈՒԲԻՆՈՎԻՅ, որի 50-ամեայ գիտնական գործունէութեան համար, վրաց գրականութեան ասպարէզում, իւր ժամանակին շնորհաւորել էր «Մուրճ»-ի խմբագրութիւնը, վերջինս ստացաւ Պետերբուրգից ի նշան շնորհակալութեան շօրեւարի խրոմօլի-տպրաֆիական պատկերը:

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Մաքսօնիայում

ԳԻՐԵԿՏՐ՝ ԻՆՃԵՆԵՐ Կ. ՎԵՅՅԵԼ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ-ԳՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԳՊՐՈՑ

23-ԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանուած է Միտլադէլ քաղաքում, Գերմանիայում, (խաղաղութիւն Սաքսօնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐ շինելու և դորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեքարօ-տեխնիկ և ջրաղացների շինութիւն:

Միտեմական ուսումով այդ հիմնարկութիւնը պատրաստում է հետևեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կօնստրուկտօրներ՝ մեքենաներ շինելու, ելեքարօ-տեխնիկի և ջրաղացների շինելու համար:

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտենիթերի գործարաններ, շաղի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրօսմալի, չաքարի, ասեղների, պողպատէզրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գաղի, լուցկիի գործարաններ և այլն և այլն:

4. Գիրեկտօրներ և կառավարիչներ պատրաստելու համար վիշաճ գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարեւալ ապրիլի և հոկտեմբերի միջին:

ՏԵԽՆՈՂՈՒԹԻԻՆԸ ուսման առաջին դպրոցում, նալաճ աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է 2¹/₂ կամ 3 տարի, երկրորդ դըպրոցում 1¹/₂ տարի:

ՏԱՐԻՔԸ ընդունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս: Սույն 18⁸⁹/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է գիմել «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի այլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտլադէլի կեանքի, և զԵՄՐոցի վարչութեան պահանջմանքների մասին:

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(ԹԻՖԼԻՍ, ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎԵՐԱՅ)

Տրուում են հայերէն գրքեր: Ամսական վճարը 20 կօպէկ է: Սկզբնական դպրոցների աշակերտները և աշակերտուհիները վճարում են 10 կօպէկ:

Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երեկոյեան 5 ժամից մինչև 8 ժամը, իսկ կիրակի օրերը առաւօտեան 9—12 ժամը:

ԹՂԹԵՐԻ



ՊԱՀԵՍՏ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏԻԱԾ

ԳԻՏԵԱՏԿՈՎՍԿՈՒ ԹՂԹԷԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:

Աւելի մեծ քանակութեամբ պօստի, գրերու, գրքերի, լրագրական, ծխախոտի, գոյնաւոր, փաթեթների և այլ թղթերի՝ գործարանական զներով, որպէս նաև մեծ ասօրտիմենտ գրասեղանի իրեղէնների:

Հասցէն նամակների համար՝ Тифлисъ. Дворцовая ул., д. Дворянскаго банка, складъ Дитяковск. фабрикъ.

Հեռագրերի համար՝ Тифлисъ. Дитятковское Общество.

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ
 „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեւորեցնաների բոլոր ցուցանանդէտներում

ԱՄԵՆԱԲԱՐՉՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարեւոր բնիկներ տան արիւնների և ազնիւ օգնականների
 բոլոր արձեւատուորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թեթիւութիւն: Ձեռքերի ընկերութեան կենդանական պաշտոնում, Գո-
 լովնիսի պրօպրիետարի վերայ, Վերիմանովի տան և նրա բաժնեմասեր-
 ների մէջ:

Րազում: Մեքայէլեան փողոցում, Մերզա Աւաղեանի ա.	Քաթումում: Պօլեցիական փողո- ցում, Թէրզի օղլու ա.
Քաթումում: Քաթումի գէտ Չերեկովի ա.	Թէրզումում: Մարշ-Վէյզանի գէտ, բուրձարի վերայ:

և նրանց շահագործող գործակալներին Տօր

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
 ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿՈՒՄՈՍ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ




արանուծիւն ստացած



աւտորական շրջանը

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, աչն է՝ չարախօյ կամ
 ամսով և կամ ժամանակամիջոց տառնալ զբաւականով զրամը վճարելու համար:
 Յ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պաշտօններում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, լինչպէս են.
 ասեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեզնաներ ամենազաւաթաւոր գներով:



„Մ Ո Ւ Ր Ճ“

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ ՇԱՐՈՒ ՆԱԿՈՒՄ Է:

Տարեկան բաժանորդագիրը	10	ր.
Կէս տարւանը	6	ր.
Երեք ամսւանը	4	ր.
Մի գրքուկը	1	ր. 50 կ.

Ընդունուած է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակուած ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելուած են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծաւալը տարեցտարի մեծացնելը միանգամայն կախուած է բաժանորդագրութեան շաջողութիւնից: Ծաւալիցն է կախուած նիւթերի հարստութիւնը: Այդ պատճառով մենք յորդորուած ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը խնայել «Մուրճ»-ը իրանց ծանօթ շրջաններու մտորածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ Վ.ՃԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար	10	ր.
„ կէս երեսի համար	6	ր.
„ քառորդ երեսի համար	4	ր.

Իրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարուած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրատունը գտանուած է փողոց Վելյամինովի, տուն № 8 Քանդոջեանի (Вельяминовская улица, домъ № 8 Ек. Тандоевой), բոլորովին մօտ Երևանեան հրապարակին, Պրոզիմ-նայի զինաց:

Արաստահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».